Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

663

Լ. ԱԿԵՐՄԱՆ

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ

8(47)
Ա-79

ՊԵՏՀՐԱՏ
ՑԵՐԵՎԱՆ 1931

2 NOV 2009
24 MAY 2005

8(47)
Ա-79

Լ. ԱՎԵՐԲԱԽ

# ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵԳԵՄՈՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ

3778

ՑԵՐԵՎԱՆ 1931 ՊԵՐՀՐԱՏ

21.02.2013

663

Գնահատի տպարան
Գլավլիտ 6-85 (ր)
Հրատ. № 1880
Գատվեր 55 6
Տիրաժ 3000

34081-62

# ՎՈԱՊՊԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*)

## ԽԲՄԱԿԻՑ ԴԵՊԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

*Մեր պլենումի աշխատանքը չսկսվեց զեկուցումով Վոապպի հերթական խնդիրների մասին, վոչ էլ մեր քարտուղարության հաշվետվությամբ, այլ ստեղծագործական հարցերի քննությամբ: Դեռ թվում է, վոր որակարգի այս պատահական փոփոխությունն արտահայտում է պրոլետարական գրական շարժման վոչ պատահական, այլ հիմնական տենդենցները:*

*Ստեղծագործական դիսկուսիան արդեն գրավել է ամենակարևոր տեղը պրոլետարական գրողների ասոցիացիաների ամենորյա գործունեության մեջ: Հետագայում որեցոր էլ ավելի կուժեղանա ուշադրությունը դեպի ստեղծագործական մեթոդի պրոբլեմները: Դրանք մեր աշխատանքի կարևորագույն հարցերն են: Բանվոր դասակարգը, վորի գրողներն ենք հանդիսանում մենք, պահանջում է նախ և առաջ յերկեր, քննադատական հոդվածներ, թեորիական աշխատություններ ըստ էության և վոչ ատթիվ, նա պահանջում է բայշևիզմի մեծ արվեստ, և վոչ թե «հավուր պատչաճի» ձևականություններ, ցած վորակի գրվածքներ: Սոցիալիզմի չրջանը թեակոխած յերկիրը իրավունք ունի պահանջելու գրական բարձրորակ արտադրանք, վոր ամենևին նման չե մերձ-գրական տեսակի առատ արտադրանքին:*

*Այս անվիճելի գրությունները կարևոր և առանձնապես ընդգծել այժմ, պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական միավորման (Վոապպ) և նրա բոլոր ազգային ջոկատների գրության ակնհայտ և նշանակալի փոփոխության կապակցությամբ: Մենք առաջ գրական խմբակներից մեկն ենք, գրական ուղղություններից մեկը, գրական այլ կազմակերպություններից մեկը: Այսոր մենք դառնում ենք յայն և մասսայական գրական շարժում, խորհրդային Միության բոլոր պրոլետարական գրողների համախմբումը, խորհրդային բովանդակ գրականության առաջնորդող ջոկատը, հեղափոխական գրողների միջազգային կազմակերպության առաջավոր զորասյունը:*

*Մենք ամենքս արդյոք հարկ յեղած չափով հասկացե՞լ ենք*

*) Զեկուցում Վոապպի խորհրդի պլենումում, 1931 թ. մայիսի 29-ին.

մեր կազմակերպության դրության փոփոխությունը, արե՞լ ենք արդյոք անհրաժեշտ յեղրակացություններ։ Ի՞նչը պետք է վերանայենք մենք, վորպեսզի կարողանանք լուծել մեր նոր և շատ տվելի դժվարին խնդիրները։ Նայենք յետ։ Ինչո՞ւ մենք, մի ժամանակ լինելով խմբակներից մեկը, պահպանեցինք մեր ամբողջությունը, դարձանք ձգողության կենտրոն բայլշևիկյան նոր կադրերի համար, վերածվեցինք կուսակցական կորիզի՝ գրականության ֆրոնտում։ Այդ տեղի ունեցավ, վորովհետև մենք մեզ չդրեցինք ինչ վոր դպրոցի, կամ դպրոցիկի դրության մեջ, վորովհետև մենք սեր ամբողջ աշխատանքը տարանք և վորոշեցինք համապատասխան կուսակցության առաջադրությունների և նրա գլխավոր գծի հիման վրա, վորովհետև մենք իմաստավորեցինք այդ պայքարի փորձը, ձգտելով չլինել մեր թեորիան մեր պրակտիկայից, վորովհետև մենք գրականությանը մոտեցանք վորպես կուլտուրական հեղափոխության սի մասի, վորովհետև մենք յեղանք առաջիններից, վոր ստեղծեցինք մասսայական շարժում իդեոլոգիական պայքարի ճակատամասերից մեկում։ Մենք ունեցել ենք նաև շատ սխալներ, շատ թերություններ, շատ բացեր և զանցառություններ— մեր արժանիքները բնաձին չեն անշուշտ, մենք նրանց ձեռք ենք բերել դժվարությամբ, ցավերով, յերբեմն սեկտանտական շեղումներից, հետո, բայց կուսակցության ղեկավարությունը ապահովել է մեր պլյուսների գերակշռությունը մեր մինուսների հանդեպ։ Այսպես, մենք այսոր դարձել ենք կուսակցության գծի հիմնական կիրառողը գեղարվեստական գրականության ասպարիզում։ Ցեվ այդ մեզ վրա դնում է մեծագույն պատասխանատվություն, վոր դեռևս ամենքիս կողմից հարկ յեղածին պես գիտակցված չէ և նույնիսկ դեռ հետու է այդպիսին լինելուց։

Ցես խոսում եմ վոչ պրոլետարական գրականության պատասխանատվության մասին։ Ցես նկատի ունեմ խորհրդային բոլանդակ գրականության պատասխանատվությունը։ Խոսքը վերաբերում է բայլշևիկյան գրական քաղաքականությունը բայլշևիկորեն վարելու, բոլոր հնարավոր կադրերը համախմբելու պատասխանատվությանը, արվեստի բնագավառում լենինիզմից յեղած թեքումների դեմ պայքարելու, դասակարգային իդեոլոգիական ֆրոնտի մեր ճակատամասի դրության մասին կուսակցությանը ժամանակին ազդանշան տալու պատասխանատվությանը։ Խոսքը վերաբերում է գրականությանը վորպես բանվոր դասակարգի պայքարի դենք ոգտագործելու պատասխանատվությանը։ Խոսքը վերաբերում է սոցիալիստական վերակառուցման եպոխայի առաջադրած խնդիրները արվեստի մակարդակին բարձրացնելու պատասխանատվությանը։ Խոսքը վերաբերում է գրական արտադրանքի վորակի պատասխանատվությանը։

Մե՞ծ պատասխանատվություն։ Արժանի կլինե՞նք արդյոք նրան։ Այսոր մենք ավելի շատ իրավունքներ ունենք, բայց մեր պարտականությունները— և այդ դլխավորն է անհամեմատ ավելի շատ են։ Մեծագույն պատասխանատվության զգացումը պետք է ցույց տալ վոչ թե փարիսեցիական ճոռամարանությամբ և բարեպաշտ դեկլարացիաներով։ Մեծագույն պատասխանատվության զգացմունքը պետք է ցույց տալ պրակտիկայում, մեր պրակտիկայի հաջողության համար— առորյա ամբողջ աշխատանքում։ Մեծագույն պատասխանատվության այդ զգացմունքը իր արտահայտությունը պետք է գտնի նախ և առաջ ստեղծագործական արտադրանքին և ստեղծագործական հարցերին ել ավելի մեծ ուշադրություն դարձնելու մեջ։

Այդ մեծ պատասխանատվությունը գիտակցելու չափը մեզ համար պետք է դառնա չափանիշ մեր առաջընթացի՝ խորհրդային դրականության մեջ ստեղծագործական հեգեմոնիա ձեռք բերելու ուղիով։ Դրական–էական բնագավառում մեզ է պատկանում առաջնորդող դերը, սակայն մենք դեռ չենք հասել պրոլետարական գրականության ստեղծագործական հեգեմոնիային։ Հենց դրանումն է ՎՈԱՊՊ–ի դրության ծայրահեղ բարդությունը։ Հենց դրա համար խորապես վնասակար է մեր հաջողությունների ամենափոքր չափազանցումը։ Հենց դրա համար առանձնապես անթույլատրելի է ամենաչնչին պարծենկոտությունը։ Կարևորն այն է, վոր պետք է ապահովել առաջընթացը դեպի ստեղծագործական հեգեմոնիան ամենակարճ ժամանակամիջոցում — դրա համար կան բոլոր անհրաժեշտ նախադրյալները։

Հենց դրա համար, մասնավորապես, ինձ թվում է, վոր մենք ճիշտ վարվեցինք փոխելով մեր առաջ դրված հարցերի քննության կարգը և առաջին տեղը տվինք ստեղծագործական դիսկուսային։ Սակայն, մենք գիտենք, վոր ստեղծագործական հարցերը կարելի չէ լուսաբանել և լուծել միայն յելնելով լենինյան ուսմունքի ընդհանուր և հիմնական հարցերից կուլտուրական հեղափոխության վերաբերյալ։ Մենք, վորպես դաղափարական–դաստիարակչական կազմակերպություն, հանդիսանում ենք պրոլետարիատի մարտական ջոկատներից մեկը։ Նրա քաղաքական պայքարի շահերը չափանիշ են մեր ամբողջ աշխատանքի ստուգման համար արվեստի բնագավառում։ Ստեղծել բայլշևիզմի մեծ արվեստ— ահա մեր լոզունգը։

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ ՑԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մենք— ՎՈԱՊՊ–ի խորհրդի պլենումը— մեր կազմակերպության գոյության վաստով հենց հակառումում ենք բուրժուազիայի կուլտուրային, մեռնող բուրժուազիայի կուլտուրային, ազդային թշնամանքի կուլտուրային, կապիտալիզմի պարազիտական նեխման կուլտուրային։ Այս հակադրությունը առանձնահատուկ արտահայտությունն է յերկու աշխարհների— իմպերիալիզմի յերկրների և սոցիալիզմի շրջանը մտած յերկրի միջև մղվող պայքարի, հոգեկան կրիզիսի և զնալով ել ավելի ծավալվող և խորացող կուլտուրական հեղափոխության։

Բուրժուական պետություններում տիրող կուլտուրայի կրիզիսի մասին խոսում ենք վոչ միայն մենք, կոմունիստները։ Նրանց կուլտուրայի ճգնաժամը խոստովանում են նաև կապիտալիստների դասակարգի գիտնական գործակատարները։ Նրանց կուլտուրայի կրիզիսը հարկադրված են արձանագրել նաև սոցիալ-ֆաշիստները, թե՛ աջերը և թե՛ «ձախերը»։ Ահա, որինակ նորերս լույս տեսավ Ռոտտ Բաուերի մի հոդվածը, հատկապես նվիրված մեզ հետաքրքրող հարցին։ Այդ հոդվածը կոչվում է «համաշխարհային հոգեկան կրիզիսը»։ Բաուերը խոսում է այդ կրիզիսի մասին առանց բաժանելու աշխարհը կապիտալիզմի յերկրների և ԽՍՀՄ-ի։ Բաուերը լուռության և մատնում և ժխտում նրանց դրության սկզբունքային զանազանությունը։ Բաուերն ուզում է խոսել վոչ թե իմպերիալիստական բուրժուազիայի ճնշման տակ առաջացած հոգեկան կրիզիսի, այլ համաշխարհային հոգեկան կրիզիսի մասին, և դրանով նա անկարող լինելով հերքել մեր կուլտուրական վերելքը, արտահայտում է լոկ կապիտալիզմի հոգեկան կրիզիսի ուժն ու տտիճանը, ցույց տալով իր վախի չափն ու խորությունը նրան շրջապատող իրականության հակասությունների հանդեպ։ Դատելով վորպես ռեակցիոն մանր բուրժուա, Բաուերը անկարող է հասկացրել վորևե բան ժամանակակից կապիտալիզմի հեղափոխական ինքնազատության։

Բաուերը գրում է. «Տեխնիկան մեր կուլտուրայի ճակատագիրն է... Միասեր Բարբիտը յերեկոները զբաղվում է ավտոմոբիլով, ծառայողը՝ մոտոցիկլետով, բանվորը՝ անթել հեռագրի (ռադիո) ապարատով։ Մարդիկ համակվում են ամենաուժեղ հետաքրքրությամբ դեպի այն ամենը, ինչ կապ ունի տեխնիկայի հետ... Յեվ այնուամենայնիվ, վորքան մենք ավելի յենք փառաբանում տեխնիկայի հաղթական յերթը, նույնքան ավելի սոսկալի յե թվում մեզ այն աշխարհը, վոր ստեղծում է այդ հաղթանակը։ Բանվորը կապված է շղթայով։ Որը որին, ժամ առ ժամ, քայլ առ քայլ, հավիտենական միակերպությամբ, մշտական հաջորդականությամբ միևնույն շարժումները։ Ծառայողը՝ հաշվիչ մեքենայի մոտ, վորը նրա փոխարեն անում է նշանակումներ և հաշիվներ։ Նրա կյանքի նպատակն է պահել այն հաճախորդների հաշիվները, վորոնց ազդանունները սկսվում են «C» տառով»։

Հետո Բաուերը անկապ և խիճիճայլոց վինթվինթում է այն մասին, վոր սոցիալիզմն այլ կերպ է ոգտագործում տեխնիկան, բայց այդ վինթվինթոցները լոկ մի անգամ ևս հաստատում են Բաուերի մանր-բուրժուական խուճապը տեխնիկայի առաջխաղացման հանդեպ, մի առաջխաղացում, վորը արտահայտում է արդեն աճած արտադրողական ուժերի և կապիտալիստական արտադրական հարաբերությունների միջև առաջացած կոնֆլիկտը։

Տեխնիկան մեր կուլտուրայի ճակատագիրը չե բնավ։ Նրանց կուլտուրան հակասության մեջ է մտնում տեխնիկայի հնարավոր և անհրաժեշտ ոգտագործման հետ, նրանք վախենում են տեխնիկայի զարգացումից,—մենք ուրախանում ենք նրա զարգացման համար— «բայշևիկները պետք է տիրեն տեխնիկային»։ Ստալինի լոզունգը վոչ միայն դիրեկտիվ է պրակտիկ գործունեության համար—դա դիծն է ջահել և հաղթանակող դասակարգի, վորն ընդունակ է տիրել տեխնիկային և ստիպել նրան ծառայել իրեն՝ հակառակ մահամերձ դասակարգի և նրա լակեյների դծին, վորոնք վախենում են տեխնիկայից և անդոր են արտադրության կապիտալիստական յեղանակի պայմաններում մարդկանց՝ մեքենայի սարուկներից դարձնել նրա տերերը։

Տեխնիկայի վախը հոռետես է դարձնում Բաուերին։ Նա թաթոռոտ խորհրդածում է. «Ի՞հարկե, ծագում է նոր գիտություն։ Սակայն ի՞նչ կարող է տալ նա կրթված մարդկանց մասային։ Հինամյա գիտական-քննադատական աշխատանքը հիասթափեցրել է մեզ. ինդիվիդուությունը չի լուծի վոչ մի տիեզերական դաստանիք»։ Բաուերի այս խորհրդածությունը միայն ինքնբստիքության վկայություն է նրանց հոգեկան կրիզիսի մասին։ Խոսելով այն մասին, թե տեխնիկական և պոզիտիվ (դրական) մտածողությունը դեն է հրում հումանիտար մտածողությունը, Բաուերը ուզում է, դեռևս բաց անել և բաց է անում Ագնոստիցիզմի առաջ, միստիկայի բարգավաճման համար, մինչնաղարյան սնոտիապաշտությունը վերակենդանացնելու համար, վարկաբեկելով գիտությունը։

Զուր չե, վոր ժամանակակից Գերմանիան ականատես է լինում նոր ալքիմիկոսների դատավարությունների։ Հիշենք որինակ վոմն Տաուշենդին, վորը խաբեության համար դատվեց Մյունխենում 1931 թ. հունվարին։ Տաուշենդը, բոլորովին ոգետ մի մարդ, «հայտնագործել ե» կապարը վոսկի դարձնելու հնարավորությունը։ Այդ գյուտի շահագործման համար կազմվել ե հատուկ ակցիոներական ընկերություն 750·000 մարկ դրամագլխով։ Ակցիոներների թվում կային խոշոր արդյունաբերող Ալֆերդ Մանեսմանը, յերկու իշխաններ, Շենբուրգը և Վալդենբուրգը և գեներալ Լյուդենդորֆը։ Տաուշենդի հետ բանակցություններ են վարում գերմանական ռենտային բանկի նախագահը, վորը դատարանում հայտարարեց. «Մեր որերում ակամատես լինելով ռադիոյի և ռենտգենի գյուտին, յես անհնար չեմ համարում նաև Տաուշենդի գյուտը»։ Բնորոշ է, վոր Տաուշենդի ընկերության հաստատիների վրա հույս եյին դրել նացիոնալիստական կուսակցությունները։

Միայն ժամանակակից Գերմանիայում չե, վոր կախարդները ավելի մեծ պատիվ ունեն հաճախ, քան բժիշկները և ալքիմիկոսների ու վհուկների «ինտուիցիային» ավելի նախապատվություն է տրվում, քան գիտությանը— այդ ըստ եության արդարացնում է և Բաուերը։ Նրա խարոզը չհավատալու գիտությանը, սատերիալիստական գիտությանը, այն գիտությանը, վոր գնալով ել ավելի ապացուցում է մարքսիզմի ճշմարտությունը,— պաշտպանում

թյուն է բուրժուական կուլտուրական ռեակցիայի՝ ընդդեմ պրոլետարիատի կոլտուրական հեղափոխության: Թե՛ գիտությունը և թե՛ տեխնիկան շարունակում են դեռևս զարգանալ կապիտալիզմի ներքո: Բայց այդ զարգացումն ընթանում է հակառակ բուրժուազիայի «տիրող գաղափարներին», ավելի ու ավելի ակնհայտ կերպով հակասության մեջ մտնելով նրանց հետ, ավելի ու ավելի հաճախակի ընդհարվելով վերակենդանացող միջնադարի հետ, և բնականաբար այդ զարգացումը տեղի է ունենում համեմատաբար ավելի դանդաղ տեմպերով:

Բաուերը ամենից շատ վախենում է այն բանից, որ «իրենց ամբողջ դժգոհությունը մեր օրերի կուլտուրայից նրանք (թե՛ «տեխնիկները», թե՛ «ինտելիգենտները»— Լ. Ա.) փոխադրում են նաև քաղաքականության մեջ»: Մի այլ տեղ նա ասում է «Ֆանատիկ պատկերացումները համաշխարհային հեղափոխության մասին վոմանց դրավում են դեպի բոլշևիզմը, ուրիշներին դրավում է Ֆաշիզմը իր զուտանցանքներով ազգային հեղափոխության մասին»: Այո, հենց այդպես էլ կա. Թշնամի ուժերը հակատնյա են գտնում. դեմ առ դեմ կանգնած են կոմունիզմը և Ֆաշիզմը: Ցեմ ցանկանալով խլել քաղաքականության հարցերը կուլտուրայի հարցերից, Բաուերը մերկացնում է իրեն վորպես Ֆաշիզմի «սոցիալիստական» թևը, վորը քարոզում է կուլտուրական դեմոկրատիա և խաղաղ ներաճում սոցիալիստական կուլտուրայի մեջ՝ բուրժուական Ֆաշիստականացող տիրապետությունների հովանու տակ:

Բաուերը շատ-շատ կարող է առաջարկել միայն դեմոկրատիա և հոգեկան աղատություն: Հոգեկան աղատության մասին խոսելիս նա նույնիսկ հասնում է ոանտիմենտալ և արտառավանդ պաֆոսի, դեմոկրատիայի մասին խոսելիս նա սկսում է բարձրաղոչ հասել, կեղծ, միալաբ ճարտասանությամբ, սեղմելով Ֆրաղաքանության պեղալը—նույնքան ճոռոմ, վորքան անզոր: Նրա «հոգեկան աղատությունը» վոչ այլ ինչ է, բայց յեթե փախուստ տերկու բանակների միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունից և նորը մինչև պայքարելու հոգուտ բուրժուազիայի հեգեմոնիայի՝ տատանվողների վրա: Նրա «դեմոկրատիան» վոչ այլ ինչ է, բայց յեթե պատրանք, իլլյուզիա այն մասին, վոր հնարավոր է նաև տերկու աթոռի արանքը: Բաուերի հոդվածները հոգեկան կրիզիսի մասին փաստացի, անվիճելի վկայություններ են հենց այդ կրիզիսը աղացուցելու համար:

Հոգեկան կրիզիսը բնորոշում է նաև բուրժուական արվեստը: Գրականությունը խեղդվում է բուրվարային գրյանքների ծովում: Գեղարվեստականության, նույնիսկ յեթե մոտենանք նրան բուրժուական կլասիկ արվեստի չափանիշներով— փոխարեն իշխում է վուտիկանական, քրեական, արկածախնդրական բուրվարային անկուսակ խառնուրդ: Իսկ այնտեղ, ուր դեռ պահպանվում են արվեստի հավակնությունները, անխուսափելիորեն տիրում է



քծախնդիր պսիխոանալիզը, մանր զգացմունքների և մանր մաքերի ծանծաղուտը:

Մ. Դյուվոն «Ռեվյու Եորեոպեեն» բուվական հայանի ժուրնալում 1930 թ. ոգոստոսին գրում էր. «Ճգնաժամ վեպի, ճգնաժամ պոեզիայի, ճգնաժամ նույնիսկ հուսահատության, վորը վերածվել է դորշ ծերության, հազիվ ընդունակ պատահական թռիչքների... Ի վերջո չկա մի յերկ, վոր խորը հետք թողներ, վոչ էլ բարոյական պրոբլեմներ: Ամենացնում եմ, պարադոքսալ համարվելու վտանգը աչք առնելով, բացակայում է նույնիսկ հուսահատությունը»: Միա դամայն որթոդոքսալ բուրժուական ակադեմիկ Շոմեն ըստ եությեան գրում է նույնը 1931 թ. փետրվարին «Ռեվյու դը Պարի» ժուրնալում. «Արկածների վորոնումները, ճանապարհորդությունները, հեռավոր յերկրների նկարագրությունները, այլանդակությունների պատկերացումները, հակումը դեպի արտասովոր, աննորմալ դիպվածները, անխուսափելի արբեցություն գտնելու փորձերը— այս ամենը ցույց է տալիս մեզ մի հասարակություն, վորտեղ գրողների, յեթե վոչ ընթերցողների, հիմնական ճգտումն է՝ փախուստ ինքն իրենից: Անշուշտ այս յերևույթները տիպիկ են վոչ միայն Ֆրանսիայի համար: Նույն ախտանշանները մենք տեսնում ենք նաև անգլիական և գերմանական գրականության մեջ: Բոլանդակ աշխարհում զգացվում է մի ակարություն, վորը կարող է բացատրվել պատերազմից և նրա հետևանքներից առաջացած ջղային ցնցումով»:

Բոլանդակ աշխարհում չե ակարությունը, սակայն նրանց «ակարությունը» անվիճելի յե: Նրանց մոտ արվեստը մնում է անպայման— և այդ սքանչելիորեն ցույց է տալիս ռուսական եմիգրացիայի գրականությունը: Այնտեղ կան անցյալում հայանի անուններ, իսկ ինչ են ավել նրանք:

Բերում եմ միքանի օրինակ: Ահա ինչ է գրում Զ. Գիպպիուսը՝ Գ. Վ. Աղամովիչին...

**Быть может*)**

Как этот странный мир меня тревожит!
Чем дальше—тем все меньше понимаю
Ответов нет. Один всегда «быть может»
А самый честный и прямой—«не знаю»
Задумчивой тревоге нет ответа
Но почему же дни ее все множат?
Как родилась она? Откуда? Где-же,
Не знаю где—но есть ответ...
быть может.

З. Гиппиус

Сент. 1930 г. (стр. 212)

*) „Современные записки" XXXV, Париж, 1930 г.

## Դուցե

«Այս տարօրինակ աշխարհը զորքան և հուզում ինձ։ Քանի գնում, այնքան ավելի քիչ եմ հասկանում Պատասխան չկա։ Միայն շարունակ «դուցե»։ Իսկ ամենաողնով և ուղղակի պատասխանը — «չգիտեմ»։ Մանավանդ տաղանդ-պատասխան չկա։ Բայց ինչու այդ տաղանդի որերը միշտ բազմանում են։ Ինչպես և ծնվել նա, վոչնչեղել։ Ինչ վոր տեղ, չգիտեմ ուր — բայց կա պատասխան... դուցե»։

Զ. Գիպպիուս

*«Քանի գնում, այնքան քիչ եմ հասկանում», դուցե կա պատասխան, դուցե և չկա, ամենից ավելին՝ ասել. «չգիտեմ»։ Ահա և նրա յերկրորդ բանաստեղծությունը.*

**Хорошая погода**

Травы, травы! тростники
на сухой вершине,..
Почему бы тростники?
Ни ручья здесь, ни реки,
вся вода в долине.
Небо каждый божий день
равно голубое,
почему бы каждый день?
и куда девалась тень?
что это такое.
Для того, чтобы обмануть
свод небес так ясен,
соблазнить и обмануть,
убедить кого нибудь,
что наш мир прекрасен.
Не подамся этой лжи,
знаю, не забуду:
Мир кругом лежит во лжи...
ворожи не ворожи —
ни поверю чуду.

З. Э. Гиппиус

(стр. 210)

## Լավ յեղանակ

«Խոտեր. խոտեր, սեղան չոր գագաթի վրա... ինչու սեղեր, վոչ վատակ կա այստեղ. վոչ գետ. ամբողջ դաշտը հովտումն է։ Ցերկինքը ամեն տեղ կապույտ է. իսկ ինչու ամեն որ Ցեվ ի՞ր կորավ տվերը։ Ինչ է սա Խաբելու համար յերկնակամարն այդպես պայծառեր, հրապուրելու և խաբելու համոզելու մեկն ու մեկին. թե մեր աշխարհը բոլորը թաղված է սոսի մեջ... դուշակում եմ, դուշակիր — չեմ հավատա յոս հրաքի։

Զ. Ե. Գիպպիուս



*Կարիք կամ արդյոք մեկնությունների։ Սա սոցիալիստական հուսալքության պոեզիան է, նեխման, քայքայման պոեզիան։ Մենք այս վոտանավորները ընդունում ենք վորպես պարզապես, մեղ թվում է, վոր նրանց տակ պետք է լիներ Արխանգելսկու ստորագրությունը և կողքին Կուկրի նիկոնների նկարները։ Բայց վոչ, սա նրանց աշխարհազգացման ցայտուն մի նմուշն է, բազմաթիվ օրինակներից մեկը։ Ահա և մի ուրիշ օրինակ.*

Мир непрочен, как туман,
Рифма — горестный обман,
Эхо с берегов иных,
Ангельский ответ на стих,
Замирает сладкий звук,
Падает перо из рук,
Черный ветер к нам летит,
Прядь волос он шевелит
Над высоким смертным лбом —
Будет тишина кругом,
Пеплом заметен наш путь.
И замерзнет в трубке ртуть.
Тучи снежных мотылков,
Прилетают с облоков,
Голубеет вечный лед,
Роза, где твой летный мед?

Анн. Ладинский*)

(тоже «Современные записки»)

*Դեկադանսի այս լիրիկական դեկլարացիաները նույնպես հանդիսանում են յուրատեսակ քաղաքական պոեզիա, սակայն դուք և յենթադրել, վոր այդ պոեզիան պետք է դալիս բուրժուազիային «սև հովի» առաջ խոնարհվելու, կամ աշխարհի հանդեպ պասիվ վերաբերմունք դատապարտելու, և կամ բայլշևիկյան չարին չհակառակելու համար։ Լադինսկու համար աշխարհը անկայուն և վորպես մշուշ, վորովհետև կան բայլշևիկներ։ «Աշխարհը բոլոր թաղված է սոսի մեջ» Գիպպիուսի համար, վորովհետև նա — Գիպպիուսը — մտքերի իշխանուհին չէ Սանկտ-Պետերբուրգի ինտելիգենտական վերնախավերում, այլ վոդորմելի հացկատակ մուրացկանուհի եմիգրացիայում։ Ցեվ, համարձակվում ենք հավատա-*

*) «Աշխարհը անկայուն է վորպես մշուշ, ռիֆման (հանդը) սրամաշ խաբեություն է, արձագանք ուրիշ ափերից, հրեշտակային պատասխան բանաստեղծական տողին, մեռնում է քաղցր հնչյունը, ընկնում է գրիչը ձեռքից, սեղմվում է թշվում է դեպի մեղ, շարժում է մազերի հյուսկը բարձր մահկանացու ճակատի վրա։ Կլրի շուրջը բոլորը, Մոխրով է ծածկված մեր ուղին, և կաստչի սնդիկը խողովակում։ Ցյունե թիթեռների յերամները լցնում են ամպերից, կապույտ է հավիտենական սառույցը։ Վա՛ր, ՞ուր է քո ամառվա մեղրը։*

ԱՆԴ. ԼԱԴԻՆՍԿԻ»։

ացնել Գիոլոգիուսին, վոր խոսպես հրաշքներ չեն լինում— գուշակում ես, գուշակիր, մեկ է, նրա և Լաղինոկու հեռանկարները անբարենպաստ են և վոչ մի կերպ չեն տրամադրում լավատեսորեն:

Ֆաշիզմը փորձել է և փորձում է ստեղծել վոչ թե անկումային, այլ ոգեմատենչ գրականություն: Հայտնի են Մուսոլինիի փորձերը սեփական գրականություն պատվաստելու: Բայց, ավա՜ղ, ֆաշիզմի զաղափարներով չեն կարող բեղմնավոր դարձնել գրականությունը: Զուր չէ, վոր իտալական բելլետրիստիկայում գերակշռում են ոտարները: Թարգմանչական խալտուրան է վորոշում ֆաշիստական Իտալիայի գրական դեմքը:

Բուրժուական արվեստի անկումը հարկադրված է խոստովանել նաև Բաուերը: «Իսկ նոր արվե՞ստը»— հարց է տալիս նա նույն հոդվածում— Ժամանակակից վեպերը և պիեսները, վորոնց տեխնիկան մրցում է ֆիլմի հետ, հոդեկան կյանքի մեխանիզացիայի սիմպտոմը չե՞ն միթե»— հարցական ձևով պատասխանում է նա ինքն իրեն: «Մեխանիզացիա» բառի բովանդակությունն այստեղ նշանակում է ստանդարտային «ընթերցանության նյութի» կոնվեյերական արտադրության զաղափարական խեղճությունը, գեղարվեստական ցած մակարդակը, նրա հավասարեցումը միատեսակ թերթերի ճաշակին, այն նեղմիտ և պրովինցիալ քաղքենու, վորը սքանչանում է իր համար պատրաստված և իր բարձրության վրա գտնվող ամերիկական մասսայական կինո նկարով: Ոտտո Բաուերը նույնքան ավելի իրավունք ունի խիստ վորակում տալու ժամանակակից գրականությանը, վորքան ակնհայտ են Ցերկրորդ Ինտերնացիոնալի և նրա բոլոր սեկցիաների անհաջողությունները գրականության ասպարիզում, վորտեղ բանվոր դասակարգից յեղած գրողների հիմնական կադրերը բայլում են կոմունիստական ինտերնացիոնալի դրոշի տակ:

Սենատոր Զիովանոլի Ժենտիլեն, վորին կարելի յեր անվանել իտալական ֆաշիզմի փիլիսոփայական պարագլուխը, գրում է «Վոգլի և Ֆաշիզմ» հոդվածում. «Ֆաշիզմը գրականության մեջ ուղղված է անցյալ կուլտուրայի աշխարհիկ, մտավորական և ընթերալ բնույթի դեմ, նա ձգտում է վոչնչացնել հակասությունը խոսքի և գործի միջև, թեորիայի և պրակտիկայի միջև, մարդկային նյութության և հայրենիքի զարգացման միջև:

Ֆաշիզմը՝ մարդու նոր ընդվզումն է զեպի ամբողջականությունն և բոլոր նեներգիաների անխախտ միասնություն: Ֆաշիզմը ներողամիտ է ինչպես ամեն կրոն, և ինչպես ամեն կրոն և ամեն կրոնական ուսմունք, ֆաշիզմը ուզում է իրենով յցնել անհատի հոգեկան ամբողջ կյանքը» («Die Literarische Welt») 27/I 1931 թ.»).

[1]) Զիովանոլի Ժենտիլեն անցյալում յեղել է կողմակից Բենեդետտո Կրոչեի. վորի կատեգորիան, ինչպես հայտնի յե, հիմնվում էր ինտուիտիվիզմի և իդեալիզմի վրա



Ֆաշիզմը իրոք աններող է: Վերջերս իտալական հայտնի գիտնական Տոսկանինին Բոլոնյում համերգի ժամանակ հրաժարվեց կատարել ֆաշիստական հիմնը, իր մերժումը պատճառաբանելով վոչ թե քաղաքական պատճառներով, այլ նրանով, վոր ինքը կազմել է լուրջ համերգի ծրագիր: Դրան ի պատասխան մի ֆաշիստ ապտակեց նրան: Բուրժուական մամուլը այս միջադեպին խիստ մեծ ուշադրություն է նվիրում և «Գոպոլո դ'Իտալիա» թերթը, վորին անմիջականորեն զեկավարում է Մուսոլինիի յեղբայրը, ջերմորեն վոգջունում է ֆաշիստի այդ արարքը: Այսպես է ֆաշիզմի աններողությունը դրսևորվում— բռունցքը վորպես գերագույն փաստարկություն: Վորպի՞սի առիթ կեղծավոր հոգոցների համար հոգեկան ազատության և դեմոկրատիայի մասին:

Ժենտիլեի հայտարարությամբ մեջ հետադիմական է վոչ միայն ուղղակի դիմումը կրոնին— թե մենք դեմ ենք անցյալ կուլտուրայի աշխարհիկ բնույթին,— և վոչ միայն արշավանքը բանականության և գիտության դեմ— թե մենք դեմ ենք անցյալ կուլտուրայի մտավոր բնույթին: Այստեղ Ժենտիլեն ըստ եյության, ինչպես և Բաուերը, արտահայտում է լոկ կուլտուրական այն ռեակցիան, վոր փաստորեն տեղի ունի կապիտալիզմի յերկրներում: Ամբողջականության և միասնության ցնորքները վոչ այլ ինչ են, բայց յեթե մի փոքր «վոգու» բնագավառում հաստատում գտնել իրական յերկվության, միջանկյալության, սեղծագործական անզորության, անկումայնության փոխարեն: Ժենտիլեի մոտ հետադիմական և հայրենիքի զգացման կոչը: Ազգայինը, ազգի պաշտամունքը կարևորագույն տեղ է բռնում ֆաշիստների բոլոր յելույթներում կուլտուրական հարցերի մասին:

Վո՞րն է, որինակ, գերմանական ֆաշիզմի կուլտուրական թեորիան: Նրա հիմքը կազմում է ցեղային թեորիան: Համաշխարհային ամբողջ պատմությունը արիացիների և սեմիտականների կռիվն է: Դասակարգային պայքարը, իհարկե, հրյաների սարքած բանն է: Այո, հոգեկան կրիզիսը փաստ է: Ցեղը՝ հայտնության հաղթանակն է գիտության վրա: Ցեղը ոգեմատենչ նացիոնալիզմի մեջ է, մյուս բոլոր ազգերի ստրակացումը բարձրագույն, բնորյալ մի ազգի կողմից:

«... Ցուրաքանչյուր նեգրի մեջ, նույնիսկ ամենաբարեհամբույրի, ննջում է գազանը և նախամարդը, վորին չի կարելի արթնել վո՛չ դարավոր ստրկությամբ, վոչ էլ արտաքուստ ընդունված քաղաքակրթությամբ: Ամեն մի ասիմիլացիա, ամեն մի դաստիարակություն ձախողության կհանդիպի ընդհարվելով ցեղային առանձնահատկություններին, վորոնք ծնվում են արյունից: Ուստի միանգամայն հասկանալի յե, վոր Հարավային նահանգներում յերկաթե անհրաժեշտությունը ստիպում է սպիտակ ցեղին վախենալ, դուցե և նույնիսկ զաժան վարվել նեգրերի հետ: Ցավ, իհարկե, Լինչի դատաստանով մահապատժի յենթարկված նեգրերի մեծա-

մասնությանը յերբեք չպետք է խղճալ»: («Նացիոնալ սոցիալիստական Մոնատսգեֆտե» 1930 թ. № 4):

Լենինի դատաստանները հանդես են գալիս որպես ուղի դեպի կուլտուրական պրոգրես, որպես յելք ժամանակակից փակուղուց: Սա հարյուրակային խաղարաստության ծրագիրը: Սակայն կուլտուրայի փաշիստականացումը փաստ է և վոչ խերադար կրեատիների զատանցանք: Մենք դժբախտաբար շատ քիչ և միանգամայն անբավարար չափով ենք ցույց տալիս մեր մամուլում կուլտուրական ռեակցիայի արշավը՝ Լենինի դատաստանի գովերգներով և նման բաներով,— մինչդեռ այդ մեծապես կոգներ խորապես քմբռնելու և գիտակցելու մեր կուլտուրական հեղափոխության թափը:

## ՑԵՂԱՅԻՆ ԹԵՈՐԻԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ

Նայենք մեր հարևան բուրժուական յերկրներին: Նրանց ազգային ճնշման պրակտիկան ցեղային թեորիայի յուրատեսակ իրագործումը չե՞ մթթե: Իմպերիալիզմն ընդհանրապես ուժեղացնում և ազգային ճնշումը զանազան ձևերով: Աշխարհի բաժանումը ճնշված և ճնշող ժողովուրդների՝ եվ ավելի յե խորանում: «Փոքր» ազգերի բուրժուազիան աշխատում է յեթե չմնալ ամենախոշոր իմպերիալիստներից: Ցեվ մենք չգի՞տենք մթթե, թե ինչ դրության մեջ են ազգային փոքրամասնությունները Լեհաստանում, Ռումինիայում, Ֆինլանդիայում: Ավելո՞ւրդ չե արդյոք որինակներ բերել, թե ինչպես են վարվում ընկական կալվածատերերը և կապիտալիստները այժմ խորհրդային Ուկրաինայի և Բելոռուսիայի սահմաններից դուրս ապրող ուկրաինացիների և բելոռուսների հետ: Արժե՞ բերել բռնի կոլեկտիվացիայի որինակները: Մի՞թե հայտնի չե՞, վոր Գալիցիայում ավստրիական կառավարության որով յեղած 2420 ուկրաինական դպրոցներից 1925 թ. մնացել էր 617 դպրոց և Գիլոուդսկու կառավարությունը փակեց եվ 217 դպրոց: Մեթե հայտնի չե, վոր վոչ միայն պետական դպրոցները չկան ուկրաինացիների և բելոռուսների համար, այլ և քարոզչադատությունները: Մթթե կարելի յե մոռանալ այնպիսի, նույնիսկ վոչ կոմունիստական կազմակերպությունների ավերումը, ինչպես ուկրաինական «Պրոսվիդան» և «Բելոռուսական Գրոմադան»: Ինչպիսի Ռումինիա՞ն: Համեմատեցեք Մոլդավիական ինքնավար խորհրդային հանրապետությունը Բեսարաբիայի հետ:

Ցեթե այս է դրությունը «կուլտուրական» յերկրներում, ապա հեշտ է պատկերացնել գաղութների վիճակը— այնտեղ ցեղային թեորիան իրագործվում է եվ ավելի աշկարա, ապացուցելով ընկ. Ստալինի այն միտքը, թե ազգային հարցը ընդարձակվում է և վերաստատների ջատագովության և պրոպագանդի վրա: Այդ պրոպագանդը դարձ իմպերիալիզմի անբաժան մասն է: Այդ պրոպագանդը



անվրեպ ոգնության է հասնում գնալով ուժեղացող ազգային ճնշումը: Հոգեկան ազատության և դեմոկրատիայի մասին յեղած պարապ զրույցները անզոր են այդ պրոպագանդի առաջ: Այդ պրոպագանդին հակադրվում է միայն համաշխարհային պրոլետարական հեղափոխության ուժը, վորը իր յետևից է տանում ճնշված ժողովուրդներին: Ազգային ճնշման թեորիայի և պրակտիկայի այդ պրոպագանդի դեմ հանդիման կանգնած է մեր 150 ժողովուրդների ազատ պետությունը, իրավահավասար հանրապետությունների մեր ազատ Միությունը:

## ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԱՏ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմի որով ազգային հարցի լուծման այլ ուղի չկա, բացի պրոլետարական հեղափոխությունից: ԽՍՀՄ փորձն արդեն անհերքելի ապացուցեց Լենինի և Ստալինի ազգային քաղաքականության ճշտությունը:

Մեզանում, մեր Միության յերկրներում ապրող ժողովուրդների իրավահավասարությունը լոկ իրավագիտական դեկլարացիա չե: Մեզանում գործով, իրականության մեջ կիրառվում և մի դիծ, վոր նպատակ ունի վերացնել այդ ժողովուրդների փաստական անհավասարությունը, վորը ստեղծվել և անցյալում: Ազգային ճնշման թեորիային և պրակտիկային մեզանում հակադրված է բազմաթիվ ազգային հանրապետությունների ազատ համերաշխ աշխատանքի թեորիան և պրակտիկան:

Համեմատեցեք դաշնակից հանրապետությունների բյուջեները: Ահա ամման տեմպերը 1931 թվին, համեմատած 1930 թ. հետ. ՌՍՖՍՀ— 31,2 %, ՈՒՍՍՀ— 32,9 %, ԲՍՍՀ— 87,1 %, ԱՍՖՍՀ— 50,9 %, ՈՒԶԲ. ՍՍՀ— 61,8 %, Թուրքմեն. ՍՍՀ— 87,1 %, Տաջիկ. ՍՍՀ— 108,5 %: Վորքան անցյալում հետամնաց է յեղել յերկիրը, այնքան ավելի բարձր է նրա բյուջեի ամման տեմպերը:

Ահա կոլեկտիվացման ընթացքի տեղեկագիրն առ 20 մայիսի— կոլեկտիվացման միջին տոկոսը— 51,9: ՈՒՍՍՀ-ում— 64 %, Ուզբեկստանում— 63·9 %, Թուրքմենստանում— 58,4 %, առաջներում այնքան հետամնաց մարզերում, ինչպես Մարիականը— 32,1 %, Չուվաշականը— 26,1 %, Կալմիկիան— 31,1 %, Կազակստանը— 53,8 %, Կիրգիզիան— 43,6 % և այլն*:

Հիմնականում նույն բնույթն են կրում ինդուստրացման տեմ-

* Գրքի տպագրության մամենտին, առ հուլիսի 1-ը 1931 թ. կոլեկտիվացման տոկոսը ամբողջ Միության մեջ հավասար էր 55,1 ՈՒՍՍՀ՝ — 65,7 Ուզբ. ՍՍՀ—64,4 Թուրքեստան 55,0, Տաջիկստան—27,6: Ազգային մարդերում մարիցիները— 34,3, չուվաշները—27,5, կալմիկները—41,3, կիրգիզները—43,9, բաշկիրները—57,6 և այլն:

յալները: Հնդամյակի աշխարհագրական քարտեզը արտացոլում է առաջներում ամենաճնշված ցարական գաղութների արդյունաբերական զարգացման համար մղված ամենաբուռն պայքարը: Թուրքիան— Դենպրոստրոյը, Բագուն— վոչ միայն սոցիալիստական ինդուստրացման որինակ են հանդիսանում, այլև փայլուն ապացույց Աեր ազգային բաղաբականության:

Վերցնենք կուլտուրական ցուցանիշները: Համեմատեցեք յերբ-խանների ընդգրկումը դպրոցական ցանցով այժմ և մինչև պատերազմը: Բելոռուսիայում, վորը դաշնակից հանրապետությունների մեջ առաջինը սկսեց անց կացնել պարտուզը, նախքան հեղափոխությունը սովորում ելին դպրոցական տարիք ունեցող յերեխաների 56 %-ը, իսկ այժմ դպրոցական ցանցով ընդգրկված է մինչև 8 տարեկան յերեխաների 91 տոկոսից անց: Անգրագետների տոկոսը 1920 թ. 68,5 եր, իսկ այժմ՝ 13 %, և այս տարի վերացվելու յե 8-ից մինչև 45 տարեկան բոլոր քաղաքացիների անգրագիտությունը: Բելոռուսիայի դրքի արտադրությունը աճում է ըստ անունների քանակի— 1929 թ.— 331, 1930 թ.— 1.006, 1931 թ.— 2777. ըստ տիրաժի— 1929 թ.— 2001 հազ. որինակ, 1930 թ.— 7863 հազ. որ., 1931 թ.— 18,521: Հայաստանում, վորտեղ պատերազմից առաջ դպրոցներում սովորում եր յերեխաների 12,3 %-ը, այժմ տարրական կրթությունը ընդգրկում է քաղաքներում 100 տոկոս, գյուղերում՝ 78,4 %: Վրաստանում, վորն անցյալում ուներ 44 %, այս տարի չրջանների մեծ մասը անցնելու յե 8-ից մինչև 11 տարեկան յերեխաների ընդհանուր պարտադիր ուսման: Ուզբեկստանում անգրագիտության վերացման դպրոցներում սովորողների թիվը 1930 թ. հասավ 354.886, քսան անդամ ավելի քան 1929 թ. (ավելի բարձր տեմպեր, քան ՌՍՖՍՀ մեջ): Ուզբեկստանում դպրոցների ընդհանուր թիվը 1924-25 թ. 804-ից բարձրացել է 2454-ի 1929-30 թ., իսկ գյուղական (դչլաղների) դպրոցական ցանցը այդ տարիների ընթացքում աճել է 362 տոկոսով (561-ից հասնելով 2034-ի): Տեղական բնիկ ազգություններին պատկանող սովորողների թիվը հասնում է 70,2 տոկոսի (1926-27 թ. 63 %-ի դիմաց):

Տաջիկստանում 1931 թ. կան 1300 դպրոցներ, վորոնք ընդգրկում են 50 հազար յերեխաների (անցյալ տարվա համեմատությամբ ավելացել է 3 անգամ): Իսկ նոր համալսարանների թիվը: Իսկ վոչ միայն պարզապես սովորողների, այլ իրենց լեզվով սովորողների թիվը: Իսկ այնպիսի կուլտուրական ձեռնարկումները, ինչպես թուրքական նոր այբուբենը— այդ հսկայական, վերին աստիճանի ուշադրավ գործը, վորով չատ ավելի պետք է հետաքրքրվի խորհրդային ամբողջ հասարակայնությունը:

Մեր ծրագրի մեջ չի մտնում նման որինակները բերելը— այդ հատուկ զեկուցման նյութ պետք է լինի: Ասենք, այդ որինակները ել կարիք չկա, մեզանից յուրաքանչյուրը կարող է բերել տասնյակ և հարյուրավոր որինակներ, վերցրած տեղական փորձից, տեղական հանրապետության մեջ կատարած դիտողություններից: Կուլտուրական հեղափոխությունը ծավալվում է վոչ միայն անցյալում համեմատաբար առաջավոր ժողովուրդների, այլև անցյալում ամենաճնշված ժողովուրդների մեջ: Մարտիկ աճում են ուղղակի ժամ առ ժամ, մեր կուլտուրական վերելքը ցնցող տպավորություն է գործում ամեն մի կողմնակի դիտողի վրա: Միթե դերազանցապես սիմվոլական չե տրակտորի վրա նստած Թուրքմենուհու, ուզբեկուհու, կազակուհու նկարը— այն տրակտորի, վոր գալիս է փոխարինելու հողագործության նահապետական գործիքներին, կանայք տրակտորի վրա այն յերկրներում, վորտեղ առաջինը ստրուկ եր, վորտեղ դեռ նորես մենք պայքարում ելինք լոկ ոչդրան դեն գցելու համար:

## ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Լենինի-Ստալինի ազգային քաղաքականության հսկայական նվաճումները բնավ չեն վերացնում ավելի ուժեղ թափով ազգային հարցով զբաղվելու անհրաժեշտությունը: Մինչև պետք է ասել, վոր մինչև այսոր դեռևս հանդիպում ենք ազգային հարցի թերգնահատման և անբավարար ուշադրություն դեպի այդ հարցը: Ցավն այն է, վոր յերբեմն փորձում են նույնիսկ տեսականորեն հիմնավորել այդ, տալ դրան ինչ վոր «թեորիական բաղա», դրա համար գտնել ինչ վոր «իդեոլոգիական հիմունքներ»: Այնինչ այս բնագավառում մեր առաջ կան դրված հսկա քանակությամբ գործնական խնդիրներ, բազմաթիվ, դեռ բավարար չափով չմշակված տեսական հարցեր: Ինձ թվում է, վոր ազգային քաղաքականության և, մասնավորապես, ազգային կուլտուրայի զարգացման տեսական իմաստավորումը հանդիսանում է ամենաակնբախ ապացույցներից մեկը, վոր հաստատում է ընկ. Ստալինի միտքը թեորիայի՝ հեղափոխական պրակտիկայից յետ մնալու մասին:

Պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական միավորումը պարտավոր է ինչպես հարկն է զբաղվել ազգային կուլտուրայի բոլոր հիմնական հարցերով—առանց դրան նա անկարող կլինի ապահովել խորհրդային Միության բոլոր ժողովուրդների գրողների ճշմարիտ ինտերնացիոնալ դաստիարակությունը:

Վորո՞նք են մեր հետագա զարգացման ուղիները: Մեզանում այժմ հնարավորություններ են ստեղծվել 150 ժողովուրդների ազգաշինման համար: Մեզանում այժմ կա ազատ և իրավահավասար հանրապետությունների Միություն, վորոնց ներսում ստեղծված են մի շարք ազգային մարդեր: Հետո, մեր յերկրում կան ազգեր, վորոնք ազդ են դարձել միայն հոկտեմբերից հետո և պրոլետարիատի հեգեմոնիայի ներքո: Ի՞նչ, ուրեմն սա նահանջ է պրոլետարական ինտերնացիոնալիզմից, նացիոնալիզմի, խրախուսանքո՞ նք, լենինիզմի ռեվիզիա, թե ընդհակառակը, աշխատավորների միջազգային միասնականության ամրապնդում, հարձակում





Գրական. գրակ. հեղ. համար—2

ՀՍՍՌ-Արմ.ՍՍՀ

նացիոնալիզմի վրա, բայլևիզմի սկզբունքների հաղթական կենսաշարժում:

Լենինը, գրում է. «Սոցիալիզմի նպատակն է վոչ միայն վոչնչացնել մարդկության բաժանվածությունը մանր պետությունների և ազգերի ամեն տեսակ կղզիացումը, վոչ միայն իրար մոտեցնել ազգերը, այլ և միաձուլել նրանց»: Ցեվ հետո. «Ճիշտ այնպես, ինչպես մարդկությունը կարող է հասնել դասակարգերի վոչնչացմանը լոկ ճնշված դասակարգի դիկտատուրայի անցողիկ շրջանի միջոցով, նույնպես էլ ազգերի անխուսափելի ձուլմանը մարդկությունը կարող է հասնել բոլոր ճնշված ազգերի լիակատար ազատագրության, այսինքն նրանց բաժանվելու ազատության անցողիկ շրջանի միջոցով»:

Մեր հեռանկարն է՝ ազգերի ձուլումը, այդ է մեր նպատակը, այդ է մեր ուղին: Այդ ձուլումն անխուսափելի է, բայց ցեղային թեորիայի ինչվոր հեռավոր արձագանքը, թաքուն մեծապետականությունը, նացիոնալիզմը յերևան են գալիս այնտեղ, ուր ժխտվում է ազգերի ազատագրությունը և բարգավաճումը դեպի միաձուլումը տանող նանապարհի վրա. այդ միաձուլման համար: Լենինյան հարցադրումը ուղղված է այն բոլոր, նույնիսկ ամենաչնչին, փորձերի դեմ, վոր անում են արդարացնելու համար ազգային ճնշումը՝ ազգերի ազատ ձուլման և խաղաղ պետությունների առավելության նկատառումներով: Լենինյան հին հարցադրումը ազգերի ինքնորոշման և բաժանման իրավունքի մասին՝ մերկացնում էր դիմակավորված մեծապետական շովինիստի ծածուկ մտքերը: Լենինյան հարցադրումը հեղափոխականորեն էր դնում ազգային պրոբլեմը, վերցնելով այն վորպես բաղկացուցիչ մաս պրոլետարիատի հարձակման՝ կապիտալիզմի վրա և պատրաստելով պրոլետարական հեղափոխության դաշինքը ճնշված ժողովուրդների հետ ընդդեմ իմպերիալիզմի:

Միանգամայն այլ հարցադրում ենք գտնում մենք սոցիալ-իմպերիալիզմի տեսաբան Գ. Կունովի մոտ: Իր վերջին գրքույկում—«Պատմական պրոցեսի, հասարակության և պատմության մարքսյան թեորիա» (հ. II), նա գրում է. «Ազգայնության սկզբունքը առաջադրում է յերկու տեսակի հարցեր. առաջին, ազգային անկախության իրավունքի հարցը այն ժողովուրդների բազմաթիվ դեկորների վերաբերմամբ, վորոնք կարճ կամ յերկար շրջանի ընթացքում վորոշ դեր են խաղացել պատմության բեմի վրա. բայց վերջի վերջո կուլ են գնացել ավելի ուժեղ այն ազգերից մեկն ու մեկի մեջ, վորոնք իվիճակի յեն յեղել, շնորհիվ իրենց կենսունակության, հաղթահարել ավելի մեծ խոչընդոտներ:

Ազգայնության այս սկզբունքի կողմնակիցների համար արժեք չունի վոչ տվյալ ժողովրդի նշանակությունը յեվրոպայի համար, վոչ էլ նրա կենսունակությունը: Նրանց համար ռումինացիք և վալախները, վորոնք յերբեք չեն ունեցել սեփական պատմություն և դեռ չունեն հարկ յեղած եներգիան իրենց պատմությունը ստեղծելու համար,—ճիշտ նույնպիսի նշանակություն ունեն, ինչպես խուալացիք, վորոնք ունեն յերկու հազար տարվա պատմություն և անհամեմատ ավելի մեծ կենսական ուժ: Նրանց կարծիքով վալիցիք և մենկամենները (իրլանդական ծովի Մեն կղզու գալիքը), յեթե ցանկանան և վորքան էլ այդ անհեթեթ թվար, նույնքան իրավունք ունեն քաղաքական ինքնուրույնության, վորքան անգլիացիները: Այս բոլորը անմտություն է»:

Պարզ է, վոր Կունովի դատողությունները ներկայացնում են այն թեորիան, վոր հիմնավորում է ազգերի փոխադարձ ճնշման իրավունքը, մի թեորիա, վոր հիմնավորում է իմպերիալիստական ազգային ճնշումը կեղծ ու պատիր նկատառումներով մի ազգի կուլտուրական գերազանցության մասին մյուս ազգի հանդեպ, մի թեորիա, վորը հիմնավորում է վոչ թե ազգերի ազատ ձուլման ուղին, այլ ճնշվածների բռնի ասիմիլացիան գիշատիչների կողմից:

Կունովի թեորիան իմպերիալիզմի պրակտիկան է: Լենինի թեորիան—Խորհրդային Միության պրակտիկան: Իսկ ի՞նչ է ցույց տալիս մեր պրակտիկան: Ի՞նչ ենք տեսնում մենք ազգերի բաժանումը, թե նրանց մերձեցումը: Ազգային կուլտուրայի ծաղկումը միացնո՞ւմ է աշխատավորներին սոցիալիզմի համար մղվող պայքարում, թե պատնեշ է լինում նրանց նացիոնալիստական սահմանազատման: Պատասխանն անհրաժեշտ է վոչ թե պարզապես տեսական շահագրգռության տեսակետից: Այդ պատասխանը վորոշում է գործնական քաղաքականության մի շարք հարցեր:

Ցեվ ահա մենք հանդիպում ենք ընկ. Դիմանշտեյնի մոտ մի դատողության, վորը պարզ ասում է, թե ազգային կուլտուրաների զարգացումը մեր քաղաքականությունն ունենում է այն հետևանքը, վոր աստիճանաբար ավելի շատ դանդաղություններ են յերևան գալիս և ազգերը վորոշ չափով հեռանում են իրարից:

«Կուլտուրաների միաձուլման հարցում այդ հակասությունը կայանում է նրանում, վոր մի կողմից մենք կատարում ենք ինտերնացիոնալ դաստիարակչական շատ մեծ աշխատանք ազգությունները իրար մոտեցնելու, նրանց յեղբայրությունն ամրացնելու ուղղությամբ, բայց միաժամանակ մենք կատարում ենք նաև վորոշ իմաստով ազգային մեծ աշխատանք, վորը կամա թե ակամա վորոշ տեսակետից հեռացնում է ազգերը մեկը մյուսից, հեռացնում է մի ազգի կուլտուրան մյուս ազգի կուլտուրայից» («Вест Ком. Академии», № 31):

Ինձ թվում է վոր ընկ. Դիմանշտեյնի այս պնդումը իմիջի այլոց ունի այն սխալը, վոր խղում է ձևը բովանդակությունից և թերագնահատում է բովանդակության վորոշիչ դերը: Ընկ. Դիմանշտեյնը չի հասկանում ընկ. Ստալինի ֆորմուլան ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրաների զարգացման մասին: Ցեվ այդ չհասկանալու գլխավոր պատճառը այն է, վոր չկա պարզորոշ հարցադրում ազգության մասին, վոր ազ-

դի հասկացողությունը հարկ չեղած չափով պատմականորեն կոնկրետ չի վերցված։ Ի՞նչ ազգի մասին է խոսքը։ Զարգացման ի՞նչ ուղիով է գնում այդ ազգը։ Այդ ուղու վո՞ր ետապի վրա է գտնվում նա։ Վո՞ր դասակարգն է գլխավորում այդ ազգը, և վորքա՞ն ամուր է և ամրանում է նրա դեկավարությունը։ Այս է եյականը, վորովհետև բարգավաճող ազգային կուլտուրաների հեռացման կամ մերձեցման հարցը մեր պայմաններում նշանակում է ազգային—կուլտուրական զարգացման վերաբերմամբ պրոլետարական դեկավարության ուժի և աստիճանի հարց սոցիալիստական շինարարության խորության և ընթացքի կապակցությամբ։ Վորքան հաղթանակում յուրաքանչյուր ազգի մեջ տեղի ունեցող կռվում—պրոլետարական ինտերնացիոնալիզմը, թե նացիոնալիստական հակահեղափոխությունը։ Սա է լուծում հեռացման կամ մերձեցման հարցը։ Ով–ում։

Ընկ. Դիմանչտեյնի յելույթի յեղրակացությունն այն է, վոր նույնիսկ ազգային կուլտուրաների զարգացման համար մեր կատարած աշխատանքը, այսինքն այն աշխատանքը, վորը նպաստում է նրանց զարգացմանը սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ուղղությամբ, միաժամանակ հեռացնում է մի ազգը մյուսից։ Այս շատ լուրջ սխալ է, վորից տրամաբանորեն կարելի է յեղրակացնել կամ անբարյացակամ վերաբերմունք դեպի ազգային ձևի տիրապետումը և նրան հաշվի առնելը, կամ թուլացնել պայքարը յուրաքանչյուր ազգային կուլտուրայի պրոլետարական բովանդակության համար։

Ընկ. Ստալինի հայտնի փորձուլան զարգացման ուղիի համար մղված պայքարի փորմուլան է, մի փորմուլա, վոր որգանապես կապված է Լենինի այն մտքի հետ, թե յերկու կուլտուրա կա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ, թե մենք ժառանգում ենք մի կուլտուրան, իսկ մյուսը տեսնում, թե մենք անցյալի ամբողջ կուլտուրային մոտենում ենք առանց ամենափոքր չափով արհամարհելու մարդկության կուտակած փորձը, բայց և առանց հրաժարվելու քննադատական–հեղափոխական մոտեցումից դեպի այդ փորձը։

*Լենինը և Ստալինը ուսուցանում են յուրաքանչյուր ազգային կուլտուրային, ինչպես և յուրաքանչյուր ազգին մոտենալ անպայման պատմականորեն, կոնկրետ կերպով։ Առհասարակ ազգային կուլտուրայի մասին, ազգային կուլտուրայի՝ ամբողջովին և վորպես այդպիսին, անտես առնելով ազգային–կուլտուրական պրոցեսում հեգեմոնիայի համար մղված դասակարգային պայքարը, կարող և չատախոսել և չատախոսում է կամ պրոլետարական կուլտուրայի դասակարգային թշնամին, կամ նրա գործակալը մեր չարքերում։ Այնինչ մեկնումը չարունակվում է և հաճախ ել ավելի սրվում է պայքարը պրոլետարիատի հեգեմոնիայի համար այս կամ այն ազգի, այս կամ այն ժողովրդի, այս կամ այն հանրապետության կուլտուրական զարգացման մեջ։ Սա դասակարգային*



*պայքարի ամենարարդ ձևերից մեկն է։ Այստեղ պահանջվում է մեծ աչալրջություն, զգուշություն, անհաշտ պայքար։ Վերցնենք որինակ Ֆոլկլորի (կամ ինչպես առաջ ասում եյին, ժողովրդական քանահյուսության) բնագավառում յեղած հրատարակությունների հնչող մեծամասնությունը բոլոր հանրապետություններում—տասը գեպքից ինը—մենք տեսնում ենք, վոր անտես են առնում կամ չեն ըմբռնում Ֆոլկլորի դասակարգային բնույթը, չեն հասկանում կամ անգիտանում են, վոր այնտեղ կան զանազան եպոխաների, զանազան դասակարգերի, տարբեր սոցիալ–կուլտուրական միջավայրի յերկեր։ Այս անգիտացումը կամ չհասկանալը մշակում է վոչ քննադատական վերաբերմունք դեպի անցյալի ազգային կուլտուրան և ձևնտու յե միայն պրոլետարական կուլտուրայի կառուցման թշնամիներին։ Այնինչ մենք չահագրգռված ենք այնպիսի կուլտուրայով, վոր ստեղծվում է տվյալ ազգի սոցիալիստական զարգացման պրակտիկայում և այդ պրակտիկայի համար—այդ է ազգային կուլտուրաների զարգացման գլխավոր գիծը մեր Խորհրդային Միության մեջ, ազգային մեկուսացումը հաղթահարելու, ազգային պարփակվածության պատյանը ջախջախելու, ինքնագոհ պրովինցիալիզմը և նեղմիտ տեղայնությունն արմատախիլ անելու, պայքարում հաղթական դուրս գալու գիծը; այն գիծը, վորի համար կռվում ենք մենք—կուլտուրական բնագավառում ևս լուծելով ով–ում հարցը։*

*Այս տեսակետից պետք է քննադատության յենթարկել որինակ ընկ. Գիրչակի ձևակերպումը, վորը գրում է, թե «ազգային–կուլտուրական շինարարության ֆրոնտում պրոլետարիատի մեջ տարվելիք աշխատանքի հիմնական խնդիրն է պրոլետարական բազա տալ ուկրայնական կուլտուրային»*[1]։

*Դա «ուկրայնական կուլտուրա», այժմ պետք է նրան պրոլետարական բազա «տալ»։ Ի՞նչ ուկրայինական կուլտուրայի մասին է խոսքը, առանց անալիզի յենթարկելու նրա դասակարգային բովանդակությունը։ Ի՞նչու այստեղ ընկ. Գիրչակը վոչինչ չի ասում ուկրայինական անցյալ կուլտուրային քննադատական վերաբերմունք ունենալու անհրաժեշտության և այդ կուլտուրան դասակարգային վերամշակման յենթարկելու մասին։ Մի՞թե մեր կուլտուրական հեղափոխության ծավալումը չպետք է բնորոշվի ինչ վոր միապաղաղ ազգային կուլտուրաներին միապաղաղ և անխիթ մոտեցում ունենալու դեմ պայքար մղելով։ Մեր նոր կուլտուրայի ստեղծումը բնավ չի կայանում հին կուլտուրային պրոլետարական բազա տալու, կամ ինչպես ասում են վոմանք, ազգային կուլտուրայում պրոլետարական բովանդակություն պատվաստ-*

[1]) Е. Ф. Гирчак, «На два фронта в борьбе с национализмом» стр 149։ *Այս գիրքն անպայման պետք է հանձնարարել ընթերցողներին, վորովհետև դատելով ամբողջ գրքից, ընկ. Գիրչակի այդ ձևակերպումը պատահական է և հակասում է կուսակցության գծին, վորի համար պայքարում է ընկ. Գիրչակը։*

տելու մեջ: Մեր նպատակը չի բանվոր դասակարգին պարզապես հաղորդակից դարձնել տվյալ ազգային կուլտուրային—այլ խոսքը վերաբերում է ամբողջ կուլտուրական զարգացման բովանդակության և ուղղության հասար մղված դասակարգային պայքարին:

Կարելի է բերել մի շարք «թեորիաներ», որոնք նման են ընկ. Գիրչակի սխալին: Որինակ, նորերս ընկ. Բեդիան, Վրաստանի կուսակցության կենտկոմի կուլտպրոպի վարիչը, հանդես եկավ հատուկ մի հոդվածով Ամմետելու և Մարջանովի թատրոնական կոլեկտիվների շուրջը տեղած վեճերի մասին: Ցեսս այժմ ամենևին մտադիր չեմ խառնվել այդ դիսկուսիային; որքան էլ նա ուշագրավ և նշանակալի լինի: Այժմ մեզ հետաքրքրում են ընկ. Բեդիայի մի քանի ընդհանուր դատողությունները: Նա գրում է. «Միայն խորհրդային իշխանության պայմաններում հնարավոր եղավ երբք ազգային կուլտուրայի զարգացումը, բովանդակությամբ ինտերնացիոնալ և ձևով՝ ազգային»:

Ի՞նչ ինտերնացիոնալ բովանդակության մասին է այստեղ խոսքը: Կապիտալիզմի որով ևս անխուսափելիորեն տեղի ունի ինտերնացիոնալիզացիայի պրոցես, ազգային սահմանափակության և կղզիացման վերացման պրոցեսը: Մի՞թե սրանում է դրության առանձնահատկությունը Խորհրդային իշխանության պայմաններում:

Ըստ երևույթին ընկ. Բեդիայի սխալը պատահական չէ: Նա այնուհետև գրում է. «... հայտնի է «Անդոր» ներկայացումը, որի մեջ գործնականորեն անդրադառնում է ընկ. Ստալինի լոզունգը ինտերնացիոնալ թեմատիկայի և ազգային ձևի փոխադարձ կապի մասին»:

Դասակարգային բնութագրության բացակայությունն այստեղ ել ավելի ակնբախ է, ընկ. Բեդիայի սխալն այստեղ ավելի է խորանում: Ցեթե նույնիսկ յենթադրենք, որ խոսելով ինտերնացիոնալ թեմատիկայի մասին ընկ. Բեդիան մտածում է պրոլետարական բովանդակության մասին, ապա այդ դեպքում ևս նրա ձևակերպումը չի ճշտվում: Մի՞թե մեղանում խոսքը վերաբերում է միջազգային պրոլետարական կուլտուրայի և ազգային ձևի փոխադարձ կապին: Միթե պարզ չե՞ որ այստեղ մենք գործ ունենք ակնհայտ մեխանիստական մոտեցողության հետ: Մի՞թե հայտնի չե, որ մեզանում խոսվում է ոչ թե բովանդակության և ձևի փոխադարձ կապի, այլ այն մասին, որ բովանդակությամբ է որոշվում ձևը:

Վոմանք կարծում են, թե պրոլետարական կուլտուրայի հարցը լուծված է հենց որ իրագործվեց մարքսիզմ–լենինիզմի կլասիկների երերերի թարգմանությունը ազգային լեզվով: Այս տարանդակ դռեհկացումը ձեռնտու է թե՛ մեծապետական, թե տեղական շովինիստներին: Տեղական շովինիստների համար նման թեորիան շատ հարմար միջոց է ապատվելու պրոլետարական կուլտուրայի համար իսկական պայքար մղելուց, ընդդեմ նացիոնալիստական բուրժուական տարրերի,—դե՛, ամեն ինչ պատրաստ է, «փոխադարձ կապը» արդեն իրագործվեց: Մեծապետական շովինիստների համար այդ թեորիան ծառայում է որպես միջոց դատելու, թե ազգային կուլտուրաների զարգացման հարցը կայանում է պիտուք վելիկոռուսական կուլտուրան տեղական պայմաններին հարմարեցնելու, այդ կուլտուրան մի այլ ազգի հանձնելու մեջ, քիչ թե շատ հաշվի առնելով տեղական պայմանները, ուրիշ խոսքով, տվյալ յետամնաց ազգին պրոլետարական կուլտուրան հրամայելու յե արդեն ամբողջովին պատրաստ վիճակում, մի կուլտուրա, որ ստեղծել են ուրիշները և որը կարիք ունի լոկ թարգմանվելու տվյալ ազգության լեզվով:

Սակայն ամենևին դրան չի վերաբերում Ստալինի խոսքը, բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային կուլտուրայի մասին: Ընկ. Ստալինը յելնում է լենինյան այն ցուցմունքից, թե ինտերնացիոնալ կուլտուրան բնավ ապազգային կուլտուրա չե, թե մենք գնում ենք դեպի ազգերի ձուլումը և կհասնենք նրան, բայց այսոր մենք դեռևս չենք վերացրել կուլտուրայի ազգային ձևը: Սակայն ազգային կուլտուրան ամենևին չի նշանակում, ամենքին հաշտեցնող համազգային կուլտուրայի ռեակցիոն ուտոպիան, մի կուլտուրա, որը մի ամբողջի մեջ միացնում է մի ազգի բոլոր քաղաքացիներին ընդդեմ մի այլ ազգի բոլոր քաղաքացիների: Այսպես դատել նշանակում է խույս տալ դասակարգային պայքարի վճռական, ամեն ինչ որոշող նշանակությունից, որը մարդկությունը բաժանում է վոչ ըստ ազգային զանազանությունների և տարբերությունների սկզբունքի: Բայց միաժամանակ խույս տալ ազգային հարցի ռեալ նշանակությունից, լեզվի կենցաղի, կուլտուրայի, հոգեբանության գանազանություններից, ազգային ձևերի մեջ սոցիալիստական զարգացումն ապահովելու անհրաժեշտությունից—նշանակում է ջուր լցնել շովինիստական տարրերի ջաղացին—եթե թե տեղական, թե՛ մեծապետական շովինիստների,—կրկնելով Ռ. Լյուքսեմբուրգի, Կ. Ռադեկի, Ն. Բուխարինի հին սխալները:

Ձևով ազգային և բովանդակությամբ պրոլետարական կուլտուրայի զարգացումը տանում է դեպի բոլոր ազգերի պրոլետարների համախմբումը և նրանց «հեռացումը» «իրենց» բուրժուաներից:

Կուլտուրայի նման զարգացումը հենց կարող է ապահովել պրոլետարիատի համար ավանդարդի և հեղեղոմի դերն աշխատավորների ամբողջ մասսայի վերաբերմամբ, պայքարելու համար միջնադարի մնացորդների և կապիտալիզմի մնացորդների և սաղմերի դեմ: Կուլտուրայի նման զարգացումը հենց կարող է ապահովել առաջներում կեղեքված, չահագործված, ճնշված միլիոնների ներգրավումը սոցիալիստական շինարարության մեջ: Ազգային կուլտուրաների նման և միմիայն նման զարգացումը կարող է տանել և կտանի մեզ դեպի կոմունիստական հասարակության

միաձույլ մարդկությունը: Ազգերի և ազգային կուլտուրաների նման զարգացումը միայն նպաստում է դասակարգային սահմանազծման և դասակարգային պայքարի հստակության, իրար հակադրելով դասակարգերն այնտեղ, վորտեղ վոմանք կոչ են անում հակադրել ազգերը իշահ «իրենց» բուրժուազիայի: Ահա ինչպես ենք դատում Ռատո Բաուերը դեռևս պատերազմից շատ առաջ:

«Թեև գերմանական և անգլիական բանվորների միջև գոյություն ունեն վորոշ կապեր, սակայն և այնպես այդ կապերն այնքան սերտ չեն, ինչպես անգլիական բանվորների և անգլիական բուրժուաների միջև գոյություն ունեցող կապը, վորոնք ապրում են նույն քաղաքում, կարդում են նույն թերթերը, միևնույն պլակատները, մասնակցում են միևնույն քաղաքական անցքերին, ապորտական գործերին, հաճախ հարաբերություն են ստեղծում իրար հետ, յեթե վոչ ուղղակի, ապա անուղղակի, կապիտալիստների և բանվորների միջև յեղած դանդաղ տեսակի միջնորդների միջոցով: Լեղուն կապերի գործիքն է: Յեթե անգլիական և գերմանական բանվորների միջև ավելի սերտ հարաբերություններ լինեին, քան անգլիական բուրժուաների և անգլիական բանվորների միջև, ապա ընդհանուր լեղու կունենային վոչ թե անգլիական բուրժուան անգլիական բանվորի հետ, այլ անգլիական բանվորը գերմանական բանվորի հետ»: («Национ. вопрос и соц-демократия», եջ 116):

Այս այն թեորիան է, վոր նախորոք պատրաստում և արդարացնում էր II Ինտերնացիոնալիզմի կուսակցությունների դավաճանությունը ինտերնացիոնալիզմի հանդեպ 1914 թ.: Այս այն թեորիան է, վոր շղթայում էր պրոլետարիատը իմպերիալիստական բուրժուազիայի կառքին: Այս այն թեորիան է, վոր իրար է հակադրում զանազան ազգերի բանվոր դասակարգը հանուն միաձույլ, համազգային կուլտուրայի, վոր դավանում է ազգի միություն, ճակատագրի միություն: Այս այն թեորիան է, վոր ժխտում է ազգերի ապագա ձուլումը, մի ձուլում, վոր առաջադրում է վաղը պայքարել այսոր բաժան-բաժան ազգերի որգանական մերձեցման համար: Այդ թեորիայի դեմ այն ժամանակ հանդես յելավ ընկ. Ստալինը:

«Սակայն ազգերի զուգվածությունը և միասնականությունը թուլանում են վոչ միայն բնակչության կազմի փոփոխության շնորհիվ: Նրանք թուլանում են նաև ներսից դասակարգային պայքարի սրման շնորհիվ: Կապիտալիզմի սկզբնական աստիճաններում դեռևս կարելի յեր խոսել պրոլետարիատի և բուրժուազիայի «կուլտուրական ընդհանրության» մասին: Բայց խոշոր ինդուստրիայի զարգացման և դասակարգային պայքարի սրման զուգընթաց այդ «ընդհանրությունը» սկսում է հալչել: Չի կարելի լրջորեն խոսել ազգի կուլտուրական ընդհանրության մասին, յերբ միևնույն ազգի տերերը և բանվորները այլևս չեն հասկանում իրար լեղուն: Ինչ «ճակատագրի ընդհանրության» մասին խոսք կարող է լինել, յերբ բուրժուազիան ծարավի յե պատերազմի, իսկ



պրոլետարիատը հայտարարում է «պատերազմ պատերազմին»: Կարելի յե արդյոք նման հակադիր տարբերից կազմակերպել միասնական, միազգասակարգային ազգային միություն: Կարելի յե արդյոք սրանից հետո խոսել «ազգի բոլոր անդամներին ազգային կուլտուրական ընդհանրության մեջ համախմբելու» մասին:

Ահա մարտնչող բայլշևիկյան գիծ: Բաուերը խոսում է գերմանական բուրժուազիայի և գերմանական բանվորի ընդհանուր լեզվի մասին, իսկ Ստալինն ասում է, վոր նրանք այլևս չեն հասկանում իրար: Բաուերը փորձում է առաջ քաշել ինչ վոր համազգայնության առաջնությունը դասակարգայնությունից, իսկ Ստալինը ցույց է տալիս դասակարգայնության առաջնությունը և պայքարում է նրա համար: Բաուերը ազգային հարցը «լուծում է» իմպերիալիզմի շահերի ոգուն: Ստալինը լուծում է դասակարգային հարցը պրոլետարական հեղափոխության շահերի տեսակետից և նրա հիման վրա—այնպես, ինչպես այժմ կարող է լուծվել մեր ազգային արցը:

Ահա թե ինչու Ստալինի դրույթը ազգային կուլտուրաների զարգացման հարցում՝ բուրժուազիայի լիակատար տապալման և նրա ազդեցության վոչնչացման դրույթն է, մի դրույթ, վոր առաջադրում է պրոլետարիատի հեգեմոնիան ազգային—կուլտուրական շինարարության մեջ, ուժերի մոբիլիզացիան յուրաքանչյուր հանրապետության և յուրաքանչյուր ժողովրդի մեջ ով-ում հարցի սոցիալիստական լուծման համար: Հրաժարվել ազգային կուլտուրայի լոզունգից պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում նշանակում է անձնատուր լինել անցյալում տիրող դասակարգի ազգային կուլտուրայի առաջ, նշանակում՝ է թերագնահատել պրոլետարիատի հեղեմոնիայի անհրաժեշտությունը աշխատավորության ամենալայն մասսաների վրա, նշանակում է չհասկանալ, վոր ապագա միասնական կուլտուրան աճում է վոչ թե բոլոր անցյալ ազգային կուլտուրաների սխեմատիկ աղքատացումից և նրանց անկումից, այլ նրանց բարգավաճումից, նրանց բովանդակած լավագույնը համամարդկային սեփականություն դարձնելով, յուրաքանչյուր ազգի կուլտուրայի լավագույն արժեքների ընտրությամբ և համադրությամբ:

## ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ՆԱՅԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Ազգային կուլտուրայի բնագավառում ով-ում հարցի լուծումը վերջին հաշվով ամբողջապես փորոշվում է այդ հարցի լուծումով՝ յերկրում յեղած դասակարգային ուժերի ընդհանուր բալանսում: Մենք թեակոխել ենք սոցիալիզմի շրջանը: Հնգամյակի ընթացքում, նրա յերրորդ վճռական տարում մենք ավարտում ենք սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը: Ուժերի ներքին փոխհարաբերության տեսակետից սոցիալիզմի հաղթանակի հարցը արդեն լուծված և ապահովված է: Դրանով պատմական-

քեն լուծված է նաև առաջներում ամենահետամնաց ազգերի վոչ կապիտալիստական զարգացման հարցը—առանց կապիտալիստական զարգացման նրանք ուղիղ գնում են դեպի սոցիալիզմ, պրոլետարիատի դիկտատուրայմամբ: Սակայն այս բնավ չի նշանակում, վոր հնարավոր է վերցնել և դեն նետել ով-ում հարցը: Վոչ միայն միջազգային մասշտաբով, այլ և մեզ մոտ, ԽՍՀՄ-ում:

Չնայած մեր վճռական հաջողություններին, դասակարգային թշնամին անխուսափելիորեն չարունակում է կռվել ով-ում հարցը իր ոգին լուծելու համար: Մենք դեռևս գտնվում ենք դասակարգային սուր պայքարի շրջանում—և այն էլ ամենանոր, նուրբ և արատուց ձևերով — մի պայքար, վորը նկատելիորեն սրվում է, մասնավորապես, կուլտուրայի բնագավառում, մի պայքար, վոր նույնքան ավելի դժվար է, վորքան թույլ է պրոլետարական խավը տվյալ յերկրում: Այդ պայմաններում վոչ մի հիմք չկա նվազեցնելու ուշադրությունը դեպի ազգային հարցը: Վերակառուցման շրջանը համամիութենական պրոլետարիատի վրայից չի վերցնում բնավ ազգային հարցով զբաղվելու պարտականությունը: Ընկ. Ստալինը կուսակցության XII համագումարում այսպես է բնորոշում այդ հարցի դասակարգային բովանդակությունը, «ինչո՞ւմն է կայանում ազգային հարցի դասակարգային եությունը: Ի՞նչ է ազգային հարցը: Ազգային հարցի դասակարգային եությունը կայանում է— յես խոսում եմ մեր, խորհրդային պայմանների մասին—նախկին պետական ելիթող ազգի պրոլետարիատի և նախկին ճնշված ազգությունների գյուղացիության փոխհարաբերությունները վորոշելու մեջ: Այստեղ հարցը վերաբերում է ճիշտ փոխհարաբերություններ հաստատելու նախկին պետական ելիթող ազգի պրոլետարիատի, վորը ներկայացնում է ամենից աւելի կուլտուրականը մեր ամբողջ ֆեդերացիայի պրոլետարիատի իավերից,—և գյուղացիության միջև, գլխավորապես առաջներում ճնշված ազգությունների, գյուղացիության: Դրանումն է ազգային հարցի դասակարգային եությունը»:

Այս տեսակետից, բնականաբար, կոլեկտիվացման և ինդուստրացման մեր տեմպերը հանդիսանում են հիմք ազգերի մերձեցման հետագա ամրացման տեմպերի համար: Բայց, դուցե, հենց այդ տեմպերն են վերացնում ազգային հարցը վերակառուցման շրջանում: Դուցե, յեթե մենք հաջողությամբ լուծենք գյուղացիությանը զարգացման սոցիալիստական ուղու վրա կանգնեցնելու խնդիրը, դրանով արդեն հիմնավորվում է ազգային հարցի վերացումը, թեկուզ օրինակ ռուսական պրոլետարիատի համար:

Բայց, նախ, ազգային հարցը չի հանգում գյուղացիական հարցի—այդ կնշանակեր ակնհայտ և կոպիտ կերպով պարզեցնել պրոբլեմը, վոր ավելի բարդ է և բազմակողմանի, և յերկրորդ, սոցիալիստական շինարարության հաջողությունները և բայշևիկյան տեմպերը կապված են ազգային հարցի վոչ միայն անցյալում, այլ և ապագայում ճիշտ լուծման և այդ հարցին նվիրվելիք ուշադրության հետ:

Ազգային հարցը «վերացնելու» փորձերը մեծ մասամբ նշանակում են անցյալում մեծապետական ազգի շովինիստական ազբեսիան, իսկ յերբեմն էլ դասակարգային թշնամու պրովոկացիան անցյալում ճնշված ազգերի մեջ:

Ազգային նիհիլիզմը, վորով հաճախ վոմանք սրբեր են ճոճում, թշնամի յե մեր կուսակցության դեմ: Ազգային հարցին ուշադրություն չդարձնելը և նրան ծաղրի յենթարկելը ինտերնացիոնալիզմի պատենտ չի յերբեք: Ինտերնացիոնալիզմն այն է, յերբ եմտորեն կիրառվում է կուսակցության դրությունը դեպի ազգերի վերելքը և նրանց կուլտուրայի ծաղկումը սոցիալիզմի շինարարության լայն պողոտայի վրա: Ինտերնացիոնալիզմն այն է, յերբ պայքար է մղվում մեծապետական շովինիզմի դեմ վորպես գլխավոր վտանգի, ինչպես և տեղական շովինիզմի դեմ: Ինտերնացիոնալիզմը կայանում է ազգային նիհիլիզմի դեմ պայքարելու մեջ, վորը հաճախ լոկ դիմակ է կուսակցության ազգային քաղաքականության դեմ պայքարելու համար: Զուր չէ, վոր այնպիսի կատարյալ մեծապետական, ինչպիսին Վահանյանն է, նույնպես վարվում է նիհիլիզմով:

Դե, յես հարյուրտոկոսանի ինտերնացիոնալիստ եմ, թքած ինչ վոր ազգային հարցերի վրա: Պետք է ասել, վոր այս դատողությունը լավագույն և մեծագույն ապացույցն է, թե ինչպես մարդիկ հեռանում են ինտերնացիոնալիզմից և ծաղրում են նրան, լավագույն և մեծագույն վկայությունը, վոր մարդիկ չեն ցանկանում ինտերնացիոնալիստ լինել մեր ամենորյա աշխատանքի պրակտիկայում, լավագույն և մեծագույն ապացույցը, վոր Վահանյանը իրականում հանդես եր գալիս վորպես սպասավոր անցյալից մնացած կապիտալիստական տարրերի, վորոնք ցանկանում են վերականգնել մեծապետական ռուս ազգի նախկին պետությունը: Հենց նման տարրերին առաջին հերթին ձեռնտու յե խորթությունը ազգային նիհիլիզմը, վորի շարքում և այնպիսի տիպի, ինչպես գիտք ուկրաինական լեֆ Շկուրուպիի յեռությունը:

Շկուրուպին չի առարկում ազգային կուլտուրայի և ազգային գրականության դեմ—«քանի դեռ չի վերացել նացիոնալիզմը, արվեստի այդ բնագավառները գոյության լիակատար իրավունք ունեն»—նշանակում է ազգային կուլտուրայի զարգացումը և ուշադրությունը դեպի ազգային ձևը մի դիջում է, ներողամտություն այն խեղճերի վերաբերմամբ, վորոնք դեռ չեն կարողացել հրաժարվել նացիոնալիզմից: Ինքը՝ Շկուրուպին հասասա համոզված է, վոր լիովին հրաժարվել է նացիոնալիզմից, դերաճել է նրանից—և նրա այդ վստահությունը մեր մեջ անվստահություն է առաջացնում այն մասին, թե արդյոք կկարողանա Շկուրուպին յերբևէ աճել և հասնել մինչև բայշևիկյան ինտերնացիոնալիզմը: Պարզ է, իհարկե, վոր նրա ազգային-նիհիլիստական դեկլամացիան ուրախաց-

նում է հենց նրանց, վորոնք կողմնակից են վահանյանական «ինտերնացիոնալիզմին»:

Զավիտանց բնորոշ է, վոր ազգային հարցի բնագավառում հատկապես լրար են մոտենում աջ և «ձախ» ուկլոնիստները, առանձնապես մերկացվում է նրանց ոպորտունիստական էությունը: Ազգային հարցի բնագավառում հատկապես մերկացվում են այդ բոլոր թեքումները, վորպես արտահայտություն դասակարգային թշնամու ճնշման, վորը ոպորտունիստներին դարձրել է իր գործակալությունը:

## ՊԵԼԻԿՈՌՈՒՍԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄԸ ՎՈՐՊԵՍ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳ

Վերցրեք մեծապետական թեքումը, ազգերի անհավասարությունը լիկվիդացիայի յենթարկող և նրանց իրավահավասարությունն իրագործող կուսակցական քաղաքականությունը վերացնելու ձգտող թեքումները, միասնական և անբաժան մայր Ռուսիան վերականգնելու ուղղությամբ յեղած թեքումները: Ականջ դրեք մեծապետականին, յերբ նա իր սիրտը բաց է անում և փորձեցեք ջոկել նրան ամենովեխականից: Նրանք վոչ միայն զոդվում են իրար հետ, վոչ միայն խոսում են նույն լեզվով— այլ յերբեմն նույնիսկ ուղղակի չես իմանում, վորտեղ է վերջանում ամենովեխականը և վորտեղ սկսվում մեծապետական «կոմունիստը»:

Նույնիսկ, մեծապետական կոմունիստների դատողությունները կարելի յե նույնացնել վոչ միայն ամենովեխականների, այլև այն դիրքի հետ, վոր բռնում է ռուսական եմիգրացիան ազգային հարցում: Վերին աստիճանի չահեկան և հետևել այն դիսկուսիաներին, վոր տեղի յե ունենում որինակ վրացական և ռուսական մենշևիկների միջև, վորտեղ վրացական մենշևիկները վոչ առանց հիմքի ասենայու ռուսական մենշևիկներին հայտարարում են վելիկոռուսական իմպերիալիստների բանակի սպասարկուներ:

Սակայն մեզանում հաղվագեպ են հիշատակվում մերթ անընկատելի, հաճախ դիմակավորված, բայց պրակտիկայում դեռևս շատ անգամ յերևվացող մեծապետականության որինակները: Ցեռ բոլոր դատողությունների հիմքը կուլտուրական թեմաների վերաբերյալ: Սակայն վերցրեք վոմն Զնամենսկու աշխատությունը պոլոնիան բնագավառում, վոր հրատարակվել է Զեչնիայում: Այդ Զնամենսկին պնդում է, վոր չեչեն յերեխաները ի ծնե անընդունակ են բարձր հոգեկան գործունեության և զիտելիքների ձեռքբերման: Վերցրեք որինակ Թուրքմենստանում, Թուրքմենական զեղարվեստական տեխնիկումի կազմակերպման ժամանակ մի քանի ռուս մեծապետականների հայտարարությունները այն մասին, թե Թուրքմեն յերիտասարդությունը— նույնպես ի բնություն զուրկ է լսողությունից և զեղարվեստական ընկալման ընդունակությունից: Հետո, Բաղվում պրոֆ. Ցեվլախովը Բաղվի համալսարանի պատվարժան ժողովում «գիտնականի» յերևույթով ապացուցել է, թե Թուրքերն իրենց մասավոր ընդունակություններով չեն կարող գիտնական պրոֆեսորներ պատրաստել: Հետաքրքիրն այն է, վոր Զնամենսկու աշխատությունը կուլտուրական պրոդրեսի կարգով հրատարակված է Լուսաժողկոմատի զեղատեսչության միջոցով...

Ինչպես տեսնում եք, նացիոնալիստական տականք երբ յերբեմն հանդես են գալիս նույնիսկ բաց ճակատով, թեև հաճախ ցեղային թեորիան հիշեցնող այդ դատողությունները քողարկվում են մարքսիստական ֆրազեոլոգիայով: Մի՞թե ընկերներին հայտնի չեն այն բազմաթիվ դեպքերը, յերբ ռուս ուսանողությունը ընդդիմացել է դպրոցների ազգայնացմանն այս կամ այն դաշնակից հանրապետության մեջ: Մի՞թե հայտնի չէ, վոր այդ վոչ հազվագեպ ընդդիմությունը տեղական ազգային լեզվին անցնելու՝ կրում է ակընհայտ մեծապետական բնույթ:

Մի՞թե հայտնի չէ նաև այն որինակը, վոր XVI կուսակցական համագումարում բերեց ընկ. Կագանովիչը, նշելով ԽՍՀՄ Գեոպլանի հնգամյակը, վորտեղ մոռացել էին ազգային կադրերի պատրաստության հարցը: Կամ մեզ ավելի մոտիկ մի բնագավառից: Կա թատրոնական մի քննադատ և դրամատուրգ՝ Գլեբով, վորին վոմանք համարում են նույնիսկ տեսաբան:

Այդ Գլեբովը մի քանի անգամ հանդես է յեկել ազգային թատրոնի հարցերի շուրջը չափից ավելի գովաբանելով բոլոր վոչ ռուսական թատրոնները, մի գովաբանություն, վորի յետևը թաքնված է ազգայական ներողամիտ քաջալերանք, մի գովասանություն, վորը բնորոշում էր թատրոնների ոլիմպիադայի անցկացման ամբողջ սիստեմի համար:

Ցեռ անհրաժեշտ եմ համարում ուղղակի ասել, վոր այդ ոլիմպիադայում վոչ միայն Գլեբովի, այլև մեր թատրոնական քննադատների մեծ մասի կողմից հայտարերվեց միանգամայն անթույլատրելի գովաբանություն, կապված հենց այդ ազգայական ներողամիտ քաջալերանքի հետ (ծափահարություններ): Բնորոշ է, վոր այդ գովաբանությունը միաժամանակ և անխուսափելիորեն պատճառ յեղավ քողարկելու դասակարգային պայքարը, վորն ուժեղ կերպով ծավալվում է թատրոնական ամբողջ ֆրոնտի վրա Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում:

Քննադատների տոնն ավելի քան «ինտերնացիոնալիստական էր»: Ա՛յ, տեսնում եք, ինչ լավ մարդիկ ենք, ի՞նչ ռուսական թատրոն, ի՞նչ բան, թատրոններ են յեկել մյուս հանրապետություններից և ա՛յ, ինչպե՞ս լավ ենք ընդունում նրանց: Այնինչ այստեղ ինտերնացիոնալիզմի նշույլն անգամ չկա, իսկ մեծապետական տափակություն, վորքան կուզեք:

Ելի մի որինակ. վերջերս լույս տեսավ մի գիրք «Խորհրդային Արևելքի զեղարվեստական կուլտուրան» (հրատ. «Ակադեմիա», 1931 թ.): Այս գրքույկը ամենադրեհիկ կերպով վերակենդանացնում է բուրժուական կոնցեպցիան ընդհանրապես Արևելքի և ընդհանրապես Արևմուտքի մասին: Իր էությամբ այդ ֆորմալիստական մի գրքույկ է: Այնտեղ խոսք անգամ չկա դասակարգային

պայքարի մասին արվեստի բնագավառում, ինչպես և չի խոսվում ընդհանրապես արվեստի դասակարգային բնույթի մասին: Ազգային արվեստի վերաբերյալ յեղած դատողությունների հուզական առանցքը հանդիսանում է միևնույն ազգայական դարմանքը և գովասանքը— ա՛յ, տեսնո՞ւմ եք, վորքան մանր և յեռամնաց ազգություններ են, այնուամենայնիվ հետաքրքիր արվեստ ունեն: Սոցիոլոգիական միակ ընդհանրացումը, վորի աստիճանին կարողանում են հասնել հեղինակները, այն է, վոր արվեստը բաժանում են «բարձր» և «ժողովրդական» արվեստի: Արժե՞ միթե քննադատել այդ կարգի «սոցիոլոգիան». կհիշեմ միայն վոմն Զումմերի դատողությունը Ադրբեջանի արվեստի զարգացման ուղիների մասին: Դա հոդվածի վերջին մասն է, ամենալիբերալական թռիչքը Զումմերի դատողության մեջ. «Հին կուլտուրան ապադդայնացրեց վերնախավերին, արվեստը բաժանեց աղայական և դեղջկական արվեստի, կանխորոշելով արհամարհական վերաբերմունքը դեպի ճանճարակ տնայնագործությունը»: Ադրբեջանի նոր արվեստը, վորը զարգանում է աղգային վերածնունդի նշանաբանի տակ, պետք է հաշվի առնի նաև այդ, իր պարզության մեջ իմաստուն «ատորին արվեստի» փորձը» (եջ 102):

Բանից յերևում է, վոր հին կուլտուրայի— նույնպես յուրահատուկ ձևավորվում, կարծես թե հին կուլտուրան ինչ վոր միաձույլ բան է յեղել— հիմնական մեղքն այն եր, վոր այդ «հին կուլտուրան» պառակտվել է աղայականի և դեղջկականի: Իմաստն այս է— անցյալում դասակարգային պայքար յեղել է, իսկ այժմ, նոր արվեստ կերտելիս, պետք է խուսափել նրանից: Ուրեմն այստեղ չպառակտվե՛ք: Ցեվ վորքա՞ն կեղծ են հնչում հեղինակի խոսքերը «իր պարզության մեջ իմաստուն» արվեստի մասին. Բացի դրանից, ամբողջ գրքի վրա նկատվում է նոր կուլտուրայի հանդեպ սարսափի կնիքը, այն նոր կուլտուրայի, վորը իբր թե իր զարգացման հետ մի կողմը կնետի և կթողի այն ամեն հետաքրքրականը և յուրահատուկը, վոր այդ ժողովածվի հեղինակները հայտարարել են «Խորհրդային Արևելքում»:

Կարիք կա՞ արդյոք ապացուցելու, վոր այս գրքում մենք տեսնում ենք վելիկոռուսական շովինիզմի տեսակներից մեկը: (Մի ձայն տեղից. «և հիմարություն»)—Վոչ, դա հիմարություն չե: Վելիկոռուսական շովինիզմը ամենավին պարզ հիմարություն չե: Դասակարգային թշնամու տեսակետից այդ նրա պայքարի ամենախորագույն մթոցներից մեկն է, և դասակարգային թշնամին ճարպիկ կերպով է ոգտագործում ազգամիջյան ատելության գենքը. շատ հաճախ և խելոք կերպով: (Ձայներ. «ճիշտ է» ծափահարություններ):

Կամ վերցրեք վելիկոռուսական աղգային շովինիզմի այնպիսի մի օրինակ, ինչպես պերեվերզևականների աշխատանքը բելոռուսական պետական համալսարանում: Այդ պերեվերզևականները վոչ միայն փչացնում եյին ուսանողությունը, քարոզելով իրենց ուսուցչի մենշեվիկյան, հակամարքսիստական գրականագիտությունը, այլև դասավանդության ժամանակ բոլոր օրինակները վերցնում եյին միայն ռուսական գրականությունից, ամենաարհամարհական վերաբերմունք ցույց տալով բոլոր առաջարկությունների, դեթ իրենց գրությունների ապացուցելու բելոռուսական գրականության փորձով:

Հետաքրքրական է նշել, ի միջի այլոց, վոր պերեվերզևականությունը մի շարք հանրապետությունների մեջ, ինչպես օրինակ Վրաստանում, զուգվում եր տեղական շովինիզմի հետ, ինչ վոր կարելի յե բացատրել, այլ պատճառների թվում, պերեվերզևական այն գրությամբ, վոր ժխտում է ակտիվ միջամտությունն արվեստի զարգացման մեջ, պերեվերզևական այն ուսմունքով, վորի համաձայն արվեստագետը ճակատագրական կերպով պարփակված է վորոշ պատկերների շրջանակում և այլն: Վորքան եվ այդ Սովետները և Ֆոխտները փոխեն իրենց գույնը, վորքան եվ նրանք այժմ դես ու դեն ընկնեն և մանյովրներ անեն մյուս պերեվերզևականների,— կուսակցական տոմսով, թե առանց կուսակցական տոմսի,— հետ միասին, նրանց բոլորի վերաբերմամբ պետք է ցերկար ժամանակ պահել աչալրջություն և անվստահություն, ոգտագործելով նրանց վոչ թե մեկ, այլ մի շարք դիսկուսիաներում:

Սա առանձնապես վերաբերում է կուսակցական տոմս ունեցող պերեվերզևականներին: Չե՞ վոր յեղել են այնպիսի կուսակցականներ, վորոնք մի շարք տարիներ սովորեցին միայն Լրա համար, վորպեսզի վերջիվերջո դառնան մենշեվիկյան պրոֆեսորի ուղղափառ աշակերտները (Բեսպալով, Գելֆանդ, Զոնին, Կին և այլն):

Պետք է նրանց ամեն կերպ ոգնել լիովին հրաժարվելու իրենց սխալներից և փոխելու իրենց դիրքը, սակայն այդ հարցում վորքան ավելի պակաս լիբերալիզմ և վստահություն ցույց տանք, այնքան ավելի քիչ սխալներ կգործենք:

Մյուս կողմից, ի հարկե վոչ բոլոր նախկին պերեվերզևականները կկարողանան փոխել իրենց դիրքը— և դրանց թվում ամենահուսալիները հենց նրանք են, վորոնք լրացուցիչ կերպով իրենց մերկացնում են նացիոնալիզմի գծով, ինչպես օրինակ Բելոռուսիայում:

Այնուհետև, վերցրեք 1927 թ. Գիտությունների Ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսած՝ ակադեմիական արևելագիտության հայտնի սյուներից մեկի— Բարտոլդի աշխատությունը Թուրքեստանի կուլտուրական կյանքի պատմության մասին: Մինչև Ասիայի կոլոնիզացիան ռուսական ցարիզմի կողմից մեր առջև պատկերանում է վորպես ավելի առաջավոր ժողովրդի իդիլիական ոգնությունն ավելի հետամնաց ժաղավուրդներին: Ցեվ Կաուֆմանները, և Մուրավյեվները, և Կուրոպատկինները հանդես են գալիս գրեթե վորպես աղդարնակության սիրելի առաքինի կուլտուրարեգերներ: Կամ վերցրեք օրինակ լեղվագիտական դիսկուսիան: Բայց արդյոք շատ չի յերկարում օրինակների շարանը (Ձայներ. «վոչ, խնդրում ենք»):

Պետք է ասել, որ մենք լեզվագիտական դիսկուսիային անհերելի չափով քիչ ուշադրություն դարձրինք, ավելի ճիշտը, գրեթե չզբաղվեցինք նրանով: Մինչև լեզվի հարցերը անմիջականորեն մտնում են մեր աշխատանքի բնագավառը: Մենք այստեղ հանդես պետք է գանք վոչ վորպես կողմնակի դիտողներ, այլև վորպես կողմերից մեկը մեր սեփական գծով, մեր սեփական տեսակետով, մեր սեփական քաղաքականությամբ:

Հենց այն մոմենտին, յերբ մենք սուր պայքար եյինք մղում «լիտֆրոնտի» դեմ, կազմվեց «Ցաղիկոֆրոնտը», մի խմբակ, վոր ֆր անունով հենց արձագանքում եր մեր տխրահռչակ լիտֆրոնտականներին:

Այս խմբակը գործեց մի շարք շատ լուրջ սխալներ՝ իդեալիստական և ֆորմալիստական բնույթի, սխալներ, վորոնք բղխում եյին մասնավորապես հնդեվրոպական թեորիաների ազդեցությունից այդ խմբակի մի քանի ներկայացուցիչների վրա: Այդ խմբի ակնառավոր տեսաբաններից մեկը, ընկ. Դանիլով, բացի դրանից գործեց մի քանի սխալներ, վորոնք ունեյին ակներև վելիկոռուսական-շովինիստական բնույթ: Նա ուղղակի ժխտում եր ուկրայնական լեզվի ուրույնությունը— եվ ի՞նչ խոսք, որինակ, բելոռուսական լեզվի մասին:

Բանն այն է, որ ընկ. Դանիլովի դատողությունները կրում եյին արտաքուստ խորապես ճախ բնույթ,— թե լեզուն միջազգայնականում է, թե ռուսական և ուկրայնական բանվորի դաշտարական բովանդակությունը նույնն է և այլն, և այլն:

Պետք է ասել, որ ինքը՝ ընկ. Դանիլովը հարկադրված յեղավ վերջի վերջո հայտարարել, թե իր «ճախ» ֆրազան լեզվի ինտերնացիոնալիզմի մասին թաղցնում եր ակներև աջ-ռեակցիոն դրույթ «ինտերնացիոնալիզմը փոխարինելով «ռուսիֆիկացիայով»: Մեզանում յերբեմն վտանգ ինտերնացիոնալիզմը շփոթում են ռուսիֆիկացիայի հետ: Այդ «շփոթի» տեսաբանը, ջատագովը և քարոզիչն եր հենց Վահանյանը:

Սակայն, յերբ լեզվագիտական դիսկուսիայից հետո ընկերները բանաձև եյին դրում նրա արդյունքների մասին, ելի մի մեղք գործվեց— նրանք մոռացան չեչտել մեծապետական թեքման հարցը: Այս նրանց մեղմ ձևակերպումն է— մոռացել եյին չեչտել: Այնինչ հենց, լեզվի բնագավառը պետք է հատկանշվի ամեն տեսակի մեծապետականության դեմ կոմունիստների մղած պայքարով: Հենց լեզվի բնագավառում պետք է կարողանալ պրոլետարական կուլտուրայի, բանվոր դասակարգի միջազգային միասնականության համար մղված պայքարը կապել ազգային ձևերի հաշվառման հետ, ամեն կերպ ուշադրություն դարձնելով նրանց:

Վելիկոռուսական, մեծապետական շովինիզմը*) չափազանց

*) Կա և վոչ ռուսական մեծապետական շովինիզմ—դա ավելի ուժեղ և խոշոր ազգի շովինիզմն է իր տերիտորիայի վրա ապրող ավելի թույլ և փոքր թիվ ազգի վերաբերմամբ:



յուրահատուկ կերպով արտահայտվում է յերաժշտական ֆրոնտում: Նախ զգուշացնում ենք դաշնակից հանրապետություններից յեկած ընկերներին, վոր այժմ ցիգանչչինայի, ֆոկտորոտի և ջազի հերոսները, խալտուրա հայթայթողները վռնդվելով ՌՍՖՍՀ-ից, ապաստան են փնտռում նրանց մոտ:

Ընկերնե՛ր, արթուն կացեք: Ձեզ վրա յե գալիս ակնհայտ մի պատուհաս:

Ռուսաստանի պրոլետարական յերաժիշտների ասոցիացիան, վորը վորոշ հիմք ունի պարծենալու այդ մարդկանց դեմ մղած իր պայքարի հաջողություններով, պետք է շատ ավելի սերտորեն կապվի մյուս հանրապետությունների պրոլետարական յերաժշտական կազմակերպությունների հետ, վորպեսզի, մասնավորապես, ամրապնդի իր հաղթանակը ՌՍՖՍՀ մեջ:

Վելիկոռուսական շովինիզմը յերաժշտության ասպարիզում շատ հաճախ վարագուրվում է յուրահատուկ «ազգային» զգեստավորումով: Վերցրեք որինակ այսպես կոչված կինոյի յերգերի, «Ալլահվերդի» կամ «Գուլիմջանի» տիպի յերգերի, այսպես կոչված հրեական (ոդեսական) յերգերի, այսպես կոչված մայորական յերգերի մեծամասնությունը: Այս բոլոր յերգերը վոչ այլ ինչ են, բայց յեթե ազգային յերաժշտության պարոդիան, ուղղակի ծաղր նրա հանդեպ, մեծապետականության բացահայտ արտահայտություն:

Նման մեծապետականության արտահայտության ձևերից մեկն է, որինակ, նախահեղափոխական և նույնիսկ հեղափոխական շրջանի մի շարք յերաժշտագետների աշխատանքի բնույթը արևելյան մոտիվների այսպես կոչված ոգտագործման բնագավառում: Այնպիսի յերաժշտագետներ, ինչպես Ռախմանինովը, ինչպես Վասիլենկոն, ինչպես Իպպոլիտով Իվանովը, ինչպես Գլիերը, արևելյան յերաժշտությանը մոտենում են վորպես ինչվոր եկզոտիկայի, զվարճալի և չեչտված ռուսականացնելով այն, վոչնչացնելով նրա առանձնահատկությունները, աղավաղելով այն ընդհանրապես:

Առանձնապես վատ է յերաժշտական կրթության վիճակը այն դաշնակից հանրապետություններում, վորտեղ առաջ յեղել են ռուսական կոնսերվատորիաներ, ինչպես որինակ Թիֆլիսում: Մեծ մասամբ նրանք վոչ միայն առաջ, այլև ներկայումս հանդիսանում են ռուսական շովինիզմի կենտրոններ:

Պետապարատների ազգայնացման բնագավառում դաշնակից հանրապետությունների մեջ, ազգային պրոլետարական կադրեր ստեղծելու ասպարիզում մենք ձեռք ենք բերել հսկայական հաջողություններ: Այստեղ մեր առաջընթացը կատարվում է ավելի արագ տեմպերով: Սակայն այդ ամենը դեռ բավական չե: Այստեղ վոչ միայն պետք է չարունակել աշխատանքը, այլև ամեն կերպ ուժեղացնել, նկատի ունենալով, վոր ազգայնացման, տեղայնացման բնագավառում կուսակցության սկսած տեմպերը կասեցնելու փորձերը դալիս են ռուսական մեծապետականների և սոցիալական այն խավերի կողմից, վորոնք կանգնած են նրանց թիկունքում:

## ՄԵԾԱՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՄԵՂՄԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ԴԵՄ

Ընկերներ, յես անհրաժեշտ համարեցի բերել մի շարք որինակներ, վորոնք ցույց են տալիս, թե անհրաժեշտ է վոչ միայն չմեղմացնել, այլև ավելի ուժեղացնել պայքարը գլխավոր վտանգի դեմ ազգային հարցի բնագավառում— մեծապետական ռուսական շովինիզմի վտանգի դեմ:

Ցես այդ անհրաժեշտ համարեցի անել մասնավորապես և այն պատճառով, վոր մեզանում փորձեր են արվում մի կողմը թողնելու մեծապետական շովինիզմի հարցը վորպես գլխավոր վտանգի, և պետք է ասել, այդ փորձերը հաճախ չի կարելի ուղղակի և ակնհայտ կերպով մերկացնել, նրանցից մի քանիսը շատ քմահաճ ձևով վարագուրվում են:

Նման համեմատաբար խորամանկ մի թեորիա ստեղծել է ընկեր Պ. Իոնովը: Այս ընկերոջ բախտը չի բանում կուլտուրական հարցերի մշակման բնագավառում: Ժամանակին նա բուխարինյան դպրոցումն եր, ժխտում եր կուլտուրայի դասակարգայնությունը, քարոզում եր հասարակական-տնտեսական ֆորմացիաների կուլտուրայի թեորիան, 120 տոկոսային նվիրվածությամբ Բուխարինի հանդեպ նա աղաղակում եր դասակարգային պայքարի մահացման մասին և այլն, և այլն,: Իր ժամանակին մենք, նաև պատասխանեցինք նրան, բայց այդ դասը անոգուտ անցավ և ազգային հարցը քննելիս վերկառուցման շրջանի պայմաններում, Իոնովը հայտարարեց հետևյալը. «Եթե «ձախ» թեքումը մեծ մասամբ վոչ այլ ինչ է, բայց եթե մեծապետականության քողարկումը «ձախ» ֆրազներով, ապա աջ թեքումը սայթաքում է դեպի բացահայտ նացիոնալիզմը: «Ձախերի» համար ազգը և ազգային կուլտուրան անցյալն է, մոռացվածը: Աջերի համար ազգը և ազգային կուլտուրան, ընդհակառակը, վերջին և գերագույն ճշմարտությունն է» («Զարյա Վաստոկա», 14 դեկտեմբերի 1928 թ.):

Այսինքն, տեղական շովինիզմը աջ թեքում է, իսկ մեծապետականը՝ ձախ, իսկ վո՞րն է գլխավոր թեքումը— Աջ թեքումը: Նշանակում է գլխավոր վտանգը մեծապետական շովինիզմը չէ, այլ տեղականը: Սա մինչև ուղն ու ծուծը խարդախ դասակարգություն է: Այստեղ չկա այս կամ այն թեքման սոցիալական բազայի իրական բնորոշումը, այլ հիմար և յերևակայական խաղ նման բնորոշումների հետ, վորոնցհետև հենց այստեղ անտես են առնվում, թերագնահատվում են, սխալ են հասկանվում այն դասակարգային ուժերը, վորոնք կարող են կանգնած լինել թե այսպես կոչված ձախ և թե այսպես կոչված աջ թեքումների յետևը ազգային քաղաքականության բնագավառում: Իոնովը ընդհանրապես անկարող է ըմբռնել «գլխավոր վտանգ» տերմինի բովանդակությունը — չարունակ թվում է, վոր նա դատում է թվաբանորեն— այսինքն, հարվածների 70 տոկոսը գլխավոր վտանգին, 30 տոկոսը՝ «վոչ



գլխավորին»: Սա նույն խաղն է քաղաքականության հետ, անկողոքություն ըմբռնելու հարցադրումը ամբողջ Միության համար, անկարողություն կիրառելու այդ քաղաքականությունը յուրաքանչյուր առանձին ազգային հանրապետության վերաբերմամբ, անկարողություն ըմբռնելու այն, վոր կուսակցությունը գլխավոր հարվածը ուղղում է, յելնելով իրական դրության անալիզից:

Ցավ յեթե այսպես մոտենանք թեքումների հարցին, ապա լիովին հաստատվում է կուսակցության գծի ճշտությունը հիմնական հարվածը մեծապետական շովինիզմի, վորպես գլխավոր վտանգի, դեմ ուղղելու հարցում, վորն ամենևին չի նշանակում վորևե չափով թուլացնել պայքարը տեղական շովինիստների դեմ: Իոնովի դատողությունները որյեկտորեն մի փորձ են մեղմացնելու պայքարը ռուսական մեծապետականության դեմ, և բնականաբար նման փորձ պետք է հանդիպի վճռական հակահարվածի մեր վոստական ամբողջ կազմակերպության կողմից և առաջին հերթին իրենց՝ ռուս կոմունիստների կողմից: Պետք է ուղղակի ասել, վոր իդեոլոգիական ֆրոնտի զրական ճակատամասում մենք, ռուս կոմունիստներս, զրասնով շատ քիչ ենք զբաղվում, վորով հաճախ պժվարացրել ենք մեր ընկերների պայքարը մյուս հանրապետություններում իրենց տեղական շովինիզմի դեմ:

## ՏԵՂԱԿԱՆ ՇՈՎԻՆԻԶՄԸ ՑԵՎ ՆՐԱ ՇՓՈՒՄԸ «ՆԱՑԻՈՆԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ» ՀԵՏ

Տեղական շովինիզմը, վորը շատ հանախ ռեակցիա յե վելիկոռուսական շովինիզմի հանդեպ, այժմ տեղի ունեցող դասակարգային պայքարի պայմաններում, բացահայտ կերպով դիմակազերծ է լինում վորպես ուղղակի արտահայտություն դասակարգային թշնամու, վորը հատյին թշնամու ճնշման, այն դասակարգային թշնամու, վորը հատկապես և մասնավորապես հիանալի գիտե ոգտագործել իր շահերի համար սմեն տեսակի ռեակցիա (հակազդեցություն) ռուսական մեծապետականության դեմ: Պատահական չե, վոր կուսակցության գլխավոր գծից յեղած թեքումները դաշնակից հանրապետություններում գրեթե միշտ հյուսվում են ազգային քաղաքականության բնագավառում յեղած թեքումների հետ:

Վելիկոռուսական շովինիզմի մասին խոսելիս, մենք արդեն նշեցինք, վոր մեծապետական-կոմունիստական տրամադրությունները զոդվում են ոմենովեխական կամ հակահեղափոխական եմիգրանտի տրամադրությունների հետ: Ցերը խոսվում է տեղական շովինիզմի մասին, ապա այստեղ ևս պետք է արձանագրել, վոր նացիոնալիստական թեքումները մեր կուսակցության մեջ՝ ձեռք են մեկնում նացիոնալ-դեմոկրատական հակահեղափոխական կազմակերպությունների, և այնուհետև, արտասահմանի ազգային եմիգրացիային:

Դժբախտաբար, մեր մամուլը վորոշ ուշադրություն նվիրեցավ ռուսական եմիգրացիային, գրեթե բոլորովին չի զբաղվում վրացական, թուրքական և այլն եմիգրացիայով, մինչդեռ այդ

ազգային եմիգրացիայի վրա իմպերիալիստական յերկրները մեծ հույսեր են դնում ինտերվենցիայի պլանները պատրաստելիս։

Հիմնական հարցը, որ հատկանշում է «ազգային» եմիգրացիայի ամբողջ գործունեությունը — դա մերկապարանոց, միանգամայն կենդանաբանական նացիոնալիզմն է։ Ահա, օրինակ, ինչ են գրում վրացական եմիգրանտական «Տեարի Գեորգի» ժուրնալում ռուս ժողովրդի մասին—անխտիր ամբողջ ռուս ժողովրդի— «Ռուս ժողովուրդը յերբեք չի հասնելու քաղաքակրթության բարձրը ստրիճանին, նրա իդեալները ստամոքսից դենը չեն գնում։ Մերժկովսկին ռուսներին անվանում է հարբեցողներ, մարդասպաններ և վայրենիներ։ Նման ժողովուրդ չի կարող ունենալ մարդկությունը։ Հետագա համարներում մենք կապացուցենք, որ ռուս ժողովուրդը իրոք միանգամայն զուրկ է քաղաքակրթությունից, և յեթե ռուս ժողովրդի բարձր խավերը կարողացել են յուրացնել մարդկային բան, ապա այդ յեղել է միայն նմանվելու, ընդօրինակելու շնորհիվ»։ «Դուք զավակներ և ներկայացուցիչներն եր ազգորեն ընկած Վրաստանի այն մասի, որը ծախսում եր իր հայրենիքը ստրիճանների և ժապավենի, կամ ստրաժնիկի ուսապիրների փոխարեն, կամ թե խուլիգաններ՝ Գլեխանով-Զերնով-Լենինի մոքերի և ռուսական քաղաքական կուսակցությունների չահերի համար»։

Իրոք որ սա միանգամայն գաղանացած մարդկանց կենդանական նացիոնալիզմ է։ Բայց բոլորովին հայտնի չէ, որ նման դատողությունները իսկի բացառություն չեն։ Կարելի յե բերել անթիվ այդ կարգի օրինակներ վոչ միայն վրացական այլ և թուրքական, հայկական և այլ ազգային եմիգրացիաների թերթերից։ Որինակ թաթարական «Միլի-Ցոլ» ժուրնալում քարոզվում է պանթուրանական մեծ պետություն ստեղծելու համեստ գաղափարը, մի պետություն, որին պատկանելու յե ամբողջ Վոլգան, ամբողջ Ուրալը և ամբողջ Սիբիրը և որը բլոկ և կազմելու մի կողմից Միջին Ասիայի թուրքական հանրապետությունների, իսկ մյուս կողմից նրանց հետ միասին կողմնորոշվելու դեպի Թյուրքիան։ Այն ել ասենք, որ այդ ժուրնալում վոչ միայն հոդվածներ են տրվում այդ թեմայի մասին, այլ և նույնիսկ բանաստեղծություններ։

Այս տեսակետից վոչ մի ազգային եմիգրացիա հետ չի մնում մյուսից։ Կանգ առնենք միայն վոչ անհայտ Նոյ Ժորդանիայի դատողությունների վրա, որը յերկար տարիների ընթացքում գլխավորել և այժմ ել գլխավորում է վրացական մենշեվիզմը, մոմանց մեջ նույնիսկ վորոշ հարգանքի նման մի բան արթնացնելով։ Այ, տեսնում եք, ինչ գաղափարական մարդ է, այսքան տարի վարում է միևնույն գիծը, ի՞նչ տոկունություն և սկզբունքային համոզվածություն։ Սակայն, վերջերս պարզվեց, որ այդ հետևողական Նոյ Ժորդանիայի գործունեության մեջ յեղել են այնպիսի մոմենտներ, որ ինքը բնավ չեր ցանկանա լուսարանված տեսնել մամուլում։ Ցես նկատի ունիմ Նոյ Ժորդանիայի կապը ցարական ախրանկայի հետ։ Այս պատկառելի մարդու գիծն իր գաղափարական վերջնական լուծումը գտավ ցարական ախրանկայի հետ նրա ունեցած կապի մեջ։ Այս Ժորդանիան «Պրոմեթեյ» ժուրնալում—անդրկովկասյան եմիգրացիայի միացյալ որգանը— գրել է մի հոդված օբյեկտիվ պատմական, այսպես ասած գիտական-հետազոտական մի վերնագրով —«Մի էջ ռուսական պատմությունից»։ Ահա նրա պատմափիլիսոփայությունը. կար չկար Մոսկովյան Ռուսիա։ Այդ յերկիրը անկարգ եր, անկանոն, բավականին թափթրփված, և վորպեսզի կարգ-կանոնի մտնի, ժամանակին ստիպվեց կանչել վարյաղներին։ Հետո յերեվաց Պետրոս I-ը և վորպես յեվրոպացիների գործակալ, փորձեց յեվրոպականացնել Պետերբուրգը։ Պետերբուրգը հակադրված ամբողջ Մոսկովյան Ռուսիային։ Հեռատեվյալ թվականը հոկտեմբերյան հեղափոխությունն է։ Հոկտեմբերյան հեղափոխությունը Մոսկովյան Ռուսիայի ապստամբությունն եր Պետերբուրգի դեմ։ Այսինքն՝ Հոկտեմբերը վոչ այլ ինչ է, բայց յեթե հին Մոսկովյան Ռուսիայի վրեժը, ռուս ժողովրդին խորթ յեվրոպականության լծի թոթափումը, այն անարխիայի հաղթանակը, որին իրեն ձգտում է նույն ռուս ժողովուրդը, որի բնությունը մենք արդեն ծանոթացանք վրացական փաստաթղթերի ժուրնալից։

Ժորդանիան գրում է. «Մյուս Ռուսաստանը ոգտվում է դրանից Հոկտեմբերին ապստամբելու համար։ Պատմական մենամարտը ավարտվում է Յեվրոպայի պաշտպանությամբ իր պետերբուրգյան տը ավարտվում է Յեվրոպայի պաշտպանությամբ իր պետերբուրգյան աշխատանքով միասին, և Մոսկովյան Ռուսիայի վերամբողջ կանգնումով՝ իր քաղաքական և տնտեսական բռնությամբ։ Ռուսական հասարակություն, որպես ակտիվ քաղաքական ուժ, կազմակերպված և ընդունակ ինքն իրեն կառավարելու, այլևս գոյություն չունի»։

Ցեղրակացությունը պարզ է։ Մոսկովյան Ռուսիայի պատմության սկզբում կային վարյաղներ, այժմ ել պահանջվում են վարյաղներ, վորպեսզի այդ լայնածավալ, հարուստ և անկարգ յերկրում ստեղծվի համապատասխան յեվրոպական ռեժիմ։ Պարզ է, վոր այս պատմափիլիսոփայությունը վոչ այլ ինչ է, բայց յեթե ինտերվենցիայի պատմափիլիսոփայություն, ինտերվենցիան իրոք գեոլոգիական արդարացնելու պատրաստություն, ուշադրի քարոզ ինտերվենցիայի անհրաժեշտության մասին։

Ամբողջ «ազգային» եմիգրացիան, այդ թվում և վրացական մենշեվիզմը, ապրում և հենց ինտերվենցիա պատրաստող ռազմական կազմակերպությունների աված վոգորմությամբ։ Ցեվ պատահական չէ, վոր արևմտա-յեվրոպական կապիտալիստական մամուլի այն մասը, որը հանդիսանում է ինտերվենցիա պատրաստող իմպերիալիստական ռազմական շրջանների գործակալությունը, մեծ ուշադրություն և նվիրում ազգային հարցին մեզանում՝ Խորհրդային Միության մեջ, իհարկե լուրերի նվաճումները այդ բնագավառում, և ուռճացնելով ամենաչնչին թերությունները կամ բացերը այս կամ այն պաշտոնից հանրապետության մեջ։

Ամենովեխականությունը միայն ռուսական յերևույթ չե, յուրահատուկ ձևով ամենովեխականությունը տեղի յե ունեցել Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետություններում: Ցեվ այն հանրապետություններում, վորոնք առաջ ցարիզմի կողմից այս կամ այն չափով ճնշված են յեղել, այնտեղ ամենովեխականությունը կրել ե բացահայտ նացիոնալիստական բնույթ, յենթադրելով, վոր կարելի կլինի ոգտագործել խորհրդային իշխանությունը տվյալ հանրապետության մեջ՝ տվյալ ազգի ազգային-դեմոկրատական բուրժուական զարգացման համար:

Ճիշտ այնպես, ինչպես պրոֆեսոր Ուստրյալովը հույս ուներ, վոր խոսելով ինտերնացիոնալիզմի մասին, բայշևիզմը կկատարի մի և անբաժան Ռուսաստանի համախմբման և պահպանման ֆունկցիան, նույնպես ել ուկրայինական, բելոռուսական և այլ Ուստրյալովները հույսը դրել եյին խորհրդային իշխանության ստիհանական վերաբերման, ինտերնացիոնալ մերձեցման քաղաքականությունից դանդաղ, բայց հաստատ կերպով հեռանալու նացիոնալիստական ինտելիգենցիայի պետական նշանակության անշեղ աճման վրա: Ցեվ այնպես, ինչպես սոցիալիստական շինարարության ծավալումը մեր յերկրում, կապիտալիզմի արմատները ջնջելու և կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությունը մղեցին վոչ միայն արդյունաբերական կուսակցությանը, այլ և մենշեվիկներին, դեպի ինտերվենցիայի պատրաստության ուղին, նույնպես ել ազգային սմենովեխականությունը արագ անցավ նացիոնալ-դեմոկրատիզմից դեպի բացահայտ նացիոնալ-ֆաշիզմ տանող ուղին՝ ափաշկաբա ծառայելու խորհրդային Միության դեմ պատրաստվող ինտերվենցիայի շահերին, միանգամայն մերկացնելով իր սոցիալական ծրագրի բուրժուա-կուլակային եությունը:

Զուր չեր վերջերս մենք բաց արինք այնպիսի կազմակերպություն, ինչպես ՍՎՈՒ-ն Ուկրաինայում, ինչպես մի շարք նախկին բելոռուսական մինիստրների խմբավորումը, ինչպես սուլթան-գալիյեվչինան Թաթարիայում և այլ նման տիպի խմբակցություններ գրեթե բոլոր դաշնակից հանրապետությունների մեջ:

Պետք ե նշել, վոր գրեթե ամեն տեղ այդ հակահեղափոխական նացիոնալիստական կազմակերպություններն ունեցել են իրենց ագենտուրան մեր կուսակցության շարքերում, իսկ սուլթան-գալիյեվչինան, որինակ, գրեթե ամբողջովին բաղկացած եր կոմսոմոլներից:

Տարբեր հանրապետություններ, տարբեր պայմաններ, զարգացման յուրահատուկ պատմական ուղիներ—բայց ամենուրեք նույն դաղափարները, նույն դրույթները, միևնույն քաղաքականությունը: Սոցիոլոգիական որինաչափությունը դրսևորվում և բացատրվում հրամայականությամբ և նույնիսկ ուղղակի որինակների հետևողականությամբ:



Վերցրեք այդ բոլոր նացիոնալ-դեմոկրատական խմբակցությունների և կազմակերպությունների իդեոլոգիան: Նրանց բոլորին միացնում ե իրենց ազգի զարգացման բուրժուական ուղիի համար մղվող պայքարը, դասակարգային շերտավորումը ժխտելու ֆոդի տակ, ասելով, թե մեր ժողովուրդը միասնական ե, մեր ժողովուրդը բաժանված չե դասակարգերի, մեզանում դասակարգային պայքար չկա, թե մեր ազգային ինֆեռնատիպուրյուր կայանում ե հենց նրանում, վոր մենք հարմարեցված չենք վոչ մի սոցիալիզմի:

Ահա, որինակ, շատ ժամանակ չի անցել այն որից, յերբ Վրաստանում մի շատ պատասխանատու ժողովում գրող Գամսախուրդիան հայտարարում եր հետևյալը. «Ո՞ւր ե մեզ մոտ բուրժուազիան: Մեղանում շատ-շատ յեղել ե մեկուկես սպեկուլյանտ և բուրժուա: Դուք խլեցիք նրանց դույքը, մի քանիսը դարձրիք բանվորական պալատներ, մի մասը դաղթեց, ուրիշները հանդչում են դերեզմանոցներում: Հարց ե ծագում, ո՞ւմն ենք մենք պաշտպանում և ինչով ե արտահայտվում այդ պաշտպանությունը»: Այստեղ հետաքրքրականը միայն այն չե, վոր մարդը ժխտում ե դասակարգային շերտավորումը Վրաստանի անցյալ ամբողջ պատմության հետևանքով, հետաքրքիրն այն ե, վոր նա փորձում ե դրանից յեզրակացություններ հանել դրականության նկատմամբ: Նա ասում ե, մեղանում բուրժուազիա չի յեղել, յեղածն ել դուք լիկվիդացիայի յենթարկել, ուրեմն վորտե՞ղից ե բուրժուական ազդեցությունը դրականության վրա, վորտեղի՞ց կարող են լինել բուրժուական դրողներ: Բուրժուական դրողներ չկան, մենք բոլորս սոսկ վրացական դրողներ ենք:

Ցես չեմ կասկածում, վոր գրեթե յուրաքանչյուր դաշնակից հանրապետության մեջ հեշտ ե գտնել այդպիսի Գամսախուրդիա, և անշուշտ նրա ճառերը նույնքան միակերպ, նույնքան տարտակա-ի, նույնքան անիմաստ կլինեն, վորքան վրացական Գամսախուրդիայի յելույթը:

Կամ վերցրեք որինակ վոմն Գանչինի մի գրքույկը «Հեղափոխության որերը» վերնագրով: Այդ Գանչինը, յեթե չեմ սխալվում՝ կուսակցության անդամ, կապ ե ունեցել սուլթան-գալիյեվչինայի հետ: Գրքույկը լույս ե տեսել Հոկտեմբերյան հեղափոխության տասնամյակի առթիվ: Այնտեղ Գանչինը գրում ե նախկին Ուֆիմի նահանգի դասակարգային շերտավորման մասին: Ի՞նչ ե ասում Գանչինը: Ամբողջ թաթար-բաշկիր գյուղացիությունը անխտիր դուրս ե բերում վորպես չքավորներ և միջակներ, իսկ կուլակությունը բաղկացած ե գերմանացիներից, լատիշներից, ուկրայինացիներից և ռուսներից: Նույն միտքն ե—մենք միաձույլ ազգություն ենք, մեղանում դասակարգային շերտավորում չկա, իսկ յեթե յեղել են ինչվոր բուրժուաներ կամ կուլակներ, ապա դրանք ուրիշ ազգերից եյին, վորոնք փորձում եյին իշխել մեզ վրա:

Մի՞թե նույն բնույթը չե՞ն կրում ուկրայինական ակադեմիկոս Ցեֆրեմովի բոլոր դրույթները:

Մի՞թե նույնը չե՞ն քարոզում Բելոռուսական բոլոր նացիոնալ-դեմոկրատները, սվաղելով Բելոռուսիայի պատմական պրոցեսի դասակարգային էությունը, իդեալականացնելով բելոռուսական Փեռդալիզմը, խանութպանի և կուլակի մանր բուրժուական իդեալները ներկայացնելով վորպես բելոռուսական ժողովրդի ինքնատիպություն:

Նացիոնալ-դեմոկրատական բոլոր խմբավորումների մեջ այս ամենի հետ անխզելի կապված է իր ազգի մեսիանականության գաղափարը և, հետո, նրա ինֆանտիլության չափազանցումը: Վերցրեք որինակ բոլոր հայկական նացիոնալիստների դատողությունները: Նրանք փորձում են հայ ազգը ներկայացնել վորպես արևմտյան քաղաքակրթության միակ արտահայտիչը Արևելքում, վորպես մի մեսիա, վոր ուղի է ցույց տալիս Արևելքի բոլոր ժողովուրդներին: Իսկ մի՞թե հայանի չե՞, թե ինչ տեղ ե գրավում ուկրայինական ազգի մեսիականության գաղափարը Սվու-ի բոլոր թեորետիկների և պրակտիկների դրույթներում: Մի՞թե հայանի չե՞, վոր ուկրայինական մեսիանիզմի տրամադրությունները առանձնապես ցայտուն կերպով արտահայտվեցին մասնավորապես Խվիլովոյի դատողությունների մեջ, վորի մասին մենք մանրամասն կխոսենք հետո, վորի մոտ նացիոնալիստական այդ թեորիան քողարկված ե կոմունիստական ֆրազեոլոգիայով:

Իդեոլոգիական այս բոլոր ճոճոցներն ինքնատիպության և մեսիականության մասին՝ ծառայում եյին միայն պատրաստելու և արդարացնելու յերեսը դեպի կապիտալիստական յերկրները դարձնելու գործը: Հայանի չե՞ մի՞թե, վոր ՍՎՈՒ-ն*) յերեսը շուռ ե տվել դեպի Լեհաստանի իմպերիալիստական ամենահոռի տարրերը: Մի՞թե՞ բելոռուսական նացիոնալ-դեմոկրատները մի քայլ անգամ հետ եյին մնում ՍՎՈՒ-ից: Այս տեսակետից առանձնապես հետաքրքրական և բելոռուսական նացիոնալ-դեմոկրատների փորձը: Նրանք իրենց ներկայացնում եյին վորպես բելոռուսական յերկվյալ հայրենասերներ, մարդիկ, վորոնց արդյունքն շահը գերիվեր է ամեն բանից, մարդիկ, վորոնք պատրաստ են կրծոտելու նրանց կոկորդը, վորոնք կփորձեն սպառնալ Բելոռուսիայի իքնուրույնությանը: Իսկ իրականում դուրս յեկան Պիլսուդսկու հավատարիմ ծառաներ: Հիշեցեք, ինչպես եյին դովերդում նրան, յերբ լեհական բանակը գրավեց Մինսկը: Հիշեցեք Լաստովսկու, Զարժինսկու, Նեկրաշեվիչի, Լեսիկի և այլոց այդ վողորմելի խմբակի ամբողջ գործը: Պարզ է, վոր նրանց ամբողջ վարմունքը, նրանց տակտիկայի ամենափոքր մանրամասնությունները, նրանց ձևակերպումների բոլոր յերանգները վորոշվում եյին Լեհաստանի ռազմական շրջանների ընթացքով և շահերով, այն Լեհաստանի, վորը ցանկանում ե լինել սոցիալիզմ կառուցող յերկրների դեմ իմպերիալիստական ինտերվենցիայի գլխավոր գենքը:

*) Սվու—«Ուկրայինայի պատմության միություն» հակահեղափոխական կազմակերպությունը. Ծ. Ք.:



Այս որիենտացիան դեպի կապիտալիստական յերկրները՝ վերին աստիճանի ակնբախ կերպով արտահայտվել է նաև կուլտուրական աշխատանքի բնագավառում, վորով զերազանցապես զբաղվել են նացիոնալ-դեմոկրատական բոլոր խմբավորումները:

Վերցնենք, որինակ, դարձյալ բելոռուսական նացիոնալ-դեմոկրատների աշխատանքը լեզվի բնագավառում: Իրենք՝ Լեսիկը և Զարժինսկին խոստովանել են, վոր բելոռուսական լեզվի բնագավառում կատարած ակադեմիական աշխատանքում նրանք ունեցել են մի նպատակ—պայքարել ռուսաբանությունների դեմ, ամեն կերպ պաշտպանել և խրախուսել լեհաբանությունները, պնդելով, թե բելոռուսական կուլտուրային սպառնում է Մոսկվան և վոչ Լեհաստանը: Ցեվ բելոռուսական այդ նացիոնալ-դեմոկրատներն այլանդակում եյին բելոռուսական լեզուն լեհերենի ազդեցությունն ապահովելու համար: Մի չարք հանրապետություններում տարածված՝ յերկու կուլտուրաների—ռուսական կուլտուրայի և տեղական կուլտուրայի պայքարի թեորիայի իմաստն այստեղ մեկնաբանվում եր, մի թեորիա, վոր փորձում եյին ձևակերպել նացիոնալ-դեմոկրատները, այն ինչ իրականում այդ պայքարը պրոլետարական կուլտուրայի և վոչ թե ազգային, այլ ազգայնական, աշխարհական կուլտուրայի պայքարն է: Այստեղ հենց տիպն բուրժուական կուլտուրայի իրական իմաստը, մի թեորիա, մեկնաբանվում եր այդ թեորիայի իրական իմաստը և որիենտացիան դեպի հարևան վոր հիմնավորում և հաստատում է նացիոնալ-դեմոկրատական յերկրները, հակառակ բոլոր ժողովուրդների միության և հետագա մերձեցման:

Ազգային կուլտուրայի հարցերում բոլոր նացիոնալ-դեմոկրատական խմբավորումները, ավելի ճիշտ կլինի ասել նացիոնալ-ֆաշիստական խմբավորումները և հոսանքներն ունեցել են նույն ընդհանուր գիծը—պայքարել ազգային կուլտուրայի բուրժուական նացիոնալիստական զարգացման համար: Իրենց անցյալի իդեալականացումը, իրենց ազգի վոսկեդարի ռոմանտիկական ստեղծումը, կանացումը, իրենց ազգի վոսկեդարի ռոմանտիկական ստեղծումը, ազգային հերոսների արհեստական ֆաբրիկացիան և նրանց պաշտամունքի ստեղծումը, իրենց ազգի ինքնատիպությունը լիակատար առանձնացման և ուրույնացման վերածելը—այս ամենը հավասարապես բնորոշ է թե՛ ուկրայինական, թե՛ բելոռուսական, թե՛ վրացական, թե՛ հայկական, թե թուրքական նացիոնալիստների համար: Նրանց այս թեորիաների նույնությունը հենց ապացուցում է, վոր նրանք չափազանցնում են իրենց ինքնատիպությունը:

Ահա՛ մի այլ ռազմ, վոր միացնում ե նրանց բոլոր թեորիաները: Այն է՝ Հոկտեմբերյան հեղափոխականության նշանակության ժխտումն ազգային կուլտուրայի զարգացման համար և մեր աշխատանքի, պրոլետարական հեղափոխության աշխատանքի սկիզբը նախահեղափոխական նացիոնալ-դեմոկրատական հոսանքների հետ կապելու փորձերը: Վերցրեք Ուղբեկստանը: Այնտեղ բազմաթիվ փորձեր են յեղել ուղբեկ պրոլետարական կուլտուրա ստեղծելու մեջ աշխատանքը, խորհրդային իշխանության ազգային-կուլտուրա-

բակոն ամբողջ աշխատանքն Ուզբեկստանում համարել արդյունք վոչ թե Հոկտեմբերյան հեղափոխության, վոչ թե ամբողջ բանվոր դասակարգի միջազգային փորձի, վոչ թե բայշևիզմի ինտերնացիոնալ գաղափարների, վոչ թե, ինչպես Լենինն է ասում, դեմոկրատական կուլտուրայի տարրերի, ի հակակշիռ անցյալում իշխող բուրժուական կուլտուրայի, այլ շարունակություն ջադիդիզմի-բուրժուական-լիբերալ ուղղակի ինտելիգենցիայի այդ հոսանքի: Նույնն է ասում նաև բելոռուսական փորձը: Բելոռուսական նացիոնալ-դեմոկրատները նույնպես փորձում էին ուղղակի հաղորդականություն հաստատել մեր ամբողջ աշխատանքի և «ճնաշնիստվոյի», կուլակային բուրժուական ինտելիգենցիայի այդ հոսանքի միջև: Այսպիսով Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանց համար դառնում էր վոչ թե ավյալ ազգի ազատ զարգացման յելակետ, վոչ թե նրա ազգային-կուլտուրական զարգացման մեջ պրոլետարական կուլտուրայի հաղթանակի համար մղված պայքարի սկիզբ, այլ ավելի կամ պակաս կարևոր եպիզոդներից մեկը, վորը համենայն դեպս վորոշիչ չի յեղել և ունեցել է անցողիկ նշանակություն:

Այս հարյուրտոկոսանի հայրենասերները արդեն բավականաչափ մերկացվել են: Նրանք մերկացված են նախ վորպես իմպերիալիզմի ագենտներ, վորպես իրենց յերկրի ազատ զարգացման կողմնակիցներ, ԽՍՀՄ-ից բաժանվելու պրոպագանդիստներ, մարդիկ, վորոնք նախընտրում են իրենց ժողովուրդը կապիտալիստների ստրուկը դարձնել, ազգային ճնշման յենթարկվել, միայն թե հույս յենի կապիտալիստական զարգացման և բուրժուական դիալեկտիկայի: Նրանք մերկացված են, յերկրորդ, վորպես մարդիկ, վորոնք միշտ և ուղած ժամանակ պատրաստ են դաշինք կոել ռուսական սև հարյուրակայինների հետ, ռուսական մեծապետականների հետ, ռուսական շովինիստների հետ, միայն թե հնարավոր լինի ապահովել զարգացման բուրժուական ուղին՝ հակառուսական սոցիալիստական ուղու:

Հայտնի չե՞ մի թե, ինչ դիրք էր բռնում Յեվրեմովը ուկրաինական Գիտությունների ակադեմիայի ընտրությունների ժամանակ: Ի՞նչ անարատ և մարտնչող հայրենասեր է, ասում է այնինչ նա բլոկ էր կազմել ռուսական սև հարյուրակայինների հետ, վորպեսզի տապալի ուկրաինական կոմունիստ դիտնականներին Ակադեմիայի ընտրության ժամանակ: Մի թե հայտնի չէ բելոռուսական նացիոնալ-դեմոկրատների բլոկը կանդրատյևականների և արդյունաբերական կուսակցության հետ, վորոնք ամենավին տրամադիր չեն յերաշխավորելու Բելոռուսիայի ազատ ինքնուրույն զարգացումը հետագայում: Մի թե հայտնի չե՞, վոր ուկրաինացի ֆաշիստական պոետ Մալանյուկը հիսացական մի պոեմ է գրել Գումիլյովի—պոեզիայի ասպարիզում ռուսական բուրժուազիայի իմպերիալիստական ձգտումների ամենախոշոր և ակնառավոր ներկայացուցչի մասին: Մի թե հայտնի չէ, վոր այդ



պոեմը ապվել է մի ժուրնալում, վոր խմբագրում էր ուկրաինական նացիոնալ-ֆաշիզմի գլխավոր իդեոլոգ Դոնցովը:

Դասակարգային պայքարի շահերը իրենց են յենթարկում ամեն ինչ: Տվյալ ազգի մեսիանականության մասին յեղած խանդավառ շառաչոտությունը, և նացիոնալիստական նման այլ աբսուրդությունները դեն են շպրտվում, հենց վոր խոսքը գալիս է բուրժուական-կուլակային տարրերի ուսալ-կենսական շահերին: Պրոլետարական հեղափոխության դեմ պայքարելու շահերը վորոշում են ամեն ինչ և ամեն բան նացիոնալ-դեմոկրատների համար: Ինքնաբիոությունը ( самобытность ) պաշտպանում և հիմնավորվում է այն չափով, վորչափով կարելի յե նրան հակադրել սոցիալիստական շինարարությանը: Միշտ այդպես է լինում—իրենց ժողովուրդների անկախության այդ ինքնակոչ մարտիկները իրականում դուրս են գալիս իրենց ժողովուրդների ազատ զարգացման գործի դավաճաններ: Վորովհետև միայն պրոլետարական հեղափոխությունը կարող է յերաշխավորել և արդեն յերաշխավորել է առաջներում նշված բոլոր ժողովուրդների և յերկրների իսկական անկախությունը: Այսպես, նացիոնալ-դեմոկրատական այդ ինքնակոչ հայրենասերները հանդես են գալիս վորպես իրենց ժողովուրդների ազատ զարգացման դավաճաններ, պայքարելով խորհրդային իշխանության տապալման և իմպերիալիստական ինտերվենցիայի հաղթանակի համար:

Ուստի պարզ է, վոր զարմանալու վոչինչ չկա, յերբ տեսնում է, վոր նացիոնալ-դեմոկրատական այդ խմբավորումները սերտ կապերով կապված են նացիոնալիստական եմիգրատիայի հետ, շատ հաճախ աշխատելով նրա անմիջական դիրեկտիվներով: Այստեղ, իհարկե, արտակարգ վոչինչ չկա: Հեռաբրքրականն այն է, վոր այդ բոլոր խմբավորումները և կազմակերպությունները, վոր այդ բոլոր խմբավորումները և կազմակերպությունները համաձայնեցնել են կամ փորձել են համաձայնեցնել այս կամ այն խորհրդային և կուսակցական աշխատողների շրջանում յեղած նացիոնալիստական թեքումներին: Կան բազմաթիվ դեպքեր, վորոնք վկայում են, վոր մեր շարքերում յեղած նացիոնալիստական թեքումները վոչ միայն գաղափարական մոտիկություն են ունեցել և յուրահատուկ քաղաքական բլոկ կազմել նացիոնալ-դեմոկրատական, այսինքն բուն եյության նացիոնալ-ֆաշիստական կազմակերպությունների հետ, այլ յերբեմն մեր շարքերում մտաք և գործել այդ նացիոնալ-ֆաշիզմի անմիջական ագենտության:

Ընկ. Նաումովը Կոմակադեմիայում զեկուցելիս սուլթան-գալիյևչինայի մասին, մեջ բերեց Սուլթան-Գալիյևի խոստովանությունը այժմ արտասահմանում գտնվող թուրք բուրժուական նացիոնալիստ Վալիդովի հետ: Այս փաստը պարզվել և վերջերս: Վալիդովը ուղղակի ասել է Սուլթան-Գալիյևին, յերբ վերջինս նրանից դիրեկտիվներ էր խնդրել իր հետագա գործունեության վերաբերյալ,—Դու մի քիչ շատպել ես բայշևիկների կարմն անդ-

նելով, դեռ ամեն ինչ կորած չէր, այդ քայլը պետք էր անել միայն ամենավերջին մոմենտին: Սոցիալ-Դեմոկրատիան դասակարգային թշնամու անմիջական ագենտն է—կան և այդպիսիք:

Բայց կան և այդպիսիները, որոնք սուբյեկտիվորեն վատ չեն, մարդիկ, որոնք դասակարգային թշնամու անմիջական գործակալները չեն, մարդիկ, որոնք ցանկանում են մնալ կոմունիստներ, սակայն օբյեկտիվորեն, իրականում զոհվում են նացիոնալիստական, հակահեղափոխական տարրերի հետ: Այս տեսակետից չի կարելի ավելի լավ օրինակ գտնել, քան Խվիլովոյի պատմությունը Ուկրայինայում: Կարի՞ք կա հիշատակելու Խվիլովոյի թեորիայի մասին...(Ձայներ. կա, խնդրում ենք):

Ցեռ կանգ կառնեմ լոկ մի քանի մոմենտների վրա: «Կեցցե՛ Ցեվրոպան, հեռո՛ւ Մոսկվայից»—այս է նրա կենտրոնական դրույթը: Խվիլովոյը հարց է տալիս իրեն. Ահա մեր ուկրայինական գրականությունը տեսում է ռեմոնտ իր զարգացման սեփական ուղիով, դեպի համաշխարհային գրականություններից ո՞ր մեկը նա պետք է բռնի իր ընտրությունը: Եվ Խվիլովոյը պատասխանում է. «Համենայն դեպս ոչ դեպի ռուսականը: Այս վտանգավոր է առանց վերապահումների: Զգեցք է չփոթել մեր քաղաքական դաշինքը գրականության հետ: Ռուսական գրականությունից, նրա վոճերից ուկրայինական պոեզիան պետք է խուսափի ամեն տեսակ. պրոլետարիատի դաշտափարները առանց Մոսկվայի դեկավարության ել ծանոթ են մեզ: Ընդհակառակը, այդ դաշտափարները, մենք, որպես յերիտասարդ ազգի ներկայացուցիչներ, ավելի շատ կզգանք, ավելի արագ կմարմնացնենք համապատասխան պատկերներով: Մեր օրինակացիան դեպի արևմտա-յեվրոպական արվեստն է, նրա ասիլը, նրա պրյոմները»:

Այստեղ ամենից առաջ աչքի է խփում քաղաքական դաշինքը գրականության հետ չշփոթելու պահանջը: Ի՞նչ է սա—կուլտուրան քաղաքականությունից խլելու դեռևիկ ցանկությո՞ւն: Այդ էլ կա: Ցեվ այդ կապված է, ինչպես, ուկրայինական ժողովրդի ինքնատիպությունը չափազանցելու և նրա մշտականության դաղափարի հետ, ինչ վոր պարզ յերևում է այն դատողությունից, թե Ուկրայինան յերիտասարդ ազգ է, ավելի շատ կզգա և ավելի խոր կարտահայտի պրոլետարիատի դաղափարները, քան մոսկովյան արվեստը: Իմաստ չունի քննադատել ընդհանրապես մոսկովյան արվեստի և ընդհանրապես արևմտա-յեվրոպական արվեստի հարցադրումը, առանց դասակարգային բնորոշման, առանց վորոշելու նրանց զարգացման ետապները, առանց կարողանալու քննադատորեն ընտրել մեկը և նետել մյուսը: Բայց ըստ եությունի Խվիլովոյի այդ դատողությունների մեջ հենց թաղնված է մեծագույն թերահավատություն ուկրայինական գրականության զարգացման հնարավորության նկատմամբ,—կարծես թե ավյալ գրականությունը զարգանում է միայն կուրսը բռնելով դեպի վորևե մի այլ գրականություն, կարծես թե այդ կոդմնորոշումը վճռում է ամեն ինչ,



կարծես թե եյականը սոցիալական միջավայրը չէ, վորը ձևավորում է այդ գրականությունը, կարծես թե եյականը նրա գաղափարական դրույթները չեն, այլ օրիենտացիան դեպի Մոսկվա, կամ դեպի Արևմտյան Յեվրոպա: Ինքը՝ Խվիլովոյը հայտարարել է. «Դուք հարցնում եք, վո՞ր Ցեվրոպան: Վերցրեք վո՛ր ուղղությունը—անցյալը, ներկան, բուրժուականը, պրոլետարականը, հավիտյան փոփոխվող Ցեվրոպան»: Այս դատողությամբ Խվիլովոյը արդեն լիովին պարզաբանում է Մոսկվան և արևմտա-յեվրոպական դեկավարությունն իրար հակադրելու դասակարգային իմաստը: Ցեվ վորքան ավելի յե խոսում Խվիլովոյը անխտիր վորևե Ցեվրոպայի մասին, նույնքան ավելի յե պարզվում նրա ձգտումը կոմունիստական դեպի բուրժուական կուլտուրան, ընդդեմ պրոլետարական կուլտուրայի:

Հետաքրքիրն այն է, վոր Խվիլովոյի յեվրոպական օրիենտացիան տարօրինակ կերպով զուգորդվում և հյուսվում էր Արևմուտքի չափազանց պեսիմիստական գնահատման և ասիական ռենեսանսի համակնոտ և կիսադրական ուսմունքի հետ: Խվիլովոյը գրում էր. «Արևմտյան հասարակությունը բնականաբար գնում է դեպի հոգեկան անկարողության վիճակը: Ստեղծագործական ներդիան սպառված է, նա բավական էր միայն յերկու դարաշրջանի համար. շատ դարեր կանցնեն, յերբ Ցեվրոպան նորից կսկսի փայլուն պատմություն»:

«Ցերկրի մեծ ճշմարտությունը,—արևը ծագում է Արևելքում»—պատեհիկ կերպով բացականչում էր Խվիլովոյը, արտահայտելով իր անկարողությունը հաղթահարելու ամենատարբերական բուրժուական կոնցեպցիաները Արևմուտքի և Արևելքի մասին, վորպես այդպիսիների—Արևմուտքը և Արևելքը իրար հակադրված: Բայց, Խվիլովոյը վոչ միայն Արևելքն էր հակադրում Արևմուտքին: Վոչ, կործանվող Արևմուտքին Խվիլովոյը հակադրում էր Ուկրայինայի մեսիանական դերը «ի՞նչ գործ ունի այստեղ Ուկրայինան: Ա՛յն, վոր Ասիայի վերածնունդը նույնպես տեղ Ուկրայինան: Ա՛յն, վոր բայշևիզմի հոգեկան կուլտուրան կապված է բայշևիզմի հետ, ա՛յն, վոր բայշևիզմի հոգեկան կուլտուրան կարող է պայծառորեն դրսևորվել միայն յերիտասարդ խորհրդային հանրապետությունների մեջ և առաջին հերթին կոմունիստների հարավ-արևելյան հանրապետության կապույտ յերկնքի տակ, այն հանրապետության, վորը միշտ յեղել է քաղաքական հոսքերի ասպարեզ, և վորը իր ամբոստ տափաստաններում դաստիարակել է հեղափոխական կոնկիստադորի տիպը»:

Ինքը, Խվիլովոյը վորոշ ժամանակ անց այսպես է բնորոշում իր թեզման եությունը.— «Խվիլիվիզմը—դա Ու ԿԿ(բ) դեմ պայքարելու թեորիան է, վորը ստեղծված է ուկրայինական մարտնչող ֆաշիզմի իդեոլոգիայի ճնշման տակ, ուկրայինական բուրժուազիայի ուրբանականացած այն մասի իդեոլոգիայի ճնշման տակ, վորը յերազում է Ուկրայինան դարձնել իմպերիալիստական մեծ պետություն»:

Հիմնական ճիշտ է ասված, թեև այս ձևակերպման մեջ բացակայում է ուկրայինական կուլտուրը, որը եյական կապ ուներ նացիոնալիստական այն թեզման ձևակերպման հետ, որ գոյություն ուներ ՈՒԿԿ (բ) մեջ «խվիլիովիզմի»կամ «չոմսկիզմի» ձևով: Բայց չնայած, որ նույնիսկ ինքը՝ Խվիլովոյը հրապարակային խիստ քննադատության ենթարկել իր անցյալ սխալները, մենք բիչ բան ենք արել խվիլիովիզմի դեմ մղված պայքարի փորձը մեր համամիութենական պրոլետարական գրական շարժման սեփականությունը դարձնելու համար:

Վերցրեք Դոնցովի հոդվածները և յելույթները, համեմատեցեք Խվիլովոյի հոդվածների և յելույթների հետ—շատ հանգամանք զանազանություն չեք գտնի: Նացիոնալիստական թեզման և նացիոնալիստական հակահեղափոխության չփումն ակներև է, և ուրիշ կերպ չեր կարող լինել—դասակարգային սուր պայքարի պայմաններից և բղխում այդ:

Նման դեպքերում բավական չե լոկ նացիոնալիզմին հակադրել ինտերնացիոնալիզմը: Վոչ, պետք է անպայման դրսեվորել այս կամ այն նացիոնալիստական թեզման սոցիալական բովանդակությունը, դնելով լենինյան հարցը—«կուլ պրոդեստ»—ո՞ւմն և ձեռքնում: Այստեղ մեղանից պահանջվում է և՛ մեծագույն զգուշություն, և՛ մեծագույն գաղափարական անհաչություն, որոնք չեն հակասում իրար: Նացիոնալիստական թեզումների կամ նացիոնալիստական տրամադրությունների ամեն մի արտահայտության դեպքում մենք պարտավոր ենք վոչ միայն հայտարերել և ցույց տալ, թե դեպի ուր են տանում այդ թեզումները և տրամադրությունները, այլ և վո՞ր տեղից են առաջանում, ի՞նչն է նպաստում նրանց առաջացմանը, արդյոք մեզանում չկա՞ վորևե մի բան, որ դեր է խաղում այստեղ,—զանազանելով պրոլետարական դիկտատուրայի դեմ մղվող բուրժուական պայքարը և դասակարգային թշնամիների խռովարար ագենտուրան, այն ընկերներից, որոնք սխալվել են կամ մոլորվել, բայց որոնք դուցե արտահայտում են ռուսական մեծապետականության հանդեպ առաջացած հակազդեցությունը: Չպետք է բնավ արդարացնել նույնպես այս կարգի ծագում ունեցող նացիոնալիստական սխալները—կայուն բայլշևիկը կկարողանա բայլշևիկորեն, ինտերնացիոնալիստորեն, պրոլետարականորեն հակազդել ռուսական մեծապետականության արտահայտություններին: Նման սխալները արդարացնելու մասին չենք խոսում: Խոսքը վերաբերում է նրան, որ պետք է անհաշտ պայքար մղել այդ սխալների դեմ, միաժամանակ մեր կողմը դրավելով այդ բոլոր տատանվողներին, որոնք կարող են ոգտակար լինել սոցիալիստական շինարարության գործին:

Ազգային կուլտուրայի բնագավառում առանձնապես արտահայտվում են նացիոնալիստական ազդեցությունները: Հենց այստեղ դասակարգային թշնամին փորձել է հաճախ վոչ միայն պաշտպանել իր գրված դիրքերը, այլև նույնիսկ հարձակվել, դիմելով



դիմակավորման, գունավորման, միմեկրիայի և մանյովրների բազմազան ձևերի:

Սոցիալիստական հարձակման ծավալումը չեր կարող չակտիվացնել մեր աշխատանքները բոլոր ազգային հանրապետությունների մեջ, արվեստի ամբողջ ֆրոնտի վրա—և՛ գրականության, և՛ յերաժշտության, և՛ թատրոնի, և՛ նկարչության, և՛ նույնիսկ ճարտարապետության: Ստիպել են արդեն մեր կադրերը, ավելի յեն խորացել դասակարգային սահմանազծման գծերը, ավելի լուրջ են դարձել արվեստի առաջ դրված պահանջները կուլտուրական հեղափոխության ծավալման և խորացման պայմաններում: Ցեսս վրատահ եմ, որ վիճաբանությունների ընթացքում ընկերները բազմաթիվ օրինակներ կբերեն այդ բնագավառում տեղի ունեցող դասակարգային պայքարից: Ցեսս կբերեմ լոկ միքանի նմուշներ:

Վերցնենք ճարտարապետության բնագավառը: Ինչպես հայտնի յե, Բելոռուսական կուլտուրայի Ինստիտուտը, որը այն ժամանակ գտնվում եր նացիոնալ-դեմոկրատիայի տնորինության ներքո, մերժեց ընդունել Մինսկի կայարանի պրոյեկտը, որը ներկայացրել եր ճարտարապետ Ստրուկովը, առաջարկելով նրան մշակել նոր նախագիծ բելոռուսական իշխանական տվյալների վրա, որոնք իրը թե արտահայտում են բելոռուսական ազգային վոճը: Մի այլ օրինակ.Տաջիկստանում դեկխանի (գյուղացու) տունը դառնացված և որպես ֆեոդալական շրջանի մնայլ չենք, բաղկացած անլուսամուտ պատեր ունեցող մի շարք խառնիճաղանճ շինություններից, մի մասում փոքրիկ, յերկարավուն լուսամուտներով, կամ թե մեծ, յեկեղեցու նման լուսամուտներով մյուս մասերում: Մինչև Ասիայում Բեգովատի վոռոդման պատնեշի կամուրջի կառուցման մեջ լիովին պահպանված է ֆեոդալական ճարտարապետության վոճը, բազմաթիվ մինարեթներով և գմբեթներով: Թե՛ Ադրբեջանի, թե՛ Վրաստանի և թե Հայաստանի պրակտիկայից հայտնի յեն այն փաստերը, յերբ միջնադարյան, յեկեղեցական վոճը հրամցվում եր որպես ազգային ճարտարապետության վոճ: Այս մասնակի օրինակը հաստատում է, որ բացարձակապես ճիշտ է դեպի տեղական շովինիզմը յեղած թեզման բնորոշումը, որ տվել է ընկ. Ստալինը XVI համագումարում:

Ինչո՞ւմն է կայանում դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեզթեզման եյությունը: Դեպի տեղական նացիոնալիզմի եյությունը կայանում է իր ազգային պատյանի շրջանակներում ամփոփվելու և առանձնանալու, սոցիալիստական շինարարության ընդհանուր հոսանքից մեկուսանալու միջոցով վելիկոռուսական շովինիզմից պաշտպանվելու ձգտման մեջ, չտեսնելով այն, որ մոտեցնում և միացնում է ԽՍՀՄ ազգությունների աշխատավոր մասսաներին, և տեսնելով լոկ այն, որ կարող է հեռացնել նրանց իրարից:

Դեպի տեղական նացիոնալիզմը յեղած թեզումը արտահայտում է անցյալում ճնշված ազգերի մեռնող դասակարգերի զբա-

գոհությունը պրոլետարիատի դիկտատուրայի ռեժիմից, նրանց ձգտումը առանձնանալու իրենց ազգային պետության մեջ և հաստատելու այնտեղ իրենց դասակարգային տիրապետությունը»:

## ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԹՇՆԱՄՈՒ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստի բնագավառում ազգային կուլտուրայի զարգացման ուղիների, «ով–ում» հարցը լուծելու համար մշվող պայքարն առանձնապես ուժեղ է արտահայտվում այն պատճառով, որ այստեղ. արվեստի բնագավառում, խոշոր նշանակություն ունեն ազգային ձևի հարցերը:

Պատահական չէ, որ այդ բոլոր նացիոնալ–դեմոկրատական կազմակերպությունների հայտարերումը, որոնց մասին վերևում խոսվինք, միաժամանակ հայտարերեց նրանց բջիջները գրականության բնագավառում: Պետք է ասել, որ ոչ միայն ԹՍՖԽՀ մեջ, այլ և բոլոր դաշնակից հանրապետություններում գրականությունը հանդիսանում է ամենից ավելի առաջավոր և առաջնորդող ջոկատը արվեստի ասպարիզում: Եվ հենց արվեստի ասպարիզում ամենից առաջ մերկացվեց բուրժուական նացիոնալիստական տարրերի գործունեությունը:

Երբ մեր ուկրաինական ընկերները—Վուսպպ-ը և «Մոլոդնյակ»-ը կռվում էին նեոկլասիկների դեմ, կամ երբ մեր բելոռուսական ընկերները կռվում էին «Ուզվիչչայի» և «Պոլիմյայի» դեմ, կամ երբ թաթար և բաշկիր մեր ընկերները կռվում էին «Զիդիդյան» խմբակի դեմ, կամ երբ մեր ուզբեկ ընկերները կռվում էին «Կզիլ–կալամ» խմբակի դեմ, վոմանք կարծում էին, թե դրանք գրական պարապ վեճեր են, մրցող հոսանքների կռիվներ, դուցե և նույնիսկ անձնական պատճառներից դրդված, անձնական հաշիվներ մաքրելու համար, մի խոսքով կրկնում էին քաղաքնիական այն տեսությունը, որ նման դեպքերում ունենում են մարդիկ, որոնք չեն հասկանում, կամ չեն ուզում հասկանալ գրականության ֆրոնտում տեղի ունեցող դասակարգային պայքարը: ՍՎՈՒ–ի գատավարությունից հետո, ինչպես հայտնի է, պարզվեց նեոկլասիկների խմբակի դեմքը: Այդ խմբակը ոչ այլ ինչ եր, բայց եթե Սվու–ի գրական բջիջը: Միթե պերճախոս չե Իվչենկոյի հետևյալ հայտարարությունը. «Ցեռ իմ յերկիրը կառուցում էր այնպես, որ նրանք խորհրդային կյանքը պատկերացնում էին բացառական կողմից, տալիս էին նրան բացառական գծեր, ոչ որդանական, այլ միանգամայն պատահական: Փաստերը ներկայացնում էին այնպես, որ նրանց մեջ քողարկվում էին խորհրդային շինարարության հիմնական հեռանկարային գծերը, որոշ դեպքերում թշնամական վերաբերմունք ունի, իսկ այլ դեպքերում հեռու էի կյանքի հիմնական հոսանքներից, կտրված էի գլխավոր գործող մասսայից, այսորվա ակտիվ քաղաքացուց»:

Իվչենկոն միաժամանակ հայտարարեց, որ այս ամենը արդյունք եր այն ազդեցության, որ կրել եր ինքը ուկրաինական նացիոնալ–ֆաշիստների կողմից: Միթե այս խոստավանությունը



մեծագույն հաղթանակ չե՞ր ուկրաինական մեր այն ընկերների համար, որոնք դեռևս նախքան Սվու–ի դատավարությունը մերկացրին Իվչենկոյի «Արտադրական ուժերը» վեպի բուրժուական և նացիոնալիստական իմաստը:

Այժմ ամենքին հայտնի է, բելոռուսական նացիոնալ–դեմոկրատների հակահեղափոխական կազմակերպության հայտարերումից հետո, որ մեր բելոռուսական նապաստովցիները, բելոռուսական պրոլետարական գրողների ասոցիացիան բայլշեվիկյան ճիշտ գիծ եր տանում, պայքարելով «Ուզվիչչայի» և «պոլիմիայի» դեմ, վոմանց կողմից ստանալով անհամբերատար մարդկանց մականունը, մարդկանց, որոնք չեն ցանկանում համագործակցել իբր թե ուղեկիցների հետ, բռնում են խմբակայնության, անթույլատրելի առանձնացման դիրք:

Բայց, ընկերներ, այստեղ պետք է ասել, որ դասակարգային թշնամու պրակտիկան գերազանցեց նույնիսկ ամենակայուն և մարտընչող բայլշեվիկյան քննադատների և հրապարակախոսների սպասելիքները և բնորոշումները: Այնտեղ, Բելոռուսիայում գործը հասել եր մինչև այնտեղ, որ այսպես կոչված նացդեմները դիսկուսիաների ժամանակ դիտավորյալ կերպով բաժանում էին դերերը, հանձնարարելով վորոշ մարդկանց՝ դեմ դուրս գալ, իսկ ուրիշներին՝ թեր: Վորոշ մարդկանց հանձնարարում էին մի կազմակերպության դեկավարությունը, իսկ ուրիշներին՝ մյուս: Դժվար եր յենթադրել ուղղակի պրովոկացիայի այդքան բարդ սիստեմ, որ թաղանթա և ոպոզիցիա խաղալու համար նախորոք ծրագրված նման մի սիստեմ: Այժմ միանգամայն պարզ է, որ իրավացի էին բելոռուսական ընկերները և «նա լիտպաստու» ժուրնալը, յերբ կռվում էին «Ուզվիչչայի» և «պոլիմյայի» դեմ (Շուչկանով. «իսկ լիտֆրոնտի»): Լիտֆրոնտի հարցի վրա յես հետո կանդ կառնեմ: Այժմ կառեմ միայն, որ ընկ. Շուչկանովի հարցը միանգամայն տեղին, որովհետև Լիտֆրոնտը չափազանց հատկանշական է յեղել նաև այստեղ:

Կամ վերցրեք «Զիդիդյանը», որ նշանակում է «մեծ արջի» խմբակ: Պատահական չե, որ այդ գրական խմբակի իդեոլոգիական կարևորագույն մոմենտներից մեկը այն քարոզն եր, թե թաթարական գյուղում չիք դասակարգային պայքար, թե թաթար աղքարական գյուղում 90 տոկոսը աշխատավոր են և այլն, և այլն, այսինքն այն, ինչ դի 90 տոկոսը աշխատավոր են և այլն, և այլն, այսինքն այն, ինչ ասում են նացիոնալ–դեմոկրատական բոլոր հոսանքներն ամբողջ Միության մեջ:

Կամ վերցրեք «Կզիլ–Կալամը» Ուզբեկստանում: Այժմ ամենքին հայտնի է, որ այդ խմբակը հակահեղափոխական «կասիմովչչինայի» գրական հատվածն եր: Այդ խմբակի այսպես ասած թեորեթիկներից մի քանիսը, ինչպես որինակ Ինոզամովը, իրենց ազգի ինքնատիպության քարոզում հասնում էին այնտեղ, որ հայտարարում էին, թե Ղուրանը կուլտուրական մեծագույն արժեք է, ոչ թե որպես պատմական արժեք, այլ ըստ յերևույթին որպես այժմեական ուսանելի արժեք, դուցե և որպես կուլտուրական զարգացման յելակետ:

Թե՛ «Ուղվիշչան», թե՛ «Կղել-կալամը» իրենք իրենց հայտարարում էին պրոլետարական գրական կազմակերպություններ, այնպես, ինչպես մի ժամանակ ռուսական «պերեվալը» հայտարարում էր իրեն բանվորագյուղացիական գրողների կազմակերպություն, գրեթե պրոլետարական գրականության ներկայացուցիչ: Այսպիսով նացիոնալիստական հոսանքները գրականության բնագավառում, այդ բոլոր նացիոնալիստական գրական կազմակերպությունները, որոնք հանդիսանում էին հակահեղափոխական խմբավորումների բջիջները կամ ոժանդակները, կարողանում էին բարդ կերպով իրար հետ հյուսել թե՛ լեգալ և թե՛ անլեգալ աշխատանքը, մշակել էին մեզ հարմարվելու այնպիսի բարդ յեղանակներ, որոնց մեջ անհետաքրքիր մարդիկ տեսնում էին նրանց մերձեցումը, մինչդեռ այդ յեղանակները նրանց (թշնամիների) համար հանդիսանում էին իրենց հայացքները պաշտպանելու և բուրժուական իդեալները քարոզելու ձևերը: Այստեղ նույնպես մենք հաճախ տեսնում ենք, թե ինչպես մեր կազմակերպությունների, պրոլետարական գրողների ասոցիացիաների մեջ նացիոնալիստական թևը գործակցել են «Կղել-կալամի» և «Ուղվիշչայի» տիպի նացիոնալիստական գրական խմբավորումների հետ: Ցեղել են դեպքեր, յերբ մեր շարքերում մուտք են գործել պրոլետարական իդեալին բացարձակապես խորթ մարդիկ:

Հիշեցեք, որինակ, որ պրոլետարական գրողների առաջին համագումարում Ռապպ-ի վարչության անդամ ընտրվեց վոմն Գայնան Խայրի, որին մենք համարում էինք բաշկիր պրոլետարական գրող, բայց վորը դուրս յեկավ մի մարդ, վորին պետք է վռնդել վորքան շուտ և վճռական, այնքան լավ:

## ՎՆԱՍԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻԴԵՈԼՈԳԻԱԿԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Ընկերներ, դասակարգային պայքարը իդեոլոգիայի բնագավառում տեղի չի ունենում միայն թշնամի դաղափարներ տարածելու, պրոլետարական կուլտուրայի դաղափարներին բուրժուական կուլտուրայի դաղափարները հակադրելու ձևով: Իդեոլոգիական ֆրոնտում նույնպես գոյություն ունի ուղղակի վնասարարություն, վոչ այդ բառի լայն իմաստով, յերբ վնասարարություն ասելով հասկանում ենք սոցիալիստական շինարարության դեմ ուղղված հակամարքսիստական թեորիաների կամ հայացքների ամեն տեսակ պրոպագանդա: Վոչ, յես խոսում եմ, վնասարարության մասին ավելի նեղ իմաստով, այդ տեսակ վորոշ իմաստով: Պետք է նշել, վոր կուլտուրայի ասպարեզում վնասարարությունը—այդ բառի նեղ և անմիջական իմաստով—ընդգրկում էր հենց այն բնագավառները, վորոնք հանդիսանում են կուլտուրական հեղափոխության կուլտուրական բաղան: Փոստը և հեռագրերը, դրքի տարածման գործը, կինոն, այստեղ կուլտուրական ֆրոնտի այդ հիմնական ճակատամասերում արդեն հայտարերված է վնասարարական գործունեությունը:

Որինակ, կինոյում մի քանի տարի շարունակ գոյություն է ունեցել վնասարարների մի խմբակ, վորի ներկայացուցիչները



իրենց ձեռքն էին վերցրել Սովկինոյի հիմնական ոպերատիվ պոստերը: Վարձակալության բաժնի վարիչը վնասարար էր, տեխնիկական-տնտեսական-պլանային բաժնի վարիչը վնասարար էր, արտահանման-ներմուծման բաժնի վարիչը նույնպես, և այլն:

Ի՞նչ էին անում այդ մարդիկ: Նրանք տապալում էին տեխնիկական և հումքի բաղան, խափանելով ժապավենի գործարանի շինարարությունը և խոսող կինոապարատների արտադրությունը ԽՍՀՄ-ում: Նրանք դիտավորյալ կերպով անհամաչափություն էին ստեղծում մեր կինոարտադրության մեջ, ուղղելով, որինակ, կինոարհեստանոցների շինարարությունը, ստեղծելով կինոարհեստանոցների գերարտադրություն, այն էլ չափազանց մեծածախս և շքեղ արհեստանոցների (ատելիե), վորոնք պահանջի փոփոխության դեպքում չէին կարող հեշտությամբ վերապատրաստվել: Ուշադրավ է, վոր Արևմտյան Եվրոպայում, որինակ Շառակենի Ֆիլմայի կինոարհեստանոցը տեղավորված է հին անգարներում, վորոնք պատերազմի դեպքում կարելի յե խոկուն վերածել նույն անգարների: Իսկ մեզանում կառուցում էին գրեթե պալատներ, այն էլ այնպիսիք, վորոնց մեջ չի կարելի դրազվել խոսող կինո ժապավենների արտադրությամբ: Այդ մարդիկ արդեն էին հանդիսանում և իրականում խափանում էին գյուղական և բանվորական մասսայական կինոցանցի զարդացումը—թե կադրերի, թե վարձակալության, թե՛ մատակարարման գծով, հետո, այդ մարդիկ բարձրացնում էին վատորակ արտադրանքի տիրաժը, արդեն լինելով ակտուալ քաղաքական կինոնկարների արտադրությանը: Անպետք կինոնկարները վորոնք խիստ քննադատության են յենթարկվում խորհրդային հասարակայնության կողմից, նրանք տալիս էին խոշոր քանակությամբ, իսկ խորհրդային լավագույն նկարները, գեղարվեստական տեսակետից ամենաարժեքավորները և իդեոլոգիապես ամենանոգտավետները, տպվում էին ընդամենը մի քանի որինակ: Այդ մարդիկ իրականում աշխատում էին, վորպեսզի մեր կինոֆիլայից, մեր կինոարտադրությունն ուղղակի յենթարկվի բուրժուական ֆիլմաների: Անցկացնելով իրենց այս գիծը, նրանք հետ, այն էլ՝ ուղղակի տարկական պայմանագրեր:

Խորհրդային պետության, պրոլետարական դիկտատուրայի յերկրի, սոցիալիզմ կառուցող յերկրի կինեմատոգրաֆիան այդ մարդկանց շնորհիվ վոչ միայն չէր ոգնում արևմտյան պրոլետարական կինոյին, այլև գործակցում էր ամենաղզվելի բուրժուական կինոյին, ինչպես որինակ, Ռոզա Լյուքսեմբուրգի և Կարլ Լիբկնեխտի սպանության նախկին մեղսակից Սկլյարցի հետ: Ստեղծվել էր այնպիսի դրություն, վոր ֆրանսական մեր լիազոր ներկայացուցչությունը հարկադրված յեղավ գրելու Սոյուզկինոյին, թե ձեզ մոտ են գալիս ֆրանսական պրոլետարական կինոյի ներկայացուցիչ ընկերներ, ապացուցեք նոր-կազմակերպության

նրանց, վոր դուք հակահեղափոխականներ չեք: Ցեվ, իհարկե, այդ բոլոր վնասարարներն ամեն կերպ փորձում էին ապացուցել այդ, օգտագործելով ամենից առաջ այն կոմունիստներին, վորոնք գիտեն թղթեր ստորագրել, բայց չեն ուզում թափանցել գործի էությունն մեջ:

Այդ վնասարարները ծիծաղում էին կինոարտադրությունը պլանավորելու բոլոր փորձերի վրա, հասնելով մեծ հաջողություններ այդ պլանավորումը խափանելու և կինոաշխատողների ամբողջ մասսայի առաջ վարկաբեկելու գործում: Կարևոր է նշել, վոր այդ մարդիկ բնավ չէին ցանկանում մնալ խորհրդատու մասնագետների դերում, զբաղվելով հարցերի նեղ շրջանակով, լինել կոմունիստների տեխնիկական խորհրդականներ,— վոչ, նրանք իրենց այնպես էին պահում, վոր միշտ և համառորեն ազդում էին Սովկինոյի իդեոլոգիական գծի վրա:

Վերցրեք, ընկերներ, մեր, նապաստովցիներիս ֆեյուլյթոնները կինոյի հարցերի շուրջը: Վերցրեք մեր ժողովների և պլենումների բանաձևերը: Վերցրեք որինակ ընկ. Կիրշոնի բրոշյուրը «На кинопосту» վերնագրով: Կարելի է ասել առանց չափազանցության, վոր այդ վնասարարական կազմակերպության հայտնաբերման հեղինակությունի դարձածներից շատ բան մենք պրդեն նշել ենք ժամանակին, մատն ացույց ենք արել առաջ, բողոքելով Սովկինոյի ղեկավար աշխատողների գծի դեմ: Վնասարարների աշխատանքը շատ բանում այնքան ակներև եր, վոր՝ այժմ բացված մանր բաներն իսկ մենք ժամանակին նշել ենք:

Լավ, վնասարարները կատարում էին իրենց վնասարարական գործը: Դասակարգային թշնամին յեղել է, վոր վնասի: Իսկ ո՞ւր էին և ի՞նչ էին անում Սովկինոյի աշխատանքի համար պատասխանատու կոմունիստները: Ինձ թվում է, վոր այս ամենաէական հարցերից մեկն է, յերբ խոսքը վերաբերում է վնասարարական կազմակերպությունների մերկացմանը իդեոլոգիայի բնագավառում, վորտեղ պահանջվում է մեծագույն և հատուկ աչալրջություն: Վոչ վոք չի կարող հերքել այն փաստը, վոր Սովկինոյի դեկավար աշխատողները վոչ միայն ականջ չէին դնում մեր քննադատությանը, այլ և ծածկում էին վնասարարներին, վորոնք են այս յերեվույթի պատճառները: Այդ պատճառները նախ և առաջ կայանում են տեխնիկայի ուշադրություն չդարձնելու և մասնագետներին չափից ավելի վստահելու մեջ, վոչ միայն մասնագետներին, նույնիսկ վոչ այնքան մասնագետներին, վորքան կեղծ-մասնագետներին, բուրժուական շահագետներին, ամերիկյան արտաքինով ճարպիկ երիտասարդներին: Հետո, այդ պատճառները կայանում էին նրանում, վոր Սովկինոյում աշխատող կոմունիստներից շատերը կարծում էին, թե բուրժուական կինոյի, բուրժուական կինոարտադրության, կապիտալիստական կինոինդուստրիայի սպեցիֆիկան առհասարակ կինոյի սպեցիֆիկան է: Սովկինոյի կուսակցականներից շատերը վարակվել էին այն չարչիական, այն առևտրական վոգով, վորի մասին խոսում եր Ստալինը մեր կոոպերացիայի մի քանի ողակների վերաբերմամբ: Միթե ընկերները չեն



հիշում այն փաստը, վոր Սովկինոյի խոշորագույն աշխատողներից մեկը, ի պատասխան մեր իդեոլոգիական քննադատությանը Սովկինոյի արտադրանքի մասին, հայտարարեց, թե իդեոլոգիան լավ բան է, բայց մենք պետք է նախ և առաջ մտածենք քսակը մասին: Միթե փաստ չէ՞, վոր Սովկինոյի ղեկավար աշխատողներից մի քանիսը խիստ պատկառելի, խիստ խոհական և իմաստուն յերեվույթով ժպտում էին նապաստովցիների «տղայական» յեռանդի վրա և իրականում անց էին կացնում դրամարկղային քաղաքակրթություն, դասակարգային քաղաքականության փոխարեն, չհասկանալով, վոր իրենց այդ գիծը վոչ այլ ինչ եր, յեթե վոչ վնասարարների դասակարգային գծի արտահայտություն:

Միթե մեզ հայտնի չէ՞, ընկերներ, թե ինչ ստահնանի յեր հասել վնասարարների աշխատանքը Փոստի և հեռագրի ժողովրդական կոմիսարիատում: Միթե հայտնի չէ՞, վոր վնասարարական այդ կազմակերպությունն ամենից առաջ աշխատում եր անդամալուծել Փոստ-հեռագրի կոմիսարիատի այդ ողակների աշխատանքը, վորոնք կապված են գրքի, թերթերի տարածման, մամուլի աշխատանքի ամբողջ սիստեմի հետ: Միթե հայտնի չէ՞, վոր այդ մարդիկ դիտմամբ վերցրել էին Փոստ-Հեռագրի ժողկոմատի ցանցի դիկ դիտմամբ վերցրել էին Փոստ-Հեռագրի ժողկոմատի ցանցի զարգացման ամենանվազագույն տեմպեր: Միթե հայտնի չէ՞, վոր նրանք գյուղական փոստատարների կադրերը դիտմամբ ընտրում էին գյուղի կուլակային տարրերից:

Հատա վնասարարությունը Ուկրաինայում գրքի տարածման գործում: Արժեր հիշատակել այդ մարդկանց կենսագրությունը: Դրանք բոլորն ել գրեթե անխտիր նախկին պետլյուրականներ էին, վորոնք դեռ Պետլյուրայի ժամանակ աշխատում էին «Ինիցիատիվ» «Գրքի խորհրդում» և մեր որերում գրավել էին կարևորագույն տեղեր խորհրդային գրքի տարածման գործում: Նրանք անց էին կացնում ամենաբուրժուական գրքի տարածման գործում: Նրանք անց էին կացնում մի գիծ, վորը վորոշ չափով նման եր Սովկինոյի վնասարարների իդեոլոգիային: Նրանք առավելագույն չափով տարածում էին ամենավատորակ, նույնիսկ վնասակար գրքեր և մինչև անգամ զգալի քանակությամբ եմիգրանտական հրատարակություններ: Մինչդեռ մեր գրականությունը, մանավանդ քաղաքական մասսայական կամպանիաների համար անհրաժեշտ գրականությունը տարածվում եր աննշան չափերով: Խորհրդային ապարատ, խորհրդային գրքի տարածման գործ— և շովինիստական-եմիգրանտական վալասը առաջին տեղում, իսկ կոմունիստական գրականությունը յետին պլանի վրա: Այդ վնասարարները ունեցին նույնիսկ իրենց գրական քաղաքականությունը: Լայն առաջ քաշելով «Պոլիտֆրոնտի» (նախկին վասիլյիտականներ) հեղինակների յերկերը, նրանք սեղմում էին Վ.Ուսպ-ականների յերկերը:

Ցեռ պետք է ասեմ, վոր մեր հեղինակների յերկերի նման գնահատականը վնասարարների կողմից՝ մի փաստ է, վորի համար մենք պետք է և շնորհավորենք մեր մալաղնյակովցիներին, մեր Վուսպականներին, ուկրաինական բոլոր նապաստովցիներին (ծափահարություններ):

Վերլուծելով վնասարարական կազմակերպությունների աշխա-

տանքը իդեոլոգիական ֆրոնտում, մենք տեսնում ենք, վոր նրանք վոչ միայն մեր դեմն հակադրում էին իրենց դիծը, բուրժուական կուլտուրայի դիծը, այլև հարկադրված աչերես համաձայնվում էին մեր դծի հետ, միայն մտցնելով «մանր» ուղղումներ, կամ գործնական «լրացումներ»: Առաջին հայացքից կարծես մեր մարդիկը լինեն, շատ լավ մարդիկ, միայն «աննշան» զանազանություններով», վորոնք վոմանց համար նույնիսկ աննկատելի էին թվում. իսկ այդ «աննշան զանազանությունները», «ուղղումները» և «լրացումները» շատ հաջող կերպով խեղաթյուրում էին մեր քաղաքականությունը, նույնիսկ յերբեմն փոխարինում էին նրան իրենց քաղաքականությամբ:

Դա խորհրդային լեզալ հնարավորությունների ամենաճարպիկ և խորամանկ ոգտագործումն է վնասարարների կղմից: Ցեվ հետաքրքրություն դարձնելով կուլտուրական հեղափոխության նյութական բազայի ամենակարևոր ճակատամասերի վրա, վնասարարներն իրենց համար ստեղծում էին լրիվ թե առանց իդեոլոգիական վորևե պայքարի—հարմարություններ և պայմաններ գործնականորեն վիժեցնելու համար սոցիալիստական հարձակումն իդեոլոգիայի ամբողջ ֆրոնտի վրա:

Դասակարգային թշնամու մերկացումը իդեոլոգիական ֆրոնտում, նրա պայքարի նման ձևերի, ինչպիսին է վնասարարությունը, մերկացումը մեր ուժի, մեր աշխատանքի խորացման, մեր կադրերի հարատևուն հասունացման, պրոլետարական կուլտուրայի հաջող հարձակման նշան է յուրաքանչյուր ազգի մեջ: Քանի դեռ մենք թույլ էինք,— կամ ավելի թույլ էինք— մենք դեռևս չէինք կարողանում բավարար չափով գնահատել կացությունը: Իսկ այժմ վոչ միայն հաջողությամբ սովորում ենք, այլև բավական բան սովորել ենք: Քանի դեռ մենք չունեցինք մեր կադրերը, մեզ կարող էին խաբել բավական հաճախ: Իսկ այժմ արդեն դաստիարակվում են մեր կադրերը—խաբել դժվար է: Գուցե դեռ էլի խաբում են, սակայն խաբելն էլ այժմ շատ է դժվարանում, քանի վոր դասակարգային պայքարի սրումն անխուսափելիորեն ունենում է այն հետևանքը, վոր վոչ միայն մենք ենք մերկացնում վնասարարներին, այլ նրանք իրենք իրենց են մերկացնում:

## ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԸ

Մենք, Պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական միավորումը, հիմք ունենք պարծենալու այն պայքարով, վոր մղել է մեր կազմակերպությունը ընդհանուր առմամբ և իր բոլոր բաղկացուցիչ մասերով ընդդեմ հակահեղափոխական նացիոնալիստական կազմակերպությունների, ընդդեմ բուրժուական իդեոլոգիայի ամեն տեսակի և ամեն գույնի արտահայտությունների: Ցես վերևում արդեն նշեցի Բելոռուսական ասոցիացիայի պայքարը «Ուզվիշշայի» և «Պոլիմիայի» դեմ, Վուապպ-ի և «Մոլոդնյակի» պայքարն Իվչենկոյի խմբակի, այսինքն այսպես կոչված



նեոկլասսիկների դեմ, Ռապպ-ի պայքարը հին կինո-դեկավարության դեմ, նման որինակների թիվը կարելի է բազմապատկել:

Ի հարկե, այս ամենն առանց սխալների չանցավ, յերբեմն նույնիսկ մեծ սխալների,—յերբ որինակ քննադատ Դոլինդան Վուապպ-ի «Գարտ» ժուրնալում մի հոդվածով պաշտպանեց Իվչենկոյի վերոհիշյալ վեպը: Սխալներ յեղան մեր բոլոր կազմակերպությունների և ամբողջ Վուապպ-ի աշխատանքում: Կարելի է բերել մի շարք որինակներ, վորոնք վկայում են, թե մենք հարկ յեղած չափով դասակարգային աչալրջություն չենք հայտարերել, բավարար վով դասակարգային թշնամու դեմ, չենք կարողացել ճանաչել ջանքերը հարձակումը թշնամու դեմ, չենք կարողացել ջսիչ ելնել նրան: Սակայն հակառակ մեր բազմաթիվ թերությունների և բացերին վերջին 2–3 տարվա ընթացքում, Խորհրդային միության պրոլետարական գրողները անցել են քաղաքական խոշոր ուսման դպրոց, և այդ ամենակարևոր պատճառներից մեկն է, վոր մենք այժմ կարող ենք ասել, թե Խորհրդային Միության բոլոր հանրապետություններում Վ.ՈԱՊՊ-ի կազմակերպությունները ունեին առաջնորդող դեր գրական կյանքում: Խորհրդային գրականությունն այժմ ամենուրեք արդեն առաջնորդում և գլխավորում են պրոլետարական գրողները: Սա ընդհանուր պրոլետարական հեղափոխության հաջողությունների մասնավոր արտահայտությունն է: Սա մի ապացույց է, թե ինչպես է լուծվում ով-ում հարցը: Սա սոցիալիզմի հաղթանակներից մեկն է: Վուապպ-ի միոնականությունը վերջին շրջանի բոլոր կռիվներում՝ ապացույց է, վոր մենք մաքրել է բոլոր ազդակներ և որիակ է այն բանի, վոր ամրացել է բոլոր ազդային դրականությունների պրոլետարական ջոկատների ինտերնացիոնալ կազմը, թե՛ համամիութենական մասշտաբով, թե՛ տարբեր ազգային դրականությունների մեջ այս կամ այն հանրապետական կազմակերպության սահմաններում:

Յերեք տարի առաջ մենք փոխեցինք մեր կազմակերպության կառուցվածքը: Պրոլետարական գրողների համամիութենական ասոցիացիայից դարձանք Պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական միավորում: Այն ժամանակ կային ընկերներ, վորոնք ասում էին, Դուք հեռանում եք միասնական կազմակերպության կառուցվածքից, այդ կթուլացնի պրոլետարական դրականության ինտերնացիոնալ կազմը, պատճառ կլինի նացիոնալիստական տրամադրությունների ուժեղացման Վուապպ-ի առանձին ողակներում: Անցել է ընդամենը յերեք տարի, և մենք կարող ենք ասել, վոր մեր շարժման կազմակերպչական նոր ձևերը լիովին արդարացրել են իրենց, վոր այս ժամանակամիջոցում մենք կարողացել ենք շատ ավելի ամրացնել պրոլետարական բոլոր գրական ջոկատների միասնականությունը, վոչ թե խոսքով, այլ գործնական ձևակերպման, դոծրնական մերձեցումով, վոչ թե ձևականորեն, այլ իսկապես ընկերական, ինչպես նաև ինչպես ասում է Լենինը, մեխանիկական միացումը չէ: Վոչ, այսոր մենք—Վ.ՈԱՊՊ-ը բանվոր դասակարգի միասնական, մարտական և մարտնչող կազմակերպությունն է գրական ֆրոնտում: (Ծափահարություններ):

Ցես անհրաժեշտ եմ համարում, ընկերներ, հատկապես նշել,

վոր դա վոչ թե յոթ հանրապետական կազմակերպությունների մեր-
ձեցում է, այլ բոլոր ազգային գրականությունների, այս թվում և
այն ժողովուրդների գրականությունների, վորոնք մինչև Հոկտեմ-
բերը դեռ չունեին նույնիսկ գիր և գրականություն: Անիրավացի
են այն ընկերները, վորոնք ժխտում են որինակ լեհական պրոլե-
տարական գրականության զարգացման հնարավորությունը մեղա-
նում, խորհրդային Միության մեջ, քանի դեռ Լեհաստանում չի
հաստատված բանվոր դասակարգի իշխանությունը: Սխալ թեորիա
է այս: Իրավացի չեն նաև այն ընկերները, վորոնք մերժում են
ռուսական պրոլետարական գրականության անման հնարավորու-
թյունն Ուկրայինայում, կամ դիցուք, լատիշական պրոլետարա-
կան գրականության զարգացումը ՌՍՖՍՀ-ում: Վոչ,
մեր կուսակցության ազգային քաղաքականությունը, և դրա
համապատասխան, մեր Վռապպ-ի կազմակերպությունների
քաղաքականությունը պետք է ապահովի յուրաքանչյուր ազգային
գրականության իրական զարգացման հնարավորությունը Խորհրդ-
ային Միության տերիտորիայի վրա: Այստեղ ինքնաքննադատու-
թյան կարիք պետք է ասել, վոր ՌՍՖՍՀ ազգային փոքրամասնու-
թյունների մեջ աշխատանք տանելու տեսակետից Ռապպ-ը շատ ա-
վելի հետ է մնում, քան մի քանի դաշնակից հանրապետություն-
ների ասոցիացիաները: Դր պատճառներից մեկն այն է, վոր մեր
մի շարք ընկերները վորոշ չափով թերագնահատում են ազգային
հարցը, մի բան, վոր յերբեմն գործնականում մոտենում է միա-
պետական շովինիզմի:

## ԶՊԱՐԾԵՆԱԼ

Այժմ մեզանում չափազանց ուժեղացել է ուշադրությունը դե-
պի գեղարվեստական գրականությունը, նրա հանդեպ աճել է հե-
տաքրքրությունը, վորն արտահայտում է նրա հասարակական նշա-
նակության ուժեղացումը: Գրականությունն այսոր մեզանում իրոք
հանդիսանում է մասսաների դաստիարակության խոշորագույն
միջոց: Ցեվ այսոր մենք նույնիսկ վորոշ չափով քայլում ենք որ-
վա հերոսների պես,— հենց դրա համար յես ուզում եմ նշել
ինքն իր վրա մեծ համարում ունենալու, հաջողություններից գըլ-
խապտույտ ստանալու մեծագույն վտանգը,—իսկ այդ հաջողու-
թյունները, վոր չի կարելի ժխտել, ընդգծում են միայն մեր նվա-
ճումների անբավարար լինելը: Ը կերներ, մենք գտնվում ենք մեր
վերակառուցման առաջին ետապներում: Ցեվ այս հաջողություններ-
ը, վորոնք մենք չենք կարող, կրկնում եմ, չարձանագրել, և ավելի
ընդգծում են, վոր գրականությունը յետ է մնում սոցիալիստական
շինարարության բուռն տեմպերի նրան առաջադրած խնդիրներից:
Այնինչ արդեն կան բոլոր օբյեկտիվ նախադրյալները, վոր-
պեսզի ամենակարճ ժամանակամիջոցում մենք հասնենք պրոլետա-
րական գրականության ստեղծագործական հեգեմոնիային: Ցեվ
մնալու դեմ պայքարելու և հեգեմոնիա ձեռք բերելու հարցերը
սերտորեն կապված են իրար հետ: Ցետամնացության վերացումը
մենք հասկանում ենք վոչ վորպես արվեստի լիկվիդացիան և նրա



փոխարինումը յերկրորդ կարգի, արագ արտադրվող և շուտ փչա-
ցող արտադրանքով: Ցետամնացության հաղթահարումը մեզ հա-
մար անխզելիորեն կապված է արվեստի համար մղված պայքարի
հետ, այնպիսի մի արվեստի, վորը, ինչպես Լենինն է ասում, մի
քայլ առաջ լիներ մարդկության գեղարվեստական զարգացման
մեջ: Ցեվ մենք գիտենք, վոր առաջադրելով բայլշեվիզմի մեծ ար-
վեստի լոզունգը, մենք պայքարում ենք հանուն կուսակցության
գծի, կուսակցության գծի համար՝ կուլտուրական հեղափոխու-
թյունն իրագործելու, անցյալի կուլտուրական ամբողջ փորձը
քննադատաբեն յուրացնելու, բանվոր դասակարգի նոր կուլտու-
րան և նոր արվեստը ստեղծելու ուղղությամբ:

## ԲԱՅՇԵՎԻԶՄԻ ՄԵԾ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՐ

Մենք ապրում ենք մի այնպիսի ժամանակ, վորի հավասարը
չի յեղել մարդկության պատմության մեջ: Սոցիալիզմի կառուց-
ման խնդիրը պահանջում է վճռականորեն բարձրացնել կուլտու-
րական մակարդակը: Ցեվ իրոք, մեր աչքերի առաջ գնալով ավելի
ու ավելի արագանում, լայնանում և խորանում է մեր յերկրում
սոցիալիզմ կառուցող միլիոնների և միլիոնների աճումը: Կարո՞ղ
ենք միթե մենք այս պայմաններում և այսպիսի ժամանակ նվա-
զեցնել արվեստի առաջ դրված պահանջները: Կարո՞ղ ենք մենք
այսպիսի ժամանակ և այս պայմաններում փոքրացնել այն խըն-
դիրները, վորոնք ծառացած են մեր արվեստագետների առաջ:
Վոչ, մենք պարտավոր ենք և կարող ենք որեցոր մեծացնել պա-
հանջները, պրոլետարիատի գրական աշխատողների առաջ դնելով
մեծ խնդիրներ, խնդիրներ, վորոնց չափերը վորոշում է մեր մեծ
ժամանակը: Ցես արդեն առիթ եմ ունեցել ասելու, վոր պրոլե-
տարական գրականության հեգեմոնիան մենք չափում ենք վոչ
միայն համեմատելով ուղեկցային գրականության ստեղծագործա-
կան մակարդակի հետ: Ինչպի՞սի պատիվ— ավելի բարձր լինել
ինչվոր Գիլինյակից, բուրժուական գրականության այդ վոգորմելի
հանդուրդից: Ցեվ նույնիսկ վոչ Գիլինյակի, այլ ուղեկցության լա-
վագույն ներկայացուցիչների հետ համեմատելով, մենք չենք կա-
րող տալ հեգեմոնիայի չափանիշը: Մենք պետք է դերազանցենք
անցյալ բավանդակ գրականության լավագույն նմուշները,— և
մենք համոզված ենք, վոր կդերազանցենք այդ նմուշները վոչ
միայն այն ժամանակ, յերբ արդեն կմահանա դասակարգային հա-
սարակությունը, այլև այժմ, սոցիալիզմի համար մղված մեր
դժվարին և մեծ պայքարում: Պետք է ըմբռնել, վոր մեր գրողնե-
րի կադրերը նույնման ավելի արագ և լավ կանեն, վորքան ավելի
պատասխանատու և լուրջ խնդիրներ կդնենք նրանց առաջ:
Խոսելով անցյալի գրականության լավագույն նմուշները դե-
ղադանելու մասին, մենք դրանով ամենևին չենք հասկանում
կլասիկներին ընդօրինակելը: Ընդհակառակը, խոսքը վերաբերում
է վորակապես նոր արվեստի, վորակապես նոր գրականության, վորակապես նոր կուլտուրայի բաղկացուցիչ
խոսքը վերաբերում է վորակապես նոր գեղարվեստականության իր
մասին: Մեր դասակարգն ունի

հատկանիշը: Այն, ինչ վոմանց գեղարվեստական է թվում, մեզ համար կարող է բնավ այդպիսին չլինել: Ցեվ արդեն այժմ, ուսումնասիրելով պրոլետարական ընթերցողների կարծիքները, վերլուծելով նրանց հետաքրքրությունները, մենք նկատում ենք, որ արդ ձևակերպվում է նոր եստետիկական ճաշակ, պրոլետարիատի գեղարվեստական ճաշակը: Ցեվ այս տեսակետից հեգեմոնիայի համար մղված պայքարը և ստեղծագործական մեթոդի հարցերի քննությունը մեր կողմից՝ հանդիսանում են գրականության ֆրոնտում մղվող դասակարգային պայքարի ձևերից մեկը: Սա հասարակ դիսկուսիա չէ գրելու տեխնիկայի և այն մասին, թե ինչ պրյոմներով արտացոլել մեր ժամանակը: Վոչ՝ ֆնեելով գեղարվեստական մեթոդի հարցերը, մենք բարդ և սպեցիֆիկ ձևով պայքարում ենք մեր դասակարգային գրականության վորակապես տարբեր դեմքի համար:

Ստեղծագործական հեգեմոնիային մոտենալու անմոլերն անմիջական կապ ունեն մեր գրական քաղաքականության հարցերի հետ: Մենք պետք է կարող լինենք մեր տեսակետից տանել ուղեկիցներին վոչ միայն նրա համար, վոր ճիշտ ենք անց կացնում կուսակցական գիծը գեղարվեստական գրականության ասպարիզում, վոր մեր տերկերում արտացոլվում են կուսակցության լոզունգները, վոր մենք բայշևիկյան կազմակերպություն ենք: Մենք այն ժամանակ իրոք մեր տեսակետից կտանենք ուղեկից գրողներին, տերը կտանք և պիտի տանք այնպիսի տերկեր, վորոնք ակներև կերպով դտնվում են գեղարվեստական ավելի բարձր մակարդակի վրա, քան հիմնական ուղեկցային գրողների տերկերը: Այդ ժամանակ միայն իրոք կամրանա և կամրապնդվի պրոլետարական գրականության գրական-քաղաքական առաջնորդող ոգին դերը, վորն այսոր իսկ արդեն անտիճելի է:

Վոմանց թվում է, թե ընթացիկ քաղաքական կամպանիաների ապասարկումը, առորյայի ապասարկումը վնասում է գեղարվեստական վորակի համար մղված պայքարին: Սա ամենամեծ նախապաշարումն է, վորն արտահայտում է բուրժուական արվեստի կանոններն առհասարակ արվեստի ասպեցիֆիկան համարելու պատկերացումը: Մեր արվեստը, վոր իր վորակով տարբեր է անցյալի արվեստից, կամի այն ժամանակ, երբ մեր գրողների մասսան կլծվի սոցիալիստական շինարարության պրակտիկային, կասվորի ապասարկել որվա պահանջները, երբ առորյայի այդ ապասարկումը հաճախացվում է վոչ վորպես ստեղծագործություն բան ուրացույցի, վոչ վորպես գռեհիկ ներբողագրություն, վոր քարոզում էին լիտֆրոնտի թեորետիկները, այլ վորպես մեր արերի մեծագույն պրակտիկայի մակարդակի վրա լինելու անհրաժեշտություն, այլ վորպես այդ պրակտիկայի իմաստն ըմբռնելու կարողություն, մեր իրականության մեջ բազմազան և հակասական տենդենցների բարդ հանդույցը լուծելու ունակություն: Սովորելով դասակարգի պրակտիկայից, դասակարգի պրակտիկայի համար, մենք կարող ենք նաև անչափ բան տալ մեր դուռ գրական դարդացմանը, գեղարվեստական մեթոդի հարցերը ճիշտ դնելու,



պրոլետարական գրականության ստեղծագործական ուղիները փրոչելու համար:

Բայշևիզմի այդ մեծ արվեստն ստեղծելու համար մենք պետք է ելնենք ավելի ուժեղացնենք գրողի նոր տիպ ստեղծելու աշխատանքը:

Վոչ միայն մեր պրոլետարական գրողի, այլև նույնիսկ ուղեկից գրողի դեմքը շատ բանում խիստ տարբեր է հին գրողի տիպից: Մեր գրողն այլևս նման չէ անցյալում շատ տարածված գրասախիվ մեսիային, բոհեմացուն և գերինդելիդուալիստին: Մեզանում արդեն պարզորոշ յերևում են գրողի նոր տիպի գծերը: Բայց մենք դեռևս չենք ավարտել գրողի վերամշակումը, վորը լիներ վոչ թե ինչվոր աղատ նշանակիր, այլ պրոֆեսիոնալ հեղափոխական, վոր տիրապետում է գեղարվեստական գրականության գենքին: Լենինի խոսքերը պրոֆեսիոնալ հեղափոխական բայշևիկների, նրանց բնավորության, նրանց դաստիարակության մասին՝ պետք է դեկավարող հանդիսանան և մեզ համար, մենք, վոր գրականության ասպարիզում պետք է պայքարենք գրողի նոր տիպ, բանվոր դասակարգի պրոֆեսիոնալ հեղափոխական գրողի տիպ ստեղծելու համար:

Ի՞նչ է պետք դրա համար: Նախ և առաջ պետք է, վոր մեր յուրաքանչյուր գրողն իրոք մասնակցի այսորվա պայքարի, կուսական հեղափոխության, սոցիալիստական շինարարության գործին: Միայն այդ դեպքում կլինեն փորձել ճշտությամբ կարդավորել և նախորոք վորոշել այն բոլոր ճանապարհները, վորոնցով գրողները կարող են և պետք է մասնակցեն իսկական պրակտիկային:

Ցերկրորդ պրոֆեսիան, որինակ, վորի մասին մի չորք հանրաստությունների վեճեր են տեղի ունեցել, անպայման ազատ է մեր գրողներից շատ-շատերի համար,— սակայն բնավ պարտադիր չէ: Անհերթեթ կլիներ կարծել, թե քանի վոր գրողը յերկրորդ պրոֆեսիա չունի, նշանակում է նա նույն աղատ նշանակիր է: Ցերկրորդ պրոֆեսիան, որինակ, վորի դեմ մենք պետք է կռվենք: Ցերկրորդ պրոֆեսիայի հարցն այդքան հասարակ չէ: Այստեղ դլխավորն է կարողանալ մոտենալ յուրաքանչյուր առանձին գրողին, վորպեսզի հնարավոր լինի դնել այդ հարցը վոչ թե վերացական նորմաներ ստեղծելու կարդով, այլ կոնկրետ կերպով:

Վոմանց թվում է, վոր սոցիալիզմի շինարարության մեջ գրողների մասնակցության ունիվերսալ մեթոդը բրիգադներն են: Ցեկե՛ք չուտ բոլոր գրողներին բաժանենք բրիգադների, յեկե՛ք արագացնենք այդ բրիգադների աշխատանքի տեմպերը, յեկե՛ք ուժեղացնենք գրողների տեղափոխությունը մի գործարանից մյուս գործարանը: Այսորվ Բալանինայում, վագը Պուտիլովում, մյուս որը Կուզբասում և այլն, և այլն: Նման դեպքերում հաճախ այնքան չեն օգնում գործին և իրենք սովորում, վորքան ավելանում են թերթերում: Շատերի գործը հենց այդքան է. յերկու-յերեք որ լինում են գործարանում, հինգ-վեց որ վոտանավոր են գրում, իսկ հետո յերեք կամ վեց չարաթ այդ մասին հարա-հարց են բարձրացնում ամբողջ մամուլում: Իհարկե շատերին բրիգադները

մեծ ազդեցություն են ցույց տվել և հետագայում ևս ցույց կտան: Հարկավ, վոչ մի իմաստ չունի հրաժարվել բրիգադներից: Սակայն պետք է զանազանել բրիգադների աշխատանքը գործարանների վրա կատարված արշավներից, այն բանից, վոր շատ դեպ ու դին են ընկնում և քիչ ժամանակ նվիրում կուտակված նյութը խորապես ըմբռնելու, յուրացնելու և գեղարվեստորեն ոգեշնչելու համար: Ցավ ինձ թվում է, վոր գրողներից մի քանիսի համար բրիգադային աշխատանքը ծառայում է վոչ միայն վորպես ինքնուրույն, այլև արտահայտում է նրանց վախուստը մեծ արվեստի, բանվոր դասակարգին իրոք արժանի գրականության համար պայքարելու խնդիրներից: Սակայն, կրկնում եմ, բրիգադները, եթե ճիշտ կազմակերպվեն, կարող են ծառայել վորպես գրողի հին տիպի վերամշակման միջոցներ:

## ԲԱՆՎՈՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ԿՈՉԸ

Գրողի նոր տիպը հատկանշող շատ բան ենք դնում մենք հատկապես գրականության մեջ կանչված հարվածայինների մոտ: Ընկերներից շատերը դնում են նրանց գրական պրոֆեսիոնալացման հիմնարկների հարցը: Այս գործում առանձնապես վնասակար է ամեն մի չտապողականություն: Մենք կառուցում ենք սոցիալիզմ, վորը վերացնում է և արդեն սկսում է վերացնել մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը: Պատմական վաղվա տեսակետից պրոֆեսիոնալացման հարցը միանգամայն այլ բնույթ կունենա, քան ունի այսոր: Մեզանում պատահում է, վոր լավ մեծաղաղաշունչ տոկարին վերցնում են և վորպես թե նրա գրական աճման համար շտապում են հեռացնել արտադրությունից: Ցավ հանում եմ, վոր մեծ մասամբ այդ արվում է առայժմ միանգամայն գուք տեղը և սխալ: (Ձայներ, «ճիշտ է»):

Բանվոր հարվածայինների կոչն իրոք հանդիսանում է պատմական մի ուղենիշ, վորն սկսում է նոր եռապ պրոլետարական գրականության զարգացման մեջ: Միտք չունի խոսել կոչի նշանակության մասին: Այդ կլիներ ժամանակի կորուստ: Շատ ավելի կարևոր է կանգ առնել այն հարցի վրա, թե ինչպես և յուրացված այդ լոզունգը մեր գրական կազմակերպություններում, ինչպես է գրված մեր աշխատանքը հարվածային-նորակոչիկների հետ: Ցավ ինձ թվում է, վոր մեզանում դեռևս շատ են աղմկում կոչի նշանակության մասին և քիչ ուշադրություն են դարձնում այդ կոչի ամրապնդման, ոգեշնչման աշխատանքին, առաջ քաշելով կանչվածների շարքերից ամենից ավելի ընդունակներին, ամենից ավելի խոստմնալիցներին: Ո՞վ, որինակ, մեր լավագույն գրողներից սիստեմատիկ կերպով աշխատում է կոչված հարվածայիններ հետ: Իսկ առանց նման աշխատանքի, մենք չենք կարող ապահովել նրանց աճումը: Մենք պարտավոր ենք ստեղծել այնպիսի դրություն, վոր գրականության մեջ կանչված բանվոր հարվածայիններն իրոք ստեղծագործական ոգեշնչություն առնեն մեր



լավագույն պրոլետարական գրողների կողմից (ծափահարություններ):

Ցավ կարծում եմ, ընկերներ, յեթե մենք մի փոքր աղաղակելինք շատից դուրս նեստեր դումարելու ցանվից, վոր հաճախ տիրում է մեր գրական կազմակերպությունների մեջ— և պետք է խոստովանել, վոր մեզանում սիրում են յերբեմն քաղաքականությամբ զբաղվել նույնիսկ ավելի, քան կուսակցական կազմակերպություններում, ընդգծելով նրանց կետ առ կետ— յեթե մենք նախ և առաջ վերացնելինք գրողների կադրերի քարշ գալը զանազան նեստերում, ապա կասկած չկա, վոր մենք ահագին ժամանակ կկնայելինք հարվածայինների հետ աշխատելու համար: Մեր կազմակերպություններն այս նպատակով պետք է վերանայեն յուրաքանչյուր պրոլետարական գրողի ծանրաբեռնվածությունը, և յեթե վորևե մեկն իր պարտականությունների չրջանակի ճիշտ վորոշվելուց հետո չաշխատի հարվածայինների հետ, ուրեմն նա կմերկացնի իրեն վորպես մի մարդ, վորն որդանապես խորթ է մեր վոսպսպական շարժման սկզբունքներին և հիմունքներին: Այժմ մեզանում շատ անբնական դրություն է, յերբ մեր հիմնական գրողներն ահագին ժամանակ են կորցնում ներկա լինելով և յելույթներ ունենալով այնպիսի ժողովներում, վորտեղ նրանց լինելը մեծ անհրաժեշտություն չէ: Նայեցեք Ֆադեյևին, Պանֆերովին, Լեբեդինսկուն, Կիրշոնին, Իլլեշին և մյուս բոլորին: Ավելի ճիշտ չե՞ր լինի մի քիչ թեթևացնել նրանց բեռը և կցել նրանց 1—2 հարվածայինների... (Մի ձայն տեղից. «Քիչ է»): Իհարկե, կարելի յե կցել և քսան հոգու, բայց դրանից ի՞նչ դուրս կգա: Ցավ կարծում եմ, ավելի լավ է կցել յերկու հարվածայինի, նույնիսկ մի հոգու միայն վստահ լինելով, վոր գրողը հարվածայինին կտա իր ստեղծագործական փորձը և կոգնի նրա գրական զարգացմանը: Իմ կարծիքով, Լենինի պահանջը,— լավ է քիչ, բայց լավ— այստեղ ևս միանգամայն ընդունելի և ճիշտ է: Այս գործում, ընկերներ, գլխավոր վտանգը գրականամոլությունն է (լիտերատուրշչինա): Մեզանում հաճախ բանվոր հարվածայիններին ուսուցանում են վոչ թե, դիցուք, արդիֆինալանի կատարման համար մղված պայքարի հիման վրա, յելնելով նրանց փորձից, բարձրացնելով նրանց կուլտուրական ընդհանուր մակարդակը, այլ խմբակներում նախ սկսում են ավանդել, թե ա՛յ, ՌԱՊՊ-ը պայքարել է այսինչի և այնինչի դեմ, և ելի սրանց կամ նրանց դեմ, թե պերևերզևականությունը շատ վատ բան է, թե Բեսպալովը պակաս վատ չե, և այլն, և այլն (ծիծաղ): Գրական ինքնակրթության տեսակետից այս բոլորն ավելորդ չե, սակայն այն է վատը, վոր այդ կատարվում է գլխավորի, հիմնականի հաշվին, ըստ յության մարդկանց չկանչելով գրականության մեջ գործնականում, այլ հրելով նրանց:

Եստետիկական մոտեցումը կարող է կործանել հարվածայինների կոչը: Այս տեսակետից հետաքրքրական է հարվածայինների ալբոմը, վոր վերջերս բաց է թողել Իզոգիզը: Այդ ալբոմում գեղեցիկ են մեծ թվով լուսանկարներ, այդ շարքում նաև այն հար-

վածայինների, որոնցից մի քանիսն այժմ կանչված են գրակա-
նության մեջ: Նկարների տակ նշանակված է— սա այսինչ հարվա-
ծայինն է այսինչ գործարանից, այս մյուսն ուրիշ հարվածային
է մի այլ գործարանից և այլն: Ալբոմն արժե, յեթե չեմ սխալ-
վում, 3 ռ. 50 կ.: Պարզ է, որ բանվորների համար անմատչելի
է, և կարծում եմ, այնտեղ լուսանկարվածներից վոչ բոլորը կհա-
մաձայնվեն ծախել այդքան դումար նման հրատարակության
վրա, որը լոկ պասսիվ կերպով արտացոլում է, վոչ վոքի չի կազ-
մակերպում, վոչ վոքի վոչինչ չի սովորեցնում: Նման հրատարա-
կություններ ամենևին չեն նշանակում պայքարել հարվածայնու-
թյան համար, այլ ապացույց են մինչև ուղն ու ծուծն եստետիկա-
կան մոտեցման՝ դեպի աշխատանքի կոմունիստական ձևերի ապշե-
ցուցիչ աճումը: Ցեվ յերևի Իզվեստիում կարծում են, թե իրենք
կատարել են «սոցիալական պատվերը»: Հարվածայիննե՞ր:—
խնդրեմ, համեցեք, ահա ձեզ ալբոմ հարվածայինների մասին...
(Կիրշոն. «պակասում են միայն լիտֆրոնտական վոտանավոր-
ներ»): Այդ ճիշտ է, հերիք է միայն ավելացնել լիտֆրոնտի ռե-
ցեպտներով արտադրված բանաստեղծական մասսայական նմուշ-
ներ, և կատացվի լիովին ներդաշնակ ու կատարյալ յերկ, որը հա-
վասարապես վոչ մի կապ չունի վո՛չ արդիֆնպլանի համար մղված
պայքարի, վո՛չ ել բայշևիզմի մեծ արվեստի ստեղծման հետ:

Նման արլտմովշչինա տեղի ունի նաև գեղարվեստական գրա-
կանության ասպարիզում հարվածայինների հետ տարվող աշխա-
տանքի մեջ: Այստեղ նուլնպես մենք պատահում ենք կեղծավոր
դավանանքների, յերևսպաշտ խոսակցությունների այն մասին,
թե կեցցե՛ք դուք, նորակոչ հարվածայիններ, բռավո՛, մենք ձեր
մասին եյինք մտածում, միշտ ձեզ եյինք սպասում, ձեզ համար
եյինք պայքարում և այլն, և այլն, փոսակցություններ, որոնք
բնավ չեն թեթևացնում հարվածայինների դործը:

Հասկանալի յե, որ դեկլարավիվ հայտարարություններով
այժմ չի կարելի վորոշել այս կամ այն ընկերոջ, այս կամ այն կազ-
մակերպության վերաբերմունքը դեպի հարվածայինների կոչը:
Ո՞վ կասի այսոր, որ դեմ է կոչին: Խոսքով ամենքը նրա կողմն
են: Ո՞վ կհամաձայնվի ստորագրել, թե ինքը ոպորտունիստ է:
Դրան համաձայն կլինեն կամ հիմարարար, կամ պրակտիկայում
մերկացնելու հեռանքով: Բանվոր հարվածայինների կոչի բնա-
գավառում այդ գործի ոպորտունիստական թերագնահատությունը
գլխավորապես արտահայտվում է վոչ թե կոչի անհրաժեշտությու-
ն ժխտելու ձևով, այլ նորակոչիկների հետ տարված աշխատանքի
բնույթի, տոնի և բովանդակության մեջ: Նայած թե ինչպես են
աշխատում հարվածայինների հետ, ի՞նչ են տալիս նրանց և ի՞նչ
վերցնում նրանցից. հենց այստեղ է արտահայտվում կոչը բայշևի-
զիկորեն ոգտագործելու ընդունակությունը, կամ թե ոպորտունիս-
տորեն ժխտելու կամ սվաղելու փասը:

Պետք է, հարկավ, բանվոր հարվածայիններին ներդրավել,
իրազեկ դարձնել, մեր գրական կյանքի, մեր գրական քաղաքա-
կանության, մեր ստեղծագործական դիսկուսիաների հարցերին:



Բանվոր հարվածայինների կոչը պետք է մեծ չափով ուժեղացնի
բանվորական կորիզը պրոլետարական գրականության մեջ և
ստեղծի բանվորական կորիզի առաջնորդող դերը մեր բոլոր գրող-
ների վերաբերմամբ:

Բանվոր հարվածայինները Վ.ՈԱՊՊ-ի մեջ իրենց պետք է զգան
վոչ վորպես պատահական հյուրեր, այլ վորպես տերեր, և մենք,
վոր կուսակցության կողմից ուղարկված ենք աշխատելու գրակա-
նության ասպարիզում, այդ հարվածայինների հետ պետք է խո-
սենք վոչ թե փաղաքշական լեզվով, այլ վորպես մարտական ըն-
կերների հետ, վորոնք մեզ հետ միասին պատասխանատու յեն
մեր կուսակցության, մեր դասակարգի առաջ գրական ֆրոնտի հա-
մար: Վոչ միայն մենք—վոապը—պատասխանատու յենք հարվա-
ծայինների կոչն անցկացնելու և իրագործելու համար, այլ և մեր
կազմակերպության շարքերը լցրած հարվածայինների նոր խա-
վերը պետք է իրենց պատասխանատու զգան գրականության բնա-
դավառում տեղի ունեցող դասակարգային պայքարի ընթացքի
համար: Բանվոր հարվածայինները պետք է իրենց պատասխան-
տու զգան մեր կազմակերպության վերակառուցման տեմպերի,
մեր պրոլետարական գրականության աճման տեմպերի, մեր բնագա-
վառում սոցիալիստական սրշավի ծավալման տեմպերի համար:

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՄԱՍԵՌՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՐԻԶԸ, ՆԵՐՔԻՆ ՈՒՂԵԿԻՑՆԵՐԸ

Հատկապես և մասնավորապես յես ուզում եմ չեշտել բանվոր
հարվածայինների հնարավոր դերը մեր կազմակերպությունների
շարքերում յեղած ներքին ուղեկիցների դաստիարակության և վե-
րադաստիարակության գործում: Այստեղ նաև պահանջվում է
խիստ անհատական մոտեցում ներքին ուղեկցային բնույթի յուրա-
քանչյուր գրողին: Մենք պետք է կռիվ մղենք, վորպեսզի մեր ներ-
քին ուղեկիցը դառնա իսկական պրոլետարական գրող:

Դրա համար անհրաժեշտ է գործով ոգնել նրանց վերակա-
ռուցմանը, և մենք պրոլետգրական շարժման աշխատողներս չենք,
յեթե չկարողանանք այդ ընկերների համար ստեղծել ընկերական
մթնոլորտ, որը նպաստի նրանց արագ բայշևիկացմանը և գրա-
դատիրական գրական աճմանը:

Ճշմարիտ է, մեզանում կան վոմանք, որոնք ցանկանում են
չափից ավելի խճողել վոապ-ը դեռևս պրոլետարական չդարձած
գրողներով: Ցեռ հայտնում եմ իմ անձնական կարծիքը, սակայն
կարևոր եմ համարում նշել, որ այս տեսակետից մեր կազմակեր-
պությունների մի քանիսը մի քիչ անտուրֆ են մոտենում իրենց
կազմին, նոր անդամներ ընդունելուն: Այս հարցում յես կողմնա-
յատեր ըստ յերևույթին դիպա ուկրայինական տարաձայնու-
կից եմ ավելի մեծ զգուշության (ծավահարություններ): Ցեռ
այստեղ ըստ յերևույթին դիպա ուկրայինական տարաձայնու-
թյուններին, որովհետև ինձ ծավահարեց ուկրայինական պատ-
վիրակության մի մասը (Ծիծաղ): Սակայն, ընկերներ, յես մտա-
դրություն չունեյի հրահրել ուկրայինական վեճերը... (Միկի-

անկա «2–3 մարդ ենք ընդունել ավելորդ, սա ճիշտ տեղեկանք է»): Ինձ համար, ընկերներ, հիմնականը այն չէ, թե յերկու կամ յերեք, 20 կամ 30 ներքին ուղեկիցներ կան վոապպ-ի կազմակերպությունների մեջ: Կարևորն այն է, վոր պետք է ամենքին պարզ լինի, թե այդ գրողները դեռևս պրոլետարական չեն, և այդ ասվի ուղղակի, դրանով թե՛ այդ ընկերների գործը կհեշտանա և թե անշուշտ կազմակերպության գիծն ավելի ճիշտ կլինի:

Մեզանում կան շատ տարբեր ներքին ուղեկիցներ: Կան այնպիսիք, վորոնք մոտենում են մեզ, բայց դեռևս ամբողջովին մերը չեն դարձել: Կան այնպիսիք, վորոնք այսորվա պայմաններում տատանվում են, մինչդեռ յերեկ նրանք միանգամայն կայուն պրոլետարական գրողներ եյին: Հիմար յերևույթյուն կլիներ պարզապես մի կողմը նետել այդ մարդկանց: Այդ կլիներ ամենադուհիկ կոմսոմոլարծություն: Այդ կնշանակեր խրախուսել ամենաթույլ զիմադրության գիծը: Վտարել հեշտ է, իսկ ինչպե՞ս վերամշակել: Ցեվ ինքնաքննադատության կարգով յես անհրաժեշտ եմ համարում ասել, վոր Ռուսաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի աշխատանքի բացերից մեկն է մեր անբավարար ուշադրությունը դեպի այնպիսի գրողներ, ինչպես որինակ, Լուգովսկոյը կամ Բագրիցկին, վորոնց մոտավորապես մի տարի առաջ ընդունեցինք մեր շարքերը, բայց չշրջապատեցինք հարկ յեղած ուշադրությամբ: Պետք է, ընկերներ, խնայել յուրաքանչյուր գրող, գտնելով նրա հանդեպ հատուկ մոտեցում, խոսելով նրա հետ հատուկ լեզվով:

Ինչ է նշանակում խնայել գրողին: Խնայել նշանակում է ոչգրունքորեն քննադատել: Վոմանց թվում է, վոր խնայել այդ նշանակում է, ընդհակառակը, ներողամիտ վերաբերվել նրա թերությունների և գրողի հետ վարվել ավելի համեստաբար: Ցեռ կարծում եմ, վոր միայն այն ժամանակ իրոք խնայում է պահպանում են գրողին, իրոք ոգնում են նրան վերափոխելու իրեն, իսկ ոգնել վերափոխվելու նշանակում է հենց պահպանել գրողին,– յերբ իրոք ապահովում են նրա ստեղծագործական արտադրանքի ոչգրունքային քննադատությունը:

Հենց այստեղ է կաղում հատկապես մեր աշխատանքը:

## ԶԲԱՂՎԵԼ ԿՈՆԿՐԵՏ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՄԲ

Քննադատության բնագավառում մեզ մոտ գրեթե ձեղքված է: Դեռ չխոսենք մեր քննադատների մեծ մասի աշխատանքի վորակի մասին. աչքի յե զարնում այն փաստը, վոր մեր հիմնական ժուրնալներում քննադատության են յենթարկվում աննշան թվով յերկեր: Գրքերի մեծամասնությունը մնում է առանց քննադատության, վորի հետևանքով շատ բան անցնում է աննկատելի, շատ բան մենք չենք տեսնում, վնասակար շատ բան աչքից բաց ենք թողնում և նոր ու հետաքրքիր շատ բան չենք նկատում:

Վերջին ժամանակներս յերևացել են վոչ միայն շատ նոր յերկեր, այլև շատ նոր անուններ, առաջ անհայտ գրողներ, նույնիսկ ամենհայտ և չափազանց նշանակալի գրողներ: Վերցրեք, որինակ, պրոլետարական արձակի բնագավառում Միտրոֆանովի «Հունիս–հուլիս»-ը, կամ Լավրուխինի «Հերոսի վորոնումները»-ը: Վորքան եվ մենք տարաձայն լինենք, վորքան եվ անհրաժեշտ համարենք քննադատել նրանց, այնուամենայնիվ դրանք ակնառու յերկեր են: Իսկ ինչպե՞ս արձագանքեց նրանց մեր քննադատությունը: Ըստ եությունյան, վոչ մի քննադատություն չեղավ: Հետո, մեզանում կան այնպիսի բանվոր պոետներ, վորոնք առաջ են անցել մի շարք հին կոմյերիտական պոետներից: (Մի ձայն տեղից. «ճիշտ է»): Նա, ով չի հասկանում այդ, ցույց է տալիս, վոր չի ըմբռնում բնավ պրոլետարական գրականության զարգացման ընթացքը (ծափահարություններ): Սակայն մեզանում, դժբախտաբար, կան այնպիսի ընկերներ, վորոնք շատ են չարանում, յերբ նրանց ասվում է այդ: Հիշեցեք Տրոշչենկոյի և Ժարովի միջադեպը: Ցեռ չդիտեմ վորքան իրավացի յե ընկ. Տրոշչենկոն, բայց չեմ կասկածում, վոր Ժարովի քաղաքակերը, տպված «Կոմսոմոլսկայա Պրավդայում», սանձարձակություն և խայտառակություն են... (Ժարով. «Հապա Կոսարեվի հոդվածն ինչ է»): Կարիք չկա ընկ. Կոսարեվին խառնել այս գործում: Նրա նամակում խոսք չկա այն մասին, թե մեզանում չկան այնպիսի բանվոր գրողներ, վորոնք արդեն հասած լինեն վորոշ բարձրության... (Ժարով. «Իսկ յես ասե՞լ եմ»): Ցեռ ձեռքիս տակ չունեմ ցիտատներ քո յելույթներից, և դրա համար առանձնապես չեմ ցավում: Ցեվ դուք տեղ ես վիրավորվում դու, ընկ. Ժարով, քանի վոր դու հին ռապպովցի յես, կազմակերպության մեջ ես գրեթե նրա գոյության սկզբից և ունես բոլոր ավյալները պրոլետարական պոետի առաջավոր ջոկատներում քայլելու համար, և վոչ թե մերցակցելու առաջ քաշվող բանվոր պոետների հետ (ծափահարություններ):

Հենց մեր քննադատության թուլությամբ է բացատրվում այն փաստը, վոր պրոլետարական գրողների կադրերի ստեղծագործական վորձի փոխանակության գործը լավ հիմքերի վրա չի դրված: Ցեվ նույնիսկ այն, վոր հաճախ մենք ձեռնարկում ենք, չի իրագործվում բավարար չափով: Վերցրեք որինակ Ռապպ-ի արտադրական խորհրդակցությունները: Ռապպ-ի քարտուղարությունը մեծագույն անփութություն ցուցաբերեց և ուղղակի անպատասխանատվությամբ վերաբերվեց այդ բոլոր արտադրական խորհրդակցությունների՝ թե՛ թատրոնականի, թե՛ ոչկերկիստների, թե՛ պոետների,— սղագրությունները հրատարակելու գործին: Այնինչ այդ խորհրդակցությունները չափազանց կարևոր են վոչ միայն այն տեսակետից, վոր նրանք կարող եյին տալ և իրոք տվին մեծ քանակությամբ արժեքավոր նյութ, այլև նրանք կարևոր են և ոչգրունքային տեսակետից, վորպես գրողի անայնագործական աշխատանքի հին սովորությունների բեկման, բոլոր գրողների համար ընդհանուր հարցերի կոլեկտիվ քննության, դեպի գրող-

ների ամբողջ գործունեության նոր վոճը տանող ուղիներ վորոնելու որինակներ: Պատահական չէ, վոր հենց այդ արտադրական խորհրդակցություններում այնքան շատ եր խոսվում մեր քննադատության թերությունների մասին: Սակայն այստեղ ևս պետք է զանազանել: Մեր քննադատության ամեն քննադատությունը պրոլետարական քննադատության թերությունների մարքսիստական քննադատությունը չէ դեռևս: Շատ հաճախ քննադատության թերությունների մասին լսված աղաղակների հետևը ծածկված է մարքսիզմի գաղափարական հեգեմոնիայի հանդեպ յեղած դրժգոհությունը, շատ հաճախ քննադատության այս կամ այն սխալի մասին լսված աղաղակների հետևը, նույնիսկ ճիշտ նկատված, թագնված է լոկ պայքարը բայշևիկյան անհաշտության դեմ, շատ հաճախ քննադատության դեմ յեղած հարձակումը վոչ այլ ինչ է, բայց յեթե մեր մարքսիստական քննադատությունը բարձր ատիճանի վրա չտեսնելու ցանկություն, հարձակում դասակարգային թշնամու բանակից:

Լավ լսեցեք և ուշի-ուշով մտածեցեք այն մարդկանց խոսակցությունների վրա, վորոնք առանձնապես քննադատում են մեր քննադատությունն ուղղիից դրողների բանակից: Մեծ մասամբ դա դժգոհության արտահայտություն չէ այն բանից, թե այս կամ այն քննադատը հաճախ չի կարողանում հասկանալ դրականության սպեցիֆիկան, կամ թե գեղարվեստական վատ ճաշակ ունի: Դժբախտաբար, նրանց համար այդ չէ եյականը: Նրանց համար եյականն է մի կերպ թուլացնել իդեոլոգիական պահանջկոտությունը և բոլորովին մեջտեղից վերցնել այն քաղաքական չափանիշները, վորոնցով — շատ հաճախ այնքան անշնորհք կերպով — առաջնորդվում է և պետք է առաջնորդվի մեր քննադատությունը:

Մենք ամենևին արամադիր չենք վորևե չափով նվազեցնել մեր քննադատության բացերը և ժխտել նրա ընդհանուր առմամբ թերիական չափազանց ցած մակարդակը: Սակայն մենք,— Պրոլետարական գրողների ասոցիացիայի համամիութենական միավորումը,— քննադատում ենք մարքսիստական քննադատությունը վոչ թե նրա քաղաքական նպատակասլացության և բայշևիկյան անհաշտության համար — այդ ցատկությունները մենք վողջունում ենք: Ընդհակառակը, մեր քննադատությունը միշտ նշել է, վոր ժամանակակից գրողների յերկերի քննադատությունների մեծ մասում չկա բավարար չափով բայշևիկյան անհաշտություն և քաղաքական հստակություն:

Հատկապես պետք է դնել վոչ միայն քննադատության, այլև գրականագիտության, գրականության թերիայի հարցը, վորովհետև առանց ուժեղացնելու ուշադրությունը դեպի թերիան, մենք չենք կարող լավացնել մարքսիստական քննադատությունը:



## ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՍԻԱՆ ՅԵՎ ԹԵՈՐԻԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Ընկ. Ստալինի ցուցմունքը պրակտիկայից թեորիայի հետ մնալու մասին, լիովին վերաբերում է նաև գրականագիտության բնագավառին: Մեր առաջ դրված թեորիական հիմնական խնդիրն այժմ Պլեխանովի քննադատության անհրաժեշտությունն է՝ դիալեկտիկական մատերիալիզմի զարգացման նոր, լենինյան ետապի տեսակետից, վորի մեջ մենք այժմ թևակոխել ենք: Պլեխանովի ժառանգության նշանակությունը չափազանց մեծ է մարքսիստական գրականագիտության զարգացման համար: Բայց մենք մինչև այսոր բավականաչափ քննադատորեն չենք վերաբերվել Պլեխանովին: Ցեվ այդ, իհարկե, արտահայտություն է դեբորինշչինայի ազդեցության մեր տեսական կադրերի վրա, այն դեբորինշչինայի, վորի ազդեցությունն իդեոլոգիական ֆրոնտի մի շարք այլ հատվածներում ավելի եյական և լուրջ է յեղել, քան մեզանում: Սակայն փաստը մնում է փաստ: Իրոք մենք Պլեխանովին չենք վերաբերվել բավարար չափով քննադատաբար, և ըստ եության դեռևս լրջորեն չեն սկսել նրա գրական աշխատությունների լենինյան քննադատությունը:

«Նա լիտպաստու» ժուրնալում Պերևերզևի հետ յեղած դիսկուսիայի ժամանակ տրված ձևակերպումը — «հանուն պլեխանովյան որթոդոքսիայի» — վոչ մի կերպ չպետք է արդարացվի ինչ-վոր նկատառումներով այն մասին, թե Պերևերզևի հետ յեղած դիսկուսիայում մենք պետք է նրան հակադրեյինք Պլեխանովը և դրա համար իրավունք ունեյինք տալու նման լոզունգ: Վո՛չ: Այդ լոզունգն այդ ժամանակ ել սխալ եր: Ցես անհրաժեշտեմ համարում այդ ասել ամենայն պարզությամբ և կտրականությամբ: Մենք ամենքս գտնում ենք, վոր մեր թեորիական գիծը հիմնականում ճիշտ եր: Վոմանք այժմ ժխտում են այդ: Բայց մենք, կրկնում եմ, գտնում ենք, վոր վոչ միայն մեր քաղաքական գրական և ստեղծագործական, այլև թեորիական գիծը հիմնականում ճիշտ եր: Բավական չէ ասել, թե մեր գիծն ապահովեց պրոլետարական գրականության վերելքն իր զարգացման ավելի բարձր ատիճանի վրա: Պետք է խոստովանել հարցին պատասխանելուց: Զնայած բոլոր սխալներին, թե՛ քննադատված և թե՛ դեռ չքննադատված, ՌԱՊՊ-ի և ՎՈԱՊՊ-ի թեորիական գիծը հիմնականում ճիշտ է յեղել (ծափահարություններ): Սրանով, իհարկե, մեր սխալները չեն փոքրանում, ընդհակառակը, հենց նման հարցադրումը թելադրում է մեզ ել ավելի մեծ պահանջներ դնել մեր առաջ: Բավական չէ սխալները նշել, անհրաժեշտ է կարողանալ քննադատել նրանց: Բավական չէ միայն քննադատել այդ սխալները, անհրաժեշտ է հասկանալ, թե վորտեղից են գալիս նրանք, վերացնել հետագա սխալների հնարավորությունը: Պետք է հասկանալ, թե արդյոք այդ սխալները կապված չե՞ն իրար հետ, չկա՞

արդյոք սխալ հայացքների մի ամբողջ սիստեմի առաջացման վտանգ:

Մեծ չափով կոգնի մեզ դեբորինականության վերաբերման աշխատանքը, վոչ թե ընդհանրապես փիլիսոփայության բնագավառում, այլ դեբորինշչինայի ազդեցությունները մեզ վրա, մեր աշխատանքի, մեր բնագավառի վրա:

## ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԻՏԱՏՆԵՐԻ ՎԱՐՊԵՏ ՊՐԻՎԱՏ-ԴՈՑԵՆՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այն պրիվատ-դոցենտների մի մասը, վորոնք մասնակցել են մեր սխալների քննադատության մեջ, և դարձրել են այդ իրենց միակ արհեստը, կարծելով, թե դրանով նրանք վորևե կապ կունենան կամ ունեն գրականության հետ, այդ քննադատությամբ զբաղվում են չափազանց տափակ, գռեհիկ և հաճախ նույնիսկ անբարեխիղճ կերպով: Այդ բացատրվում է նրանով, վոր նրանց տեսական քննադատությունը գրեթե միշտ հանդիսանում է պոլիտիկանական խմբակայնության զենք կամ վարագույր: Ուստի նրանք նկատում են Ցերմելովի և Լիբեդինսկու ամենամանր սխալները, աչքից բաց թողնելով և հարկ չդեղած ուշադրություն չդարձնելով մեր վոստպական ղեկավարության մյուս ընկերների ամենալուրջ սխալներին: Ահա, որինակ, Աֆինոգենովի գիրքը — «Թատրոնի ստեղծագործական մեթոդը»: Ընկ. Աֆինոգենովը հին նապաստավոցի է, բայց պետք է ուղղակի ասել, վոր նրա գրքի մի շարք գրությունների վրա դրված է դեբորինշչինայի հարյուր տոկոսային ազդեցության կնիքը: Ցեթե ինքն Աֆինոգենովը չհասկանար այդ, յեթե նա չիմոստովաներ իր սխալները, յեթե նա ինքնաքննադատությամբ հանդես չդար, ապա մենք մեր կապերը կկտրեյինք նրա հետ: Մենք կասեյինք. դու դեբորինաբանում ես, մեր ճանապարհները բաժանվում են: Սակայն մենք արդեն հասունացել ենք մինչև այն աստիճան, վոր հասկանում ենք, թե կապերը կարել հեշտ է, դժվարը ոգնելն է ուղղվելու, դժվարն ըստ եությունի քննադատելն է, դժվարը բայշևիկորեն ոգնելն է ինքնաքննադատությամբ զբաղվելու: Մեր գիծն է՝ սկզբունքային լիակատար հստակության և բայշևիկյան անհաշտության հիման վրա ուղղել մարդկանց, ոգնել նրանց ուղղվելու, չցրել կադրերը:

Ահա, որինակ, ընկ. Ցերմելովի ոճիքից բռնում են ամենքից ավելի: Դրա համար կան հիմքեր: Նա կատարել է մեծ սխալներ, սակայն նա արդեն գրել է ինքնաքննադատական հոդված, գրել է անկեղծորեն, նա չի պնդում իր սխալների վրա, նա ինքն իրեն չի հակադրում բայշևիկյան քննադատությանը: Ցերմելովը հասկանում է, թե ինչ է հարկավոր իրեն— ինչպես և մեզ ամենքիս — վոչ միայն սովորել և սովորել, այլև վորոշ բաներում կրկին սովորել: Ցերմելովն առաջին տարին չէ, վոր աշխատում է մեզ հետ: Նա ստուգվել է վոչ միայն Լիտֆրոնտի հետ յեղած մի դիսկուսիայում, այլ մի շարք գրական դիսկուսիաներում, վորոնց մեջ



ձևակերպվում եր և ձևակերպվեց մեր շարժման գիծը: Ցեթե նա— Ցերմելովը — ինքն իրեն դներ պրոլետարական կազմակերպության քննադատությունից սրդողած ինտելիգենտի դրության մեջ, իհարկե, նրա համար տեղ չեր լինի ՌԱՊՊ-ի ղեկավարության մեջ: Բայց այդպես չէ: Ցեվ քանի այդպես չէ, ընկ. Ցերմելովն առաջվա պես կմնա մեր քարտուղարության անդամ:

Նույնը կարելի յե ասել ընկ. Լիբեդինսկու վերաբերմամբ: Վոչ մի կասկած չկա այն մասին, վոր նա ունեցել է շատ սխալներ, վոր նա վերջերս նաև սխալվեց Դեմյան Բեդնու վերջին յերկերի գնահատման մեջ: Բայց ինձ թվում է, վոր ընկ. Լիբեդինսկին իր մի շարք սխալները — դեռևս վոչ բոլորը, բայց շատ-շատերը — «ՌԱՊՊ» ժուրնալի № 1-ում քննադատում է շատ ավելի լուրջ և հիմնավոր կերպով, քան նրա աջ թեքման մասին բղավող բոլոր պրիվատ-դոցենտները միասին վերցրած: Ցեվ յեթե ընկ. Լիբեդինսկին չզբաղվեր նման ինքնաքննադատությամբ, նա հարկավ չեր մնա մեր շարժման ղեկավարության մեջ: Բայց Լիբեդինսկին անկեղծ և բայշևիկորեն զբաղվում է ինքնաքննադատությամբ: Նա ամենաարժեքավոր պրոլետարական գրողներից, պրոլետգրական շարժման ամենից ավելի կոփված ղեկավար աշխատողներից մեկն է:

Մենք գիտենք, ընկերներ, թե յուրաքանչյուր իդեոլոգիական բնագավառում — և մասնավորապես մեր բնագավառում, վորքան դժվար է կադրեր պատրաստելու գործը, ինչ դժվարությամբ ստեղծվում և աճում կուսակցական կորիզը, ինչ դժվարությամբ են ընտրվում մարդիկ, վորոնք ընդունակ լինեն վարելու բայշևիկյան քաղաքականություն: Ցեվ մենք համարձակ ծավալում ենք ինքնաքննադատությունը,— դեռևս հարկ յեղած չափով չենք ծավալել, բայց ծավալում ենք և պետք է ծավալենք, գիտենալով, վոր ինքնաքննադատությունը մի միջոց է, մյուսների շարքում, Ա'լ ավելի համախմբելու կադրերը, Ե'լ ավելի կոլեկտիվություն մտցնելու նրանց աշխատանքի մեջ, Ե'լ ավելի ամրապնդելու աճող կորիզը, և վոչ թե մարդկանց վատնելու, ցիր ու ցան անելու, վորին մղում են մեզ դեմանական այն ուսանողների տիպի պրիվատ-դոցենտները, վորոնց մասին հաճախ խոսում և կրկնում է ընկ. Ֆադեյեվը:

Այդ պրիվատ-դոցենտներն արդեն շատ են վնասել մեր շարժմանը: Իրենց նմանությամբ հանդերձ՝ նրանք նույնպես վորոշ դանդաղություններ ունեն իրարից: Ա'յ, որինակ, Թաթուլովը: Սա կլասիկ, անխառն, հարյուրտոկոսային և որթոդոքսալ պրիվատ-դոցենտ է: Հետաքրքիր է, վոր Լիտֆրոնտի հետ յեղած դիսկուսիայի ժամանակ նա ասում եր — այդ տպված է «Նա Ռուբեժ Վաստոկա» ժուրնալում — թե, ընկերներ, պետք է ավելի խոհեմությամբ վերաբերվել բլոկին, այսինքն՝ Լիտֆրոնտին: Ձե՞ վոր նրանում դտնվում են այնպիսի խոշոր մարքսիստներ, ինչպես Բեսալով, Գելֆանդ և Զոնին (ծիծաղ): Պրիվատ-դոցենտը պրիվատ-

դոցենտին հեռվից ճանաչում է: Այս հայտարարությամբ Թաթուլովը սպառիչ կերպով բնորոշեց թե՛ իրեն և թե՛ պերևերզևական հայտնի յեռյակը:*

Սակայն պրիվատ-դոցենտները միշտ արդեն հղկված չեն լինում, ինչպես Թաթուլովը: Լինում են և անսանձ պրիվատ-դոցենտներ: Նման սանձարձակ պրիվատ-դոցենտ է յերեկ այստեղ հանդես յեկող Ռաժկովը: Ցերը նրան խոսք տրվեց, ինչ վոր մեկը բացականչեց, թե ահա «դաղարած փոթորկի վերջին ամպը»: Իհարկե, այդ հրեշավոր չափազանցություն եր — «փոթորկի» և «ամպի» վերաբերյալ: Այդ վոչ մի փոթորկային ամպ չե, այլ պարզապես անվարտիկ ամպ (ծիծաղ):

Ինչ տոնով հանդես յեկավ այդ անսանձ պրիվատ-դոցենտը: Նա բառացի ասաց· պետք է ոգտագործել բոլոր լեդալ հնարավորությունները: Նա ծաղրեց մեզ, ասելով — տեսնո՞ւմ եք, որթոդոքսնե՛ր են, պաշտոնական քննադատությո՛ւն: Կարո՞ղ է արդյոք բայշևիկը դատել այդ տոնով: Պարզ է, վոր այդ մանրբուրժուական ոպոզիցիայի տոնն է, վոր Ռաժկովը հանդիսանում է նրա լիազոր-ներկայացուցիչը (ծափահարություններ): Ռաժկովը այստեղ մատնացույց արեց մեր սխալները, վոչ միայն չեղած, այլև յեղածները, ինչ վոր ակներև սխալ ցիտատ դատավ մի ինչ-վոր հին աշխատության մեջ: Դրա համար յես նրան կարող եմ միայն յերախտապարտ լինել: Բայց յերբ Ռաժկովը փորձեց վերադրել մեզ սխալների մի ամբողջ գլուխ կուլտուրական հարցերի բնագավառում, ապա մենք դրան ըստ արժանվույն պատասխանեցինք միայն ծիծաղով: Ցեվ իրոք, ո՞վ չգիտե, վոր հենց մենք, նապատվիրներս, կռվել ենք Իոնովի, Սլեպկովի, Լուպպոլի, Բորոմնիկովի և մյուս բոլոր դերբրինյան և բուխարինյան աշակերտների դեմ՝ կուլտուրայի բնագավառում: Ընկ. Սուտիրինն ասեղծագործական հարցերի շուրջը յեղած վիճաբանությունների ժամանակ հիանալի կերպով խոսեց այն մասին, վոր անհրաժեշտ է վերլուծել մեր սխալները, յելնելով այն տեսակետից, թե արդյոք նրանք արտահայտում են ճիշտ գծից նահանջելը, թե ուղղակի սխալ տեսակետի անցնելը: Թե՛ այդ սխալները հայացքների սխալ մի սիստեմի բաղկացուցիչ մա՞սն են, թե ճիշտ գծի մշակման ընթացքում յեղած վորոշ, թեև վոչ պարտադիր, սայթաքումներ, կամ թե դաղափարական թշնամու դեռևս չհաղթահարված ազդեցության արտահայտություն և այլն, և այլն:

Ցես կարծում եմ, վոր մենք բոլորս շատ ուրախ կլինենք, յեթե կարելի լիներ ջոկել հատուկ մի բրիգադ, վորը նայեր մեր բոլոր գրքույկները,— իմ, Ցադեյեվի, Ցերմելովի և մյուս բոլորի, արտադրեր բոլոր սխալ ցիտատները, դուցե այդ գործին

[1]) Այս յեռյակից այժմ պետք է ջոկել ընկ· Գելֆանդին, նա անկեղծորեն հեռացել է Պերևերզևից, սկզբունքորեն վերանայում է իր լիֆշիցական անցյալը, նա փորձում է գործով ոգտակար լինել պրոլետարական պրակտիկայանությանը:



կարելի յե մասնակից դարձնել նաև Ռաժկովին, յես անձնապես առաջուց պատրաստ եմ նվիրել նրան վորպես մասնավոր սեփականություն բոլոր այն սխալ ցիտատները, վոր նա կդտնի ինձ մոտ (ծիծաղ, ծափահարություններ): Ցեվ նման աշխատանք, իհարկե, արժե կատարել:

Սակայն նա, ով կարծում է, վոր միայն այդ բավական է ինքնաքննադատության ծավալման համար, նա լիջեցնում է նրա նշանակությունը, նա ժխտում է ինքնաքննադատական աշխատանքի մեջ անհրաժեշտ խորությունը և լրջությունը: Ինքնաքննադատությունը բնավ չի նշանակում 1931 թ· տեսակետից նայել 1926–27, կամ 1928 թ· հոդվածները, և մանավանդ կտրելով առանձին ցիտատներ կոնտեքստից և չհասկանալով այս կամ այն տեսակետի, հայացքների այս կամ այն սիստեմի, այս կամ այն գծի պատմական զարգացումը: Դա միայն ինքնաքննադատության ծավալման աշխատանքի փոքրիկ մասն է, այն ել՝ վոչ այնքան դժվար, և պետք է ասել, հաճախ շատ հեշտ է, յերբ հին աշխատությունները նայվում են վոչ թե նրա համար, վորպեսզի հինը գնահատվի նոր հարցերի տեսակետից և նրանց ճիշտ լուծման համար ,այլ սխոլաստիկ ցիտատակուվի համար:

Վերջին շրջանը մեզանում հատկանշվում է ինքնաքննադատության անժխտելի ուժեղացումով: Սակայն, հարկավ, այդ դեռ միայն սկիզբն է, վորովհետև դեռ մինչև այսոր ել մեզանում ինքնաքննադատությունն անբավարար է: Սակայն պետք է նկատի ունենալ, վոր մենք կարողացանք հաջողությամբ ջախջախել լիտենեալ, վոր մենք կարողացանք հաջողությամբ ջախջախել լիտենեալ, վոր դիսկուսիայի ժամանակ մենք ֆրոնտը նաև այն պատճառով, վոր դիսկուսիայի ժամանակ մենք չեյինք բռնել Հռոմի անսխալական պապերի դիրքը, այլ հարձակվելով հակառակորդի վրա, միաժամանակ ծավալում եյինք ինքնաքննադատություն բոլոր շարքերում: Ցեվ մենք, կրկնում եմ, ամենևին հավակնություն չունենք անսխալական լինելու: Ցեվ հիմք ել չունենք նման հավակնություններ ունենալու, մենք աշխատում ենք չափազանց դժվար մի բնագավառում, վորտեղ կուսակցական կադրերը դեռ նոր են սկսում հասնել, մի բնագավառում, վորն առաջ այնքան ել մշակված չի յեղել մարքսիզմի կողմից, մի բնագավառում, վորտեղ պրոլետարական բայշևիկյան կադրերը չափազանց ջահել են: Վերցրեք ՌԱՊՊ-ի անդամների միջին տարիքը — ղեկավարության պատիվը չգցելու համար յես չեմ ասի մեզանից յուրաքանչյուրին ընկնող տարիների միջին քանակը (ծիծաղ):

Այդ, իհարկե, զվարճալի յե: Սակայն պարզ է, վոր այդ ջահել կադրերի գործը չափազանց դժվար է, նրանք հաճախ նոր են ձևավորվում մեր կազմակերպության մեջ, նրանք բոլորն աճում են մեր շարժման հետ միասին,— ուրիշ կերպ ել չի կարող աճել կուսակցական կորիզը: Ուրիշ կերպ, միայն կաբինետներում մշակում են բեսպալովյան տիպի պրիվատ-դոցենտներ, վորոնք ամոթալի պարտություն են կրում, յերբ դեմ առ դեմ են դալիս գրական իրականության հետ:

Այո, մենք ունեցել ենք շատ սխալներ, և նշելով աշխատանքի դժվարությունը, մեր կադրերի ջահելությունը, մենք միայն վորոշ չափով բացատրում ենք այդ սխալները, և վոչ թե արդարացնում, վորովհետև այդ բոլոր սխալները պետք է հասկանալ վոչ միայն վորպես հետևանք մեր շարժման ջահելության, այլև պետք է քննել մեր բնագավառում տեղի ունեցող դասակարգային պայքարի լույսով: Լենինը սիրում եր հիշել կարծեմ Մարքսի այն խոսքերը, թե սխալը թողնել չներքված, նշանակում է խրախուսել մտավոր անազնվությունը: Սքանչելի խոսքեր են, վորոնք պարտավորեցնում են մեզ ուժեղացնել բայլշևիկյան ինքնաքննադատությունը: Բայլշևիկյան ինքնաքննադատությունը միշտ ոգնում է բարձրացնելու ղեկավար աշխատողների հեղինակությունը, վկայելով նրանց իսկական կուսակցականության մասին:

## ՎԱՐՈՆՍԿԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՐԴՄ Է ԱՐԴՅՈՔ ՎՈՐՊԵՍ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳ

Ինքնաքննադատության ծավալումը կոգնի մեզ վոչ միայն հաղթահարելու, այլև վերջնականապես ջախջախելու վարոնսկիականությունը: Պետք է ասել, ընկերներ, վոր մեր պլենումում ստեղծագործական հարցերին նվիրված դիսկուսիայում ուշադրությունը հավասարապես չբաշխվեց: Շատ-շատ եյին խոսում Լիտֆրոնտի մասին, քիչ՝ վարոնսկիականության մասին: Այնինչ վարոնսկիականությունը մնում է բուրժուական ազդեցությունների արտահայտության գլխավոր ձևը պրոլետարական գրականության մեջ:

Վարոնսկիականությունը գլխավոր թշնամին է ստեղծագործական մեթոդի հարցերի մշակման ժամանակ: Վարոնսկիականության ազդեցությունն ամենից ավելի յե արտահայտվում մեր գրողների պրակտիկայում: Պետք է նաև աչքի առաջ ունենալ վարոնսկիականության նոր ձևերը: Վոչ բոլորը հանդես են գալիս առաջվա պես այնքան բացահայտ, ինչպես «Как мы пишем?» հայտնի ժողովածուի մի քանի հեղինակները: Միայն այդ ժողովածույով կարելի յե դատել, թե վորքան է ուժեղացել շեղումավորումը նախկին ուղեկցության շարքերում և վորչափով ազդել է նրա վրա բուրժուական իդեոլոգիան: Այդ հեղինակներից վո՞րն է, վոր վարոնսկիականության տեսակետից գրավում է ամենահետադիմական դիրքը: Ցեվդենի Զամյատինը: Այդ կատարյալ ռեակցիոն գրողի հոդվածներից բերված ցիտատները կարելի յե համեմատել ինքն իրեն մարքսիստ անվանող Վարոնսկու գրվածքների վոչ միայն վոգու և խմաստի հետ, այլ հեշտությամբ կարելի յե արձանագրել այդ ցիտատների նույնությունը: Կարելի յե ամենամեծ ճշտությամբ հաստատել — ուղեկիցների վերափոխման աստիճանը կարելի յե չափել նրանով, թե վորչափով են նրանք հեռացել Վարոնսկու թեորիայից արվեստի ընդհանուր հարցերում և մասնավորապես ստեղծագործական մեթոդի հարցերում: Մի թե սա



չի հանդիսանում վարոնսկիականության դասակարգային եյության նոր և միանգամայն դոհացուցիչ գնահատականը:

Ցեղ անհրաժեշտ եմ համարում կրկին շեշտել մեր հին ձևակերպումները վարոնսկիականության մասին, վորպես գլխավոր վտանգի, վորովհետև մենք չենք կարող վերջնականապես ջախջախել Լիտֆրոնտն առանց ուժեղացնելու կրակը վարոնսկիականության դեմ:

Հիմնական հարցում — աշխարհահայացքի հարցն արվեստագետի ստեղծագործության մեջ — ուղղակի հյուսվում և միաձուլվում են թե՛ բացահայտ աջ, և թե՛ այսպես կոչված ձախ ոպորտունիստների տեսակետները: Ցեվ սխեմատիկ և պայմանական կերպով բաժանելով ռացիոնալիստական և եմպիրիկական հոսանքներն ստեղծագործական դիսկուսիայում, չեն հասկանում, և նույնիսկ ուղղակի ժխտում են աշխարհահայացքի դերը, այսինքն՝ այն, վորի վրա մենք դնում ենք շեշտը, պայքարելով պրոլետարական գրականության գաղափարական բարձր մակարդակի համար: Այդ մեր կարևորագույն խնդիրն է: Պրոլետարական գրականությունը միայն այն ժամանակ և այն չափով մի քայլ առաջ կլինի մարդկության գեղարվեստական զարգացման մեջ, յերբ և վոր չափով վճռականորեն և անշեղ կբարձրանա նրա գաղափարական մակարդակը:

Մեզ պետք են գրողներ, վորոնք, ընդունակ են վերցնել մեր դասակարգի մեծ գաղափարները վոչ թե սխեմատիկորեն, վոչ թե գռեհկացնելով աղքատացնելու այդ գաղափարները, վոչ թե գռեհկացնելով նրանց, այլ գրողներ, վորոնք փիրոք կանգնած լինեն այդ գաղափարների բարձրության վրա: Մեզ պետք են գրողներ, վորոնց քաղաքական վորակավորումը սահմանափակված չե միայն թերթերի հերթական առաջնորդողների հետ ծանոթանալով: Մեզ պետք են գրողներ, վորոնց համար մատերիալիստական դիալեկտիկան չլինի գեղանի, գուցե և նույնիսկ ցանկալի անծանոթուհի: Մեզ պետք են գրողներ, վորոնց մասնակցությունը սոցիալիստական շինարարության պրակտիկայում չլինի լոկ ռեկլամային աղմուկի մասնակցություն: Ինչպե՞ս է պրոլետարական գրողների մեծամասնության գաղափարական մակարդակը: Դեռևս շատ ցած, դեռևս շատ և շատ անհամապատասխան այն խնդիրներին, վոր դնում է բանվոր դասակարգը խորհրդային արվեստի առաջ: Ռեկոնստրուկցիոն շրջանի թեմատիկային տիրապետելու անհրաժեշտությունը հենց հանի թեմատիկային տիրապետելու անհրաժեշտությունը ընդգծում է աշխարհահայացքի հարցերի տուկ ուժգնությամբ ընդգծում է աշխարհահայացքի հարցերի նշանակությունը:

Ինչո՞ւ մենք պետք է կռվենք վերակառուցման շրջանի պատկերացման յոգունդի համար: Վորովհետև վերակառուցման շրջանը հանդիսանում է պրոլետարական հեղափոխության զարգացման նոր հանգրվան, նոր և ել ավելի նշանակալի բովանդակությամբ: Հետևաբար, վերակառուցման թեմատիկային տիրապետելու համար պահանջվում է գրողից աշխարհ-

հահայացքի ավելի բարձր մակարդակ, գաղափարական ավելի մեծ խորություն, սոցիալական իրականությունն ըմբռնելու ավելի մեծ կարողություն, վորն անհնար է առանց խակապես տիրապետելու մատերիալիստական դեալեկտիկային: Վերակառուցման շրջանի թեմատիկայի համար պայքարելը, միաժամանակ, նշանակում է պայքարել պրոլետարական արվեստագետի ավելի բարձր աշխարհահայացքի համար: Լիտֆրոնտի մեծագույն դժբախտությունը և մեղքը կայանում եր վոչ միայն նրանում, վոր լիտֆրոնտականները չեյին հասկանում այս հարցադրումը, այլև նրանում, վոր նրանք ակտիվ կերպով պայքարում եյին նրա դեմ:

## Ի՞ՆՉ ԵՐ «ԼԻՏՖՐՈՆՏԸ»

Մենք այժմ ամփոփում ենք «Լիտֆրոնտի» դեմ մղված պայքարի արդյունքները: Ի՞նչ եր Լիտֆրոնտը: Արդյոք հակադրությո՞ւն մեր վերակառուցման անբավարար լինելու դեմ, հակադրությո՞ւն մեր սխալներին և վրիպումներին: Թե դա մի բլոկ եր այնպիսի հոսանքների միջև, վորոնք արտահայտում եյին մանր-բուրժուական տատանումներ պրոլետարական գրականության մեջ՝ նրա զարգացման նոր ետապին անցնելիս, մի բլոկ, վոր ներդաշնակ եր Սերցով-Լոմինաձեյի խմբակին: Այս հարցը պարզ է միանգամայն պարզ և վորոշ պատասխան: Այստեղ կարիք չկա վոչ մի մանևրի, վորով կցանկանային գրաղվել շատերը, վորոնք այսոր խոսքով ընդունում են մեր գծի ճշտությունը: Զգետք է մոռանալ, վոր կան նաև այնպիսիները, վորոնք այսոր ձայն տալով մեր գծին, միաժամանակ իրենց անցյալում «Լիտֆրոնտի» մեջ լինելն արդարացնում են, ասելով, թե այնտեղ ել նրանք կռվում եյին ՎՈԱՊՊ-ի վերակառուցման և խնդանդամության ծավալման համար: Հենց դրանով, բնականաբար, «Լիտֆրոնտի» վարկը վորոշ չափով վերականգնելու փորձեր են լինում, հետևաբար անուղղակի կերպով արդարացնում են իրենց անցյալ վարքագիծը:

Հարկավ, յերբ միքանի բանվոր ընկերներ — բնավ յերբեք 16 խմբակ Լենինգրադում, վորովհետև «Լիտֆրոնտը» յերբեք 16 խմբակ չի ունեցել,— գնում եյին Լիտֆրոնտի հետևից, ապա նրանցից մի քանիսն այդ ձևով արտահայտում եյին վոչ թե իրենց գիծը ՌԱՊՊ-ի գծին հակադրելու ցանկությունը, այլ անկեղծորեն ուզում եյին ոգնել պրոլետարական գրականության բայլշևիկյան զարգացմանը: Այդպիսիք յեղել են: Յեվ այսոր մենք նրանց մասին հիշատակում ենք այն պատճառով, վոր այդ ընկերները հենց իրենք տալիս են ամենից ավելի անողոք, անհաշտ, խիստ և մարտական գնահատական թե՛ «Լիտֆրոնտին» և թե՛ իրենց լիտֆրոնտյան անցյալին:

Մի շարք տեղերում նախկին լիտֆրոնտականները դեռ ապրում են վրեժխնդրական տրամադրություններով: Դրան կարելի յե վերաբերվել ամենայն հանգստությամբ — նրանց գործն անհույս



է: Սակայն մեզ համար վնասակար կլիներ յենթադրել, թե լիտֆրոնտականությունն արդեն վոչնչացած է և արմատախիլ արված: Այդ աշխատանքի առաջին բաժինը դեռ առաջիկայումն է:

Բավական չե հաղթել թե՛ վարոնսկիականությանը և թե՛ լիտֆրոնտականությանը: Պետք է հասկանալ, վոր մեզ թշնամի այդ հոսանքները վերջնականապես ջախջախել կարող ենք լոկ մեր վերակառուցման տեմպերով, լոկ վերակառուցման պրակտիկայով, նրա արդյունքների ցուցադրությամբ: Յեվ նույնիսկ, լիտֆրոնտական կամ վարոնսկիական բնույթ ունեցող այս կամ այն յելույթները մերկացնելիս, մենք պետք է խորապես քննենք և վերլուծենք, թե արդյոք այդ յելույթների մեջ յուրահատուկ ձևով չե՞ն արտահայտված և արտացոլված, ինչպես թեք հայելու մեջ, մեր շարժման հիվանդությունները:

Մենք հաղթեցինք վարոնսկիականությանը և վերջնականապես հաղթում ենք «լիտֆրոնտը» հենց այն պատճառով, վոր պրոլետարիատի գրականության յերկերը, նրա պրակտիկան և տեսական արտադրանքը հաստատում են գլխավոր դրույթների ճշտությունը: Վերջին օրինակներս մեկը Ստավսկու «Разбег» գիրքն է: Այս գրքում իհարկե կան մի շարք մեծ թերություններ: Սակայն այդ իսկական, բայլշևիկյան մեծ յերկ է, վորը գտնվում է պրոլետարական գրականության գլխավոր ճանապարհի վրա և ապացուցում է մեր ստեղծագործական լոզունգների հաղթանակը: Յես հատկապես նշում եմ ընկ. Ստավսկու գիրքը վորպես օրինակ, թե ամենատուտալ թեմատիկան ամենքից լավ ծավալում են նոպատավոյի գրողները:

Մենք, ցավոք սրտի, այդ լուսաբանում ենք շատ անբավարար չափով: Մենք դեռևս չենք տվել վոչ մի գրքույկ, նույնիսկ վոչ մի լուրջ հոդված ստեղծագործական դիսկուսիայի արդյունքների մասին: Մենք դեռևս մինչև այժմ չենք ամփոփել այն ամբողջ կոլեկտիվ աշխատանքի արդյունքները, վոր կատարել է մեր շարժումը ստեղծագործական մեթոդի դիսկուսիայով: Մենք նույնիսկ չենք դումարել թեկուզ Լիտֆրոնտի հետ մեր ունեցած վերջին դիսկուսիայի արդյունքները: Մինչդեռ նրանք, պարտվելուց և ջախջախվելուց հետո մեզանից առաջ են անցնում այդ գործում: Որինակ վերջերս մի յան ռուսերեն լեզվով լույս են տեսել յերեք գիրք—Մայդելի, Ռոդովի և Ռաժկովի:

Մայդելի «Краткий очерк современной литературы» գրքույկը նույնքան հավակնոտ է, վորքան մանր-բուրժուական: Ճիշտ է, Մայդելը տալիս է այնտեղ այն ամենը, ինչ նա կարող է տալ, բայց ավա՜ղ, նա շատ քիչ բան կարող է տալ,—յերկու-յերեք լիտֆրոնտական մտքեր, Գորբաչյովի և Բիսպալովի գրույթների մի քանի մեկնություններ: Մի արտադրանք, վորի համար պահանջվում է վոչ թե ուղիղ, այլ մկրատի և կլեյի վարպետ գործածություն:

Ռոդովի գրքույկը, վոր լույս է տեսել «На посту» անվան տակ, առհասարակ գրականության հետ վոչ մի կապ չունի: Նա իրոք

թայֆայականության, ինտրեգանության, մանր խմբակայնության, մանյուքներ կատարող անտաղանդ մարդկանց անտաղանդ մանյուքների պոստի վրա յե գտնվում (ծափահարություններ)։

Ցեվ վերջապես Ռաժկովը։ Նրա վրա, իհարկե, չարժե կրկին կանգ առնել։

Մենք կռվում հաղթեցինք։ Դիսկուսիայում մեր հաղթակն եր։ Իսկ նրանք առաջ են անցնում մեղանից... (Կիրշոն. «Նրանց միայն այդ կմնա, մի խլի մարդկանց վերջին ապավենը»)։ Վոչ, յես չեմ կարող դրան մոտենալ լիբերալ մարդասիրության տեսակետից, պերեվալյան կարեկցությամբ դեպի մարդիկ ընդհանրապես (ծիծաղ)։ Ռոդովը կենդանի դիակ է, վոր վարակում է շրջապատը։ Մենք նրան արդեն գնդակահարել ենք գաղափարապես։ Պետք է նրան վերջնականապես թաղել գրականապես։

## «ԼԻՏՖՐՈՆՏԸ» ՑԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

«Լիտֆրոնտի» կապակցությամբ յես ուզում եմ նշել միայն այն կողմը, վորը մեղանում սովորաբար անտես է առնվում։ Խոսքը վերաբերվում է «Լիտֆրոնտին» և ազգային հարցին։ Ի՞նչ տարբեր եյին համախմբվել «Լիտֆրոնտի» շուրջը, կամ կողմնակից եյին նրան։ Բելոռուսիայում, որինակ, Կուպցեվիչը։ Ո՞վ է Կուպցեվիչը։ Ազգային դեմոկրատ։ Ո՞վ եր համակրում «Լիտֆրոնտին» Ուկրաինայում—Պրոլիտֆրոնտի ամենավատ տարրերը։ Ազրբեջանի գրականության մեջ «Լիտֆրոնտի» պաշտպան հանդիսացավ Ալի-Նազիմը—մի անսկզբունք յերիտասարդ, վորը միաժամանակ աշխատակցելիս է յեղել Թ'ե բայլևիկյան մամուլին և թե քեմալական, թյուրքական մամուլին։ Անդրկովկասում ընդհանրապես «Լիտֆրոնտի» լիազոր ներկայացուցիչն եր Թաթուլովը, վորի գործնական աշխատանքը մինչև ուղն ու ծուծը թափանցված եր Անդրկովկասը ՎՈԱՊՊ-ի մյուս բոլոր ջոկատներին հակադրելու նացիոնալիստական ցանկությամբ։

Ահա ինչ տարբեր եյին խմբվել «Լիտֆրոնտի»» շուրջը։ Ահա այն մարդիկ, վորոնց վրա հենվում եր նա, վորոնց նա առաջ եր քաշում և պաշտպանում։ Ցեսս պետք է ավելացնեմ, վոր այդ բոլոր տարրերի որիենտացիան դեպի «Լիտֆրոնտը» բացատրվում է վոչ միայն թշնամու բնական ցանկությամբ՝ պաշտպանելու «Լիտֆրոնտը» վորպես մի ուժ, վոր կարող է քայքայել պրոլետ. գրական շարժումը։ Վոչ, այստեղ գործն ավելի բարդ է և խոր։ Սա հատուկ քննություն պահանջող մի թեմա յե։ Այստեղ կարևորն այն է, վոր ստեղծագործական հարցերի մասին «Լիտֆրոնտի» ամենայեռանդուն տեսաբանների և գրականության թեորիայի ասպարիզում նացիոնալ-դեմոկրատական հոսանքների ամենաբացահայտ ներկայացուցիչների հայացքները զուգադիպում են։ Հիշեցեք, վոր Խվիլովոյը Ուկրաինայում և Զարեցկին Բելոռուսիայում հանդես եյին գալիս ռոմանտիկայի և ռոմանտիզմի համար պայքարելու դրոշի տակ։ Հիշենք, վոր գրեթե բոլոր նացիոնալ-դեմոկրատական հոսանքները հարձակվում եյին մեղ վրա գեղարվեստական մեթոդի հարցերի գծով։ Ցեվ կարելի յե արձանագրել, իհարկե, վոր նրանց պահանջը «տվե՛ք ռոմանտիկա»—հյուսվում եր իրենց ժողովուրդների ինքնատիպության թեորիաների, իրենց անցյալը իդեալականացնելու ռոմանտիկ ցանկության հետ և այլն, և այլն։

Պետք է տեսնել, հարկավ, վոչ միայն նմանությունը, այլև տարբերությունը, աչքից բաց չթողնելով, անշուշտ, այն յուրահատուկ զուգադիպությունը, վոր ստեղծագործական հարցերում նկատվեց այստեղ «Լիտֆրոնտի» և Զարեցկու հայացքների միջև։

Ռաժկովը ինչ վոր բաներ ասաց այստեղ ռոմանտիկայի և Շիլլերի մասին։ Սակայն յեթե նույնիսկ տարրական դպրոցական քննության յենթարկենք Ռաժկովին, խնդրում կերեվա, վոր նա Շիլլերին դիտե կամ ուրիշներից լսելով, կամ գեմնազիական դասագրքից, դուցե և նույնիսկ այդ դասագրքի գլուխների ցանկից... (մի ձայն. «Դուցե գնացել է Վախտանգովի թատրոնը»)։ Դուցե և գնացել է Վախտանգովի թատրոնը... (Ժարով. «Յեթե ապրում է Արբատում»)։ Դուցե և այդպես (ծիծաղ)։ Բայց անհոդ կացեք։ Ռաժկովը միշտ էլ կվիճի և կհակաճառի ձեզ Շիլլերի մասին, վորովհետև նրա համար այդ հեշտ է—կվերցնի մի-յերկու գիրք, դուրս կքաշի նրանից մի-յերկու ցիտատ—և մեկ էլ տեսար, վոր մեկն ու մեկը հավատաց, թե նա գիտե Շիլլերին։ Շատ-շատ պրիվատ-դոցենտներ այս կերպով ապրում են միանգամայն հանգիստ և ապահով։

## ԱՊԱՀՈՎԵԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՍԻԱՅԻ ԾԱՎԱԼՈՒՄԸ. ՈԳՆԵԼ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆԸ, ՎԵՐԶ ՏԱԼ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՀՐԱՄԱՅՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Լիտֆրոնտի ջախջախումից հետո ստեղծագործական դիսկուսիան վոչ թե դադարում է, այլ ընդհակառակը ապրում է իսկական վերելք, տանելով դեպի ստեղծագործական խմբավորումների ծաղկումը։ Ռաժկովի յելույթի միակ լուրջ մասը նրա դատողությունն եր դիսկուսիաների և ոպոզիցիաների անհրաժեշտության մասին մեր կազմակերպության մեջ։ Սակայն հենց այդ մասը ընկ. Ռաժկովի դատողությունների մեջ՝ ուղղակի պլագիատ եր։ Նա գրեթե բառացի կրկնեց այն, ինչ տպված է «Նա լիտպոստու» ժուրնալի № 11-ի առաջնորդողում։

«ՌԱՊՊ-ի վերջին պլենումի այդ-ունքների մասին գրված առաջնորդող հոդվածում ասված է, վոր այդ առաջին պլենումն եր, վորտեղ ոպոզիցիա չկար։ Պլյո՞ս է սա, թե մինուս։ Առաջնորդող հոդվածում այդ համարվում եր, ՌԱՊՊ-ի մեծագույն նվաճումը։ Այդ ճիշտ է, յեթե խոսքը վերաբերում է գրական-քաղաքական բնույթի ոպոզիցիայի։ Այդ դեպքում ամբողջ կազմակերպության միասնականությունը կուսակցության գլխավոր գծի համար մղած

պայքարի հիման վրա ավյալ բնագավառում հանդիսանում է չափազանց մեծ նվաճում, վորի նշանակությունը չի կարելի թերագնահատել: Սակայն, յեթե խոսքը վերաբերում է նրան, թե պլենումում բացակայում եր ստեղծագործական «ոպոզիցիա», ավելի ճիշտը, վոչ թե ստեղծագործական մի «ոպոզիցիա», այլ մի շարք «ոպոզիցիաներ», կամ ել ավելի ճիշտը—մի շարք մրցող ստեղծագործական խմբավորումներ, յեթե խոսքը վերաբերում է նման «ոպոզիցիայի» բացակայությանը վերջին պլենումում, ապա, իհարկե, այդ նվաճում չե, այլ թերություն: Դլյուս չե, այլ մինուս»:

Ինչպես ասում են—ի՛սկը մեր ապրանքը:

Ինչու մեր առաջնորդող հոդվածում ոպոզիցիա բառը վերցրել ենք չակերտների մեջ: Վորովհետև մենք խոսում ենք վոչ թե այն անարիկի մրցակցության մասին, դեպի վորը ժամանակին կոչ եր անում մեզ Բուխարինը, վոչ ել կովի և հայհոյանքի մթնոլորտի մասին—նման դրություն ստեղծել հեշտ է,— այլ մենք պայքարում ենք ստեղծագործական դիսկուսիայի ծավալման համար, ընկերական համագործակցության և փոխադարձ ոգնության հիման վրա ստեղծագործական խմբավորումների ստեղծելու համար: Դեկավարության անելիքը այս գործում հանդիսանում է վոչ միայն արգելք չհարուցել նման «ոպոզիցիաների» գոյության դեմ, այլև արագացնել ստեղծագործական սահմանագծումների պրոցեսը, ստեղծել և ամրացնել նման խմբավորումներ, գործնական ոգնություն ցույց տալ նրանց:

Մենք գիտենք, վոր ստեղծագործական խմբավորումների ստեղծման տեմպերը վորոշ չափով համապատասխանում են պրոլետարական գրականության ստեղծագործական զարգացման մակարդակին: Այդ մակարդակն այնպես է, վոր մենք արդեն այսոր կարող ենք ունենալ մեծ թվով ստեղծագործական խմբավորումներ:

Վորքան ավելի արագ աճի և վերակառուցվի պրոլետարական գրականությունը, նույնքան ավելի հիմնավոր և խոր կերպով կզարգանա ստեղծագործական դիսկուսիան: Նրան խանգարում են, իհարկե, նաև մեր կազմակերպչական թերությունները, այն, վոր հաճախ չեն հասկանում մեր գրական կազմակերպությունների բնույթը, հրամայողականության և վարչարարության մեթոդների վորոշ կիրառումը: Այնինչ, չկա ավելի վնասակար մի բան, քան ընդօրինակել խորհրդային և կուսակցական կազմակերպության աշխատանքի մեթոդները ՎՈԱՊՊ-ի մեջ: Մինչդեռ գործնականում այդ պատահում է, նույնիսկ վոչ հազվադեպ: Մեզանից յուրաքանչյուրն առիթ է ունեցել տեսնելու, վոր յերբեմն գաղափարական-դաստիարակչական աշխատանքը փոխարինվում է վարչարարությամբ և հրամայողականությամբ: Յեթե մենք չկարողանանք մի անգամ ընդմիշտ վերջ տալ դրան, ապա մենք մեզ կտանք գաղափարական խեղճության վկայական:

Բանվորական կորիզի դերի ուժեղացումը այս տեսակետից ևս պետք է ունենա բարենպաստ ազդեցություն:



## ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ԿՐԱԿՆ ԸՆԴԴԵՄ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ստեղծագործական դիսկուսիան միժամանակ պետք է լինի պրոլետարական գրականության ստեղծագործական ստուգատեսը: Մենք պետք է իմանանք, ինչպե՞ս են աշխատում, ինչո՞վ են հետաքրքրվում, ինչպե՞ս են ոգտում մեր ընկերները, մենք պետք է վորքան հնարավոր է լրիվ պատկերացնենք մեր ամբողջ շարժման, մեր յուրաքանչյուր ասոցիացիայի, մեր յուրաքանչյուր գրողի ստեղծագործական դեմքը: Առանց դրան մենք չենք կարող վոչ մի ոգնություն ցույց տալ թե նոր և թե հին կադրերին: Առանց դրանք մենք անկարող ենք հասկանալ և հաշվի առնել արդեն գոյություն ունեցող ստեղծագործական փորձը: Առանց դրան մենք չենք կարող մոտենալ մեր կազմակերպության անդամների արտադրանքի այն վորոշ պլանավորմանը, վորին իհարկե, մենք պետք է հասնենք:

Ստեղծագործական ստուգատեսը պետք է ոգնի զտելու մեր կազմակերպությունները խորթ տարրերից: Ահա, որինակ, Միխ. Ալեքսեյևը, նույնիսկ նրա խոշոր միրուքը չի կարող ծածկել այն փաստը, վոր նրա «Արբատի ռեստորանը» վեպը պրոլետարական գեղարվեստական յերկ չե, այլ բուրժուական խալ-գրականության գեղարվեստական յերկ չե (ծափահարություններ): Այդ Ալեքսեյևը փորձում եր կազմել ինչ վոր «ձախ» խմբավորումներ, բլոկ կազմել «Լիտֆրոնտի» հետ և այլն, և այլն: Այդ բոլորն այնքան ել հետաքրքիր չե,—և շատ վատ է, վոր մեզանում ավելի շատ զբաղվեցին նրա խմբավորումներով, քան նրա վեպի քննությամբ ՌԱՊՊ-ի անդամների ամբողջ մասայի առաջ:

Ստեղծագործական այդ ստուգատեսում պետք է հայտնաբերվեն և մերկացվեն նաև այնպիսիները, ինչպես Ոսինը, վորին հաջողվել է ասել բացարձակ հակահեղափոխական մի բանաստեղծություն ՁՈԱՊՊ-ի «Наступление» ժուրնալում: Այդ մի խոշոր ճեղքվածք եր Սմոլենսկի մեր ընկերների համար: Մենք այնտեղ հեռացրինք մարզային կազմակերպության քարտուղարին, կատարեցինք բացատրական աշխատանք, սակայն պետք է հիշել, վոր մյուս կազմակերպությունների մեջ նաև դեռևս կլինեն նման Ոսիններ, վորոնց պետք է դուրս շպրտել: Կամ որինակ, վրացական գրականության մեջ ընկ. Վակելին առաջ պրոլետարական գրող եր, այսոր չե (Մի ձայն. (Ցերբեք չի յեղել»): Այդ արդեն չափազանցություն է: Այդ Կիկոձեյի ռեպլեկան է, թեև ինքը չի ասում (Կիկոձե. «Պատասխանատու ձեյի ռեպլեկան է, թեև ինքը չի համար պատասխանատու չեմ, ո՞ւր տուն յես եմ»): Դու ինքդ քեզ համար պատասխանատու չես, ո՞ւր մնաց ուրիշի համար (ծափահարություններ, ծիծաղ):

## ԵՎԵԼԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐԻՆ

Սակայն դեպի ստեղծագործական հարցերը ուշադրությունն սժեղացնելը չպետք է փոքրացնի գրական–քաղաքական աշխատանքի նշանակությունը: Այն ինչ այդ աշխատանքը մեզ մոտ ակնհայտ կերպով թուլացել է վերջին ժամանակներս: Մենք վերջին շրջանում վոչ միայն բիչ, այլ շատ անշան չափով ենք զբաղվել բուրժուական գրականության դեմ պայքարելով և ուղեկիցների հետ աշխատելով: Ընկ. Ֆադեյեվը միանգամայն իրավացի յեր նչելով այդ «Պրավդա»-յում—տարվում ենք ներքին դիսկուսիայով, իսկ շատ բուրժուական յերկեր թողնում ենք առանց հակահարվածի: Ցեվ իրոք, ընկերներ, Պիլնյակի և Զամյատինի «գործից» հետո մենք չենք ունեցել վոչ մի այդ բնույթի հատարելական–գրական մեծ կամպանիա: Ցեվ պետք է լինել մերկապարանոց ոպորտունիստ մխանելու համար բուրժուական յերկերի գոյության փաստը մեզանում, բուրժուական ազդեցությունները ամենատարբեր, նոր և յուրահատուկ ձևերով:

Առանց ուժեղացնելու պայքարը բուրժուական գրականության դեմ,—վոչ թե դեկլարացիաներով և ալելուիաներով, այլ յերկերի քննությամբ—մենք չենք կարող ապահովել ուղեկիցների կոմունիստական վերադաստիարակումը:

«Литература и искусство» ժուրնալի վերջին համարի առաջնորդողում ասված է, վոր մենք—համադումարը կամ մեր պլենումը—չենք կարող զբաղվել ուղեկցային հարցերով: Գուցե այդ տպագրական սխալ է և պետք է լինի—չի կարող զբաղվել, սակայն յեթե այդ վրիպակ է, ապա ժուրնալն ունի սքանչելի սրբագրիչ, վոր միանգամայն ճիշտ և հատկանում իր խմբագրության իսկական գիծը (ծիծաղ): Մենք պետք և ուժեղացնենք աշխատանքը ուղեկիցների հետ, ոգնելով իրենց դիրքը անկեղծորեն փոխողներին, մերկացնելով հարմարվողներին, կռվելով դեպի բուրժուական գրականության դիրքերը գնացողների դեմ: Մեծ չափով մեղանից է կախված չերտավորման տեմպերի արագացումը ուղեկիցների շարքերում: Ուղեկիցների մասսան արդեն հատկանում է մեր հարցադրման ճշտությունը—զինակի՞ց, թե թշնամի: Զինակից, թե թշնամի—այս է վորոշում մեր քաղաքականությունը ուղեկիցների նկատմամբ, բայց այդ քաղաքականությունը պետք է վարել առանց «ձախլիկ» խոտորումների, իսկույն թշնամի չհայտարարել նրան, ով դեռևս վերջնականապես զինակից չի դարձել:

Վրացական հայտնի գրող Միխ. Ջավախաշվիլին վերջերս ասում եր, թե շատ դժվար է ուղեկցի գործը, յես ուզում եմ լինեի ուղեկից, բայց այսոր այլ պահանջներ են դնում, վաղը՝ ուրիշ—մի խոսքով՝ ապրելն անհնար է: Այսպես են մտածում իրենց հոգու խորքում շատ ուղեկիցներ, վկայելով վոր իրենք վոչ միայն յեղել են, այլ մնում են դեռ ուղեկիցներ: Պահանջների փոփոխությունը թելադրում են պայմանները, և իրոք, առանց ուժեղացնելու վերա-



փոխման տեմպերը և խորությունը յերեկվա ուղեկիցը այսոր դաղարում է ուղեկից լինելուց:

Վոմանց թվում է, վոր կարելի յե հավասարության նշան դնել ամենամիխանիկանության և ուղեկցության միջև: Այդ միանգամայն սխալ է: Մեզանում, իհարկե, յեղել է նաև ամենամիխանիկան «ուղեկցություն», և ընկ. Կովալենկոյի հաջող արտահայտությամբ՝ ուղեկցություն ակրոբատինացման համար: Սակայն մեզնում այսոր արդեն կան նաև զինակիցներ սոցիալիստական շինարարության համար:

Այստեղ պետք է տարբեր մոտեցում ունենալ դանազան դրուղների, գտնելով տարբեր չափանիշներ դանազան հանրապետությունների մեջ: Ժամանակի պակասությունը հնարավորություն չի տալիս ինձ դրա վրա ավելի մանրամասն կանգ առնել—հույս ունեմ, վոր ընկերները կիսասեն վիճաբանությունների ժամանակ, իսկ յես—յեզրափակման խոսքում:

Ցեռ համարում եմ ճիշտ գյուղացիական դրուղների ընկերության վերանվանումը պրոլետարական–կոլխոզային դրուղների ընկերության: Այս վերանվանումը ճիշտ կերպով և արտացոլում նրանց զարգացման—թե՛ նրանց դրուղների և թե՛ ամբողջ կազմակերպության—տենդենցները: Սակայն վատ կլինի, յեթե ընկերները զարգացման տենդենցներն ընդունեն վորպես արդեն իրականում գոյություն ունեցողի հատկանիշները,—կան և այդպիսի ընկերներ, վորոնք արդեն իրական են դարձնում այդ տենդենցները, բայց կան նաև դեռ ատատանվողները, վորոնք արտահայտում են միջակների այս կամ այն խավերի տրամադրությունների մեջ առաջացած փոփոխությունները: Կարևորն այն է, վոր նրանք դեն չհրվեն վերանվանման հետևանքով: Պրոլետարական–կոլխոզային դրուղների ընկերությունը պետք է ապահովի այդ ատատանվողների վերադաստիարակությունը, լինել դպրոց նրանց համար, չկորցնել նրանց:

Հարց են տալիս—այն հանրապետություններում, վորտեղ չկան պրոլետարական–կոլխոզային դրուղների կազմակերպությունները, արժե՞ արդյոք ստեղծել: Ցեռ չեմ կարող այս հարցին տալ մի ընդհանուր պատասխան: Նայած պայմաններին: Գլխավորն այն է, թե ինչպես ապահովել պրոլետարական ազդեցությունը և պրոլետարական ղեկավարությունը: Դրան համապատասխան պետք է լուծվեն կազմակերպչական հարցերը—նկատի ունենալով գյուղից յեկած դրուղներին պրոլետարական իդեոլոգիայի ոգեսրի վրա փոխադրելու խնդրի իրագործման միջոցների քաղաքական նպատակահարմարությունը: Այստեղ նույնպես հիմնականն և—պատասխանատու լինել խորհրդային ամբողջ դրականության համար:

## ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս ուղղությամբ ևս ստեղծագործական հեգեմոնիա ձեռք բերելու համար մղված պայքարը մեր առաջին և ամենագլխավոր

խնդիրն է, վորի լուծմանը պետք է յենթարկվի մեր ամբողջ աշխատանքը: Այս լոզունգը վոչ միայն թելադրում է առավելագույն չափով ուժեղացնել ուշադրությունը դեպի ստեղծագործական հարցերը, այլ և նպատակ է դնում, ցույց է տալիս գլխավոր ճանապարհը և ուղեգիծը—կամ հեգեմոնիայի իրականացման պատմական բոլոր նախադրյալները, նվաճենք այդ հեգեմոնիան, ել ավելի բարձր աստիճանի հասցնելով ամբողջ խորհրդային գրականությունը: Ցես այս առանձնապես ընդգծում եմ: Պրոլետարական գրականության հեգեմոնիան մենք հասկանում ենք վոչ վորպես հետևանք, դիցուք, վերջնականապես շարքից դուրս ընկած անպետք դարձած ուղեկիցների սնանկացման: Վոչ, մեզ պետք է պրոլետարական գրականության այնպիսի հեգեմոնիա, վոր արդյունք է և հիմնված է խորհրդային գրականության մեծագույն աճման վրա,—վոչ թե այն պատճառով—յեթե կարելի յե այսպես արտահայտվել—վոր ուրիշները գրում են ավելի վատ, այլ այն պատճառով, վոր մենք գրում ենք ել ավելի լավ: Սրանով յես միայն կրկին եմ հաստատում այն դրությունը, վոր պրոլետարական գրականության հեգեմոնիան հեռու չե և մենք այդ հեգեմոնիային հասնելը չենք վերագրում այն ժամանակին, յերբ դասակարգային պայքարի կորագիծը խիստ ցած կլինի և յերբ կկառուցվի սոցիալիզմի վոչ միայն հիմքը, այլ և չենքը: Մենք կարող ենք և պետք է հեգեմոն դառնանք առաջիկայում: Ուղեկիցները արդեն անկարող են և անկարող կլինեն ստեղծագործական տեսակետից առաջնորդել ամբողջ խորհրդային գրականությունը, պրոլետարական գրողները դեռևս չեն կարող, բայց կկարողանան, յեթե ուժեղացնեն ուսումը, արագացնեն վերակառուցման տեմպերը, ավելի շուտ ստեղծեն գրողի նոր տիպը: Այն ժամանակ մենք իսկապես մի քայլ առաջ կդնանք մարդկության գեղարվեստական զարգացման մեջ—և բայլշեվիզմի այդ մեծ արվեստը կարող են ստեղծել այն գրողները, վորոնք սոցիալիզմին նվիրում են իրենց բոլոր ուժերը, իրենց ամբողջ միտքը, իրենց ամբողջ կամքը, սովորում են Լենինից և Ստալինից դաստությունը միացնել կատարի կրքոտության, գրողներ, վորոնք չեն կտրվում կյանքից, այլ վերափոխում են այն՝ շինարարության առորյայի բուռն հորձանքում, գրողներ, վորոնք կրթված են պոլիտեխնիկապես և կարող են պայքարել տեխնիկական նորությունները պատվաստելու գործի համար, գրողներ, վորոնք վո՛չ եմպիրիկ են և վոչ սխեմատիկ, այլ մատերիալիստ—դիալեկտիկ, վոր սիրում է իրականությունը և տեսնում է հակասական տենդենցների պայքարը ու զարգացման ուղղությունը, մի գրող, վոր ունի ճիշտ և հեռու տեսնելու կարողություն, մի գրող, վոր միաժամանակ և յերազող է—«ֆանտազիան մեծագույն արժեք ունեցող հատկություն է: Իզուր են կարծում, թե նա պետք է միայն պոետին, Դա հիմար նախապաշարմունք է: Նույնիսկ մատեմատիկայի մեջ ֆանտազիան պետք է գալիս, նույնիսկ դիֆերենցիալ և ինտեգրալ հաշվումների գյուտն անհնար եր առանց ֆանտազիայի» (Լենին): Նման գրողն արդեն աճում է, մենք պարտավոր ենք ոգնել նրա աճ-





մանը, պայքարելով հանուն պրոլետարական գրականության բայլշեվիկացման, հատուկ մոտեցում ունենալով յուրաքանչյուր առանձին գրողին, վոտքի հանելով մեր ամբողջ կազմակերպությունը մի այնպիսի գործի համար, ինչպիսին է աշխատանքի հերոսների ցուցադրումը: Ցերը մենք խոսում ենք այդ մասին, չպետք է կարծել, թե մի քանի հապճեպ և մակերեսային ուրվագծերով գործը վերջացավ, միայն թե արագ լինի և շատ: Այստեղ ել պետք է պայքարել վորակի համար, վորպեսզի աշխատանքի հերոսների ցուցադրումը խթան հանդիսանա պրոլետարական գրականության վերակառուցմանը, մոտեցնի նրան հեգեմոնիային, բայլշեվիզմի մեծ արվեստի ստեղծմանը:

Ստեղծագործական դիսկուսիայից պետք է վտարել սխոլաստիկան, ցիտատաբանությունը և մակերեսային պրիմիտիվ ընթերցողությունը: Ստեղծագործական դիսկուսիան դարձնել պրոլետարական գրականության վոճի կոլեկտիվ մշակման դպրոց—վոչ թե բուխարինյան անարխիկ մրցակցությունը, այլ ընկերական մրցությունը և փոխոգնությունը պետք է բնորոշեն մեր աշխատանքը: Անհրաժեշտ է, վոր ստեղծագործական դիսկուսիան կապվի ստեղծագործական ստուգատեսի, դեպի կոնկրետ քննադատությունը յեղած չրջադարձի, ստեղծագործական խմբավորումների ծավալման հետ: Ընդլայնել և խորացնել ստեղծագործական դիսկուսիան—ամբողջ ՎՈԱՊՊ-ի և յուրաքանչյուր առանձին կազմակերպության խնդիրն է: Դրա համար և այդ պատճառով պետք է անց կացնել այդ դուսկուսիան վոչ թե յերկու-յերեք յերկերի հիման վրա, վոչ թե «վարպետ»-ի հավակնություն ունեցող այս կամ այն գրողների ռեկլամի համար, այլ պրոլետարական ամբողջ գրականության, և վոչ միայն ռուսական, այլ և համամիութենական պրոլետարական գրականության փորձի հիման վրա (ծափահարություններ):

Բարձրացնել մեր շարժման տեսական մակարդակը: Մենք դեռ հեռու յենք մեր բնագավառում լենինյան փիլիսոփայական ժառանգությունն յուրացնելուց: Մենք դեռ չենք պարզել և լուսաբանել անցյալի ամբողջ գրականության և գրական զարգացման իմաստն ու նշանակությունը մեր պրակտիկայի համար: Մեր թեորիան մեծ խնդիրներ չի դնում մեր պրակտիկայի առաջ—չի տալիս լայն և մեծ հեռանկարներ: Անպլանությունը և անսիստեմությունը բնորոշում են մեր տեսական աշխատանքը: Ժամանակը չե՞ արդյոք անցնել հերթական թեորիական խնդիրների պլանային դրմանը: Ժամանակը չե՞ արդյոք այստեղ ևս հանդես գալ աշխատանքի ինդիվիդուալիստական մեթոդների մնացորդների դեմ: Ժամանակը չե՞ արդյոք համախմբել թեորիական այն բոլոր կադրերը, վորոնք ընդունակ են արվեստի ֆրոնտում պայքարել մարտնչող լենինիզմի դրոշի տակ: Ժամանակը չե՞ արդյոք այստեղ ևս վերջնականապես դեն գցել բուրժուական թեորիաները, կեղծ-մարքսիզմը, նրա-ջախջախելու բուրժուական թեորիաները, հարմարվողներին: Ժամանակը չե՞ արդյոք մեր ճակատամասում ևս պատերազմ հայտարարել դիլետանտությանը, կիսագրագիտությանը, հավակնոտ ամենագի-

թյան—մոշնչադիտությանը (ծախահարություններ)։ Դրա համար պետք է բայլչևիկյան ամուր ինքնաքննադատություն—ամենքին հրապարակ քաշել առանց բացառության։ Նման ինքնաքննադատություն կոգնի ել ավելի արագ և մեծ չափերով առաջ քաշելու ՎՈԱՊՊ–ի կազմակերպությունների կադրերը, կոմանդակի նրանց տեմանը։ Նման ինքնաքննադատություն կամրապնդի կոլեկտիվությունը ՎՈԱՊՊ–ի ամեն մի բջջի աշխատանքում—վարից մեր։ Նման ինքնաքննադատությունը կոգնի ընկերարար և համերաշխ կերպով հարթելու կարծիքների անխուսափելի և անհրաժեշտ ընդհարումները մեր դծի մշակման, քննության և կիրառման ընթացքում։ Նման պրոլետարական, բայլչևիկյան, ընկերական ինքնաքննադատությունը կոգնի պայքարելու վարչարարության և հրամայականության դեմ, կոգնի վերանայելու մեր կազմակերպչական աշխատանքի մեթոդները, կոգնի սահմանելու մեր կազմակերպության ղեկավարության տիպը—ոչ թե վերից կարգադրություններ անելու, այլ դաղափարական դաստիարակության միջոցով։

Պետք է հիշել, որ մեր հակայական ամման պայմաններում, մեր չարժման անհամասեռության պայմաններում, ստեղծագործական խմբավորումների ծավալման պայմաններում—ՎՈԱՊՊ–ի մարտնականությունը կարող է ապահովվել միայն լիովին վերացնելով վարչական կարգադրությունների և հրամանների մեծավորական բղավոցի և բյուրոկրատական ճնշման և սեղմման տարրերը։

Ակտիվացնե՛լ մեր գրական–քաղաքական,—աշխատանքը։

Կուսակցության դիծը—մեր դիծն է։ Մենք չունենք ուրիշ գրական–քաղաքական խնդիրներ, բացի նրանցից, որոնք բղխում են կուսակցության գլխավոր դծից և դրվում են նրա կողմից։ Մենք այդ ասել ենք նաև առաջ, այդ պարտավոր ենք ասել և այսոր, երբ ՎՈԱՊՊ–ը դարձել է հիմնական կազմակերպությունը, որ անց է կացնում կուսակցության դիծը գրականության մեջ։ Ավելի մեծ ուշադրություն բայլչևիկյան քաղաքականությունից յեղած թեքումների դեմ մղվող անհաշտ պայքարին—աջ թեքման դեմ, որպես գլխավոր վտանգի, «ձախ» խոտորումների և ցատկումների դեմ։ Ավելի մեծ ուշադրություն ուղեկցության վերակառուցման համար մղված պայքարին, իրական դաշինք կռելով գլխակիցների հետ, հակահարված տալով մեզնից հեռացող տատանումներին։ Ավելի լավ կազմակերպել և ուժեղացնել հարձակումը ընդդեմ բուրժուական գրականության, բուրժուական ազդեցությունների՝ ուղեկիցների և պրոլետարական գրողներից մի քանիսի վրա։ Սոցիալիստական արշավը իդեոլոգիական ֆրոնտի գրական ճակատամասում պահանջում է ուժեղացնել դաստիարգային աշխատությունը։

Ցեկել է ժամանակը, յերբ կարելի յե և պետք է մոտեցնել պրոլետարական արվեստի բոլոր ջոկատները (ծախահարություններ)։ Մենք այժմ հասունացել ենք արդեն, որ կարող ենք ամուր և մարտական միություն ստեղծել պրոլետարական յերաժիշտների,



արվեստագետների, կինոյի, ռադիոյի աշխատողների հետ—պետք է ներգրավել և պրոլետարական ճարտարապետներին։ Իրականում ասելն ՎՈԱՊՊ–ը խաղում է առաջնորդող դեր ամբողջ պրոլետարական արվեստի վերաբերմամբ, սակայն պետք է նշել, որ շատ հաճախ յերաժիշտները կամ նկարիչները մեզ ավելի շատ և լավ են հասկանում, քան մենք՝ նրանց։—Մինչդեռ նրանց փորձը կարող է շատ և շատ ոգնել մեզ։ Պետք է ուժեղացնել և ընդլայնել ՎՈԱՊՊ–ի բոլոր ջոկատների մասնակցությունը միջազգային աշխատանքում։ Մենք, ընկերներ, հանդիսանում ենք բաղկացուցիչ մաս գրողների միջազգային կազմակերպության, որը Խարկովի կոնֆերանսից հետո, նշանակալի չափով աճել է, որն ունի այնպիսի կարևոր սեկցիաներ, ինչպես Գերմանականը, Ցապոնականը, Ամերիկյանը, որը կատարում է հեղափոխական խոշոր աշխատանք միջազգային մասշտաբով, որը ցուցադրում է պրոլետարական կուլտուրայի աճումը դեռևս կապիտալիզմի ճնշման տակ։ Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի, ինչպես և Արևելքի մեր ընկերներից մենք կարող ենք և պարտավոր ենք թե՛ սովորել և թե՛ նրանց տալ մեր փորձը։ Արդյոք մենք բոլորս զգո՞ւմ ենք մեր պատասխանատվությունը։ Արդյոք մենք բոլորս զգո՞ւմ ենք մեր պատասխանատվությունը միջազգային գրողների միության առաջ, արդյոք մեկանում բավարար չափով տարվո՞ւմ և այդ ինտերնացիոնալ աշխատանքը։

Պրոլետարական գրողները կենդանի գործով պետք է մասնակցեն կուլտուրական հեղափոխության ամբողջ պրակտիկային։ Առաջ ցեն կուլտուրական հեղափոխությունը ավելի եյինք դրաղվում, քան այժմ։ Մինչդեռ մենք այս հարցով ավելի եյինք դրաղվում։ Մենք պետք է ակտիվ կերպով մասնակցենք կուլտուրական չինարարության բայլչևիկյան տեմպերի, կուլտուրական աճումը սոցիալիզմի հունով տանելու, կուլտուրայի լենինյան թեորիայի հայեցիդիմի հունով տանելու։ Առաջ մենք պայքարում եյինք պրոլետարական մղված պայքարին։ Առաջ մենք պայքարում եյինք պրոլետարական կուլտուրայի համար—այդ պայքարը մենք չարունակում ենք նաև այսոր, յերբ խոսում ենք կուլտուրական հեղափոխության պրոցեսում ամրապնդվող և հաղթանակող սոցիալիստական կուլտուրայի մասին։ Առաջ մենք—որինակ Բոգդանովի հետ ունեցած մեր դիսկուսիաներում—հակադրում եյինք պրոլետարական և սոցիալիստական կուլտուրան, ըստ եության, մենք պրոլետարական կուլտուրան հակադրում եյինք ոչ թե սոցիալիստական կուլտուրային, այլ կոմունիստական, անդասակարգ կոմունիստական հասարակության կուլտուրային։ Ցեվ ճիշտ եյինք անում, յերբ հակադրում եյինք, պայքարելով դեսակարգային հասարակության և պարպրոլետարիատի կուլտուրական հեգեմոնիայի համար, կուլտուրայի ֆրոնտում մղվող դասակարգային պայքարի համար։ Այժմ պետք է ճշտել, որ մենք պրոլետարական հարձակման համար։ Այժմ պետք է ճշտել, որ մենք պրոլետարական արվեստը չենք հակադրում սոցիալիստական արվեստին, մենք կերտում ենք սոցիալիստական կուլտուրա և կռվում ենք նրա դրոշի տակ։

Ամրապնդե՛լ և խորացնե՛լ ՎՈԱՊՊ–ի ինտերնացիոնալ միասնականությունը։

Մենք պետք է լինենք այն պայքարի առաջին շարքերում, որ

մղվում է հանուն միջազգային պրոլետարական կուլտուրայի՝ ընդդեմ ազգային մեկուսացման, ընդդեմ աշխատավորների ապգամիջյան խորթության բոլոր մնացորդների, ընդդեմ նացիոնալիստական պրովինցիալիզմի, հանուն համաշխարհային հեղափոխության բանակի զինվորների լայն աշխարհայացքի: Մենք պետք է ել ավելի մոտեցնենք ՎՈԱՊՊ-ի ազգային բոլոր ջոկատները, և անողոք հակահարված տալով մեծապետականության—այդ դլխավոր թշնամու—ամենաչնչին արտահայտություններին, ուղի հարթել բոլոր ազգերի աշխատավորների միաձուլման համար: Պետք է մատաններին վոտքի հանել պայքարելու «սողացող» թեքումների դեմ: պետք է ամրապնդել ՎՈԱՊՊ-ը վորպես համամիութենական շարժման ղեկավար կենտրոն: Ընկ. Ցերմիլովն արդեն առաջարկություն է մտցրել «ՌԱՊՊ» տեսական ժուրնալը ՎՈԱՊՊ-ի որգան դարձնելու մասին: «Ստրանա Սովետսկայա»-ն նույնպես պետք է դառնա ՎՈԱՊՊ-ի ժուրնալը: (Ծափահարություններ):

Ընկերներ, շատ ժամանակ չի անցել այն որից, յերբ ասում եյինք, թե մենք ավելի շատ պաշտպանվում ենք, քան թե հարձակվում: Այդ ամենաճգնաժամային մոմենտներից մեկն եր, յերբ անցնում եյինք նոր ետապին, վերակառուցման նոր տեմպերին, նոր պայմաններում պրոլետարական դրականության բայշևիկացման համար մղվող պայքարին: Այդ մոմենտը շուտ անցավ: Մեր կազմակերպությունը կարողացավ հակահարված տալ ՎՈԱՊՊ-ի դեզորիենտավորող գծի հակառակորդներին, կարողացավ ասպացուցել իր հավատարմությունը կուսակցության գծին, կարողացավ,—չնայած շատ սխալների և թերությունների—դանել հետամնացությունը հաղթահարելու հիմնական ուղիները: Այսոր մեր բնագավառում, համապատասխան կուսակցության բռնած ուղղության, մենք ծավալում ենք սոցիալիստական հարձակումը: Մենք խորհրդային դրականության բայշևիկյան առաջապահն ենք:



# ԱՀԱԶԱՆԳ, ՎՈՉ ԹԵ ԻՆՔՆԱԳՈՀՈՒԹՅՈՒՆ

## ՄԵՐ ԿԱԴՐԵՐԻ ԱՃՈՒՄԸ

Ընկերներ, իմ և ընկ. Սելիվանովսկու զեկուցումների շուրջը յեղած վիճաբանությունները ավելին ահագին քանակությամբ արժեքավոր նյութ, վորը լրացնում է մեր մի շարք դրույթները, հանդիսանում է վորպես իլյուստրացիա այդ դրույթների համար, ասիպում է մեզ անել մի շարք լրացուցիչ յեզրակացություններ նախ և առաջ Խորհրդային Միության պրոլետարական դրականության բոլոր ջոկատների մերձեցման քաղաքականության վերաբերմամբ: Վիճաբանությունները վոչ միայն ահագին քանակությամբ արժեքավոր նյութ տվին: Վիճաբանություններն արժեքավոր եյին հենց նրա համար, վոր նրանց, ինչպես և մեր ստացած նյութերի մեջ հայտարերվեց մեր շարժման կուտակած հսկայական վորձը՝ նացիոնալ-ղեմոկրատական զանազան հոսանքների դեմ մղված պայքարում, դրականության ֆրոնտում մղված դասակարգային պայքարում: Հետո, վիճաբանություններն արժեքավոր եյին նաև նրա համար, վոր նրանք ցույց տվին մեր շարժման ուժեղությունը: Այն փաստը, թե ինչ նյութ ստացանք այս պլենումում համեմատած նախորդ պլենումների հետ, ինչպես լուսաբանվեց այն նյութը համեմատած նախորդ պլենումների հարցադրման մակարդակին, վկայում է մեր հիմնական կադրերի անժխտելի աճման մասին, մի աճում, վորն արտացոլում է պրոլետարական դրողների ամբողջ դանդվածի իսկական առաջընթացը: Հատկապես կարևոր է, վոր դնելով մեր առաջ ահագին քանակությամբ նոր հարցեր, և դնելով այդ հարցերը նոր նյութի հիման վրա, մենք պետք է արձանագրենք այստեղ հանդես յեկած ընկերների մեծագույն միասնականությունը, վորը ցույց է տալիս մեր շարժման ամրությունը, ցույց է տալիս, վոր Պրոլետարական դրողների առաջնորդները, հանդիսանալով ֆեյսիոնիստների համամիութենական միավորումն այսոր հանդիսանում է մի կատմակերպություն, վորի բայշևիկացման տեմպերը դնալով սկսում են ավելի համապատասխան լինել նրա առաջ դրված խնդիրներին:

Ցերեկ անցնենք վիճաբանությունների ընթացքում չշոշափված մի քանի հարցերին, ապա առաջին տեղը պիտի տալ ազգային կուլ-

---

1 Ցեղբարեկամման խոսք ՎՈԱՊՊ-ի Խորհրդի պլենումի 1931 թ. հունիսի 1-ի նիստում:

տուրային պրոբլեմին: Ինձ թվում է, հիմնականը, վոր պիտի է մենք արձանագրենք այսոր, այդ այն է, վոր ազգային կուլտուրայի հարցերի տեսական մշակման ասպարեզում դրությունը շատ վատ է: Մեր վիճաբանությունները ցույց տվին, վոր տեղերում ազգային պրոբլեմին ուշադրություն դարձնելու, ազգային կուլտուրայի հարցերի տեսական մշակման տեսակետից ավելի քան չի արվում, քան այստեղ—Մոսկվայում: Իսկ Մոսկվայում արվում է շատ քիչ, շատ անբավարար: Այստեղից մի յեզրակացություն ՎՈԱՊՊ-ի քաղաքականության համար—մեր բոլոր կազմակերպությունների քննության նյութ դարձնել մի շարք կենտրոնական հարցեր և ՎՈԱՊՊ-ի ղեկավարությամբ իրագործել ազգային կուլտուրայի հիմնական պրոբլեմների պլանային մշակումը: Այս նշանակում է. հաշվառման յենթարկել մեր շարժման բոլոր թեորիական կադրերը: Այդ նշանակում է, հաշվառման յենթարկել կուսակցական թեորիական բոլոր կադրերը, վորոնք այս խնդրում կարող են ողնություն ցույց տալ մեզ: Այդ նշանակում է. գործնական բլոկ կազմել այն կազմակերպությունների հետ, վորոնք այդ գործով զբաղվում են, համենայն դեպս պետք է զբաղվեն, առաջին հերթին Կոմակադեմիան և նրա հետ միասին ուրվագծել այդ բնագավառում կատարվելիք աշխատանքի ճշգրիտ պլան:

## ԶԲԱՂՎԵԼ ՎՈՉ ՄԻԱՅՆ ԹԵՈՐԻԱՅՈՎ, ԱՅԼՅԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՎ

Մեզ պետք չեն ընդհանուր խոսակցություններ ազգային կուլտուրային ուշադրություն դարձնելու մասին: Մեզ անհրաժեշտ է կոնկրետ կերպով մշակել վորոշ հիմնական հարցեր, և լավ կլինի, յեթե մենք կարողանանք,—այնպես, ինչպես մի ժամանակ զուսմարում եյինք արտադրական խորհրդակցություններ պոսեվայի և ոչերկի հարցերի շուրջը,—գումարել արտադրական տեսական խորհրդակցություն ազգային կուլտուրայի հարցերի շուրջը: Սա մեր շարժման գործնական պարտադիր խնդիրներից մեկն է, սակայն մենք չենք կարող բավականանալ միայն դնելով ազգային կուլտուրայի թեորիայի հարցերը: Ցեսս կարծում եմ, վոր վիճաբանությունները յերևան բերին մի մեծ թերություն մեր ասոցիացիաների աշխատանքում: Ցեսս խոսում եմ կուլտուրական հեղափոխական պրակտիկայի հարցերի մասին: Այստեղ շատ քիչ բան ասվեց կուլտուրական հեղափոխության գործնական հարցերի մասին: Անգրագիտության վերացման, պարտուսի, դպրոցի պոլիտեխնիկացման և այլն պրոբլեմները համարյա չչոշափվեցին վիճաբանությունների ժամանակ: Ճի՞շտ է, թե վոչ:—Ճիշտ է: Պլյո՞ս է սա, թե մինուս:—Մինուս: Պրոլետարական գրողները պարտավոր են զբաղվել այդ գործով, յեթե յուրաքանչյուր ազգային հանրապետության, յուրաքանչյուր դաշնակից հանրապետության կուլտուրական կյանքի համար պատասխանատու յե Լուսավորության ժողովրդական Կոմիսարիատը, ապա մենք,—Պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական մի-վորումը,—մեր ասոցիացիաներին պատասխանատու պիտի համարենք այդ հանրապետությունների կուլտուրական ամբողջ կյանքի համար: Պրոլետարական գրողների ասոցիացիաներն այն ժամանակ իրավունք կունենան կոչվելու ՎՈԱՊՊ-ի բաղկացուցիչ մաս, և մենք—ՎՈԱՊՊ-ը—այն ժամանակ իրավունք կունենանք համարվելու պրոլետարական գրական շարժման ղեկավարություն, յերբ մենք գործնականում կդնենք կուլտուրական հեղափոխության մի շարք հարցերը և կկարվենք նրանց բայլշևիկյան լուծման համար: Առայժմ այդ չկա:

Սրանք լրիվ համեմատաբար նոր խնդիրներ են, մենք այդ խնդիրներն առաջ եկ ենք դրել, բայց այժմ նրանք դրվում են նոր ձևով, կուլտուրական հեղափոխության նոր թափի կապակցությամբ, և այդ խնդիրները մենք անպայման պետք է դնենք մեր առաջ:

## ԿԱԴՐԵՐՆ ԱՃՈՒՄ ԵՆ ԲԱՅԼՇԵՎԻԿՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՎ ՆՈՐ ՑԵՎ ԴԺՎԱՐԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հանդես յեկող բոլոր ընկերներն ասում եյին, թե այսինչ գծով մեզանում բացեր կան, այսինչ գծով՝ թերություններ, այսինչ գծով քիչ ուշադրություն ենք դարձնում այսինչ խնդրին և այլն: Հակայական քանակությամբ նոր հարցեր և խնդիրներ կան: Ցեսվ իրոք, այսոր մեծ չափով աճել է ընդհանրապես պրոլետարական գրականության և մասնավորապես ՎՈԱՊՊ-ի նշանակությունը, մեր առաջ դրվում են ահագին քանակությամբ նոր հարցեր և խնդիրներ, այնինչ այսոր մեզանում խզում է առաջացել մեր խնդիրների և մեր կադրերի միջև: Մեր առաջ կան շատ ավելի մեծ թվով խնդիրներ, քան մեր ունեցած ուժերը, մեր կադրերը, այդ խնդիրներն իրագործելու համար:

Հարց է ծագում. ինչպե՞ս դուրս գալ այդ դրությունից: Այստեղ կա յերկու յելք: Առաջին յելքն է՝ նեղացնել մեր լուծելիք խնդիրների շրջանակը, սահմանափակել այն գործերի թիվը, վորոնցով մենք զբաղվում ենք: Այդ սխալ հարցադրում է, այդ նշանակում է հավասարվել «նեղ տեղերին»: Կա մի այլ հարցադրում, հիշա՛, բայլշևիկյան հարցադրում, վորն ասում է—պետք է հասկանալ, վոր կադրերն աճում են նոր խնդիրներ դնելու պրոցեսում, վոր կադրերն աճում են այն ժամանակ, յերբ դրվում են գնալով ավելի և ավելի դժվար և որեցոր նորանոր խնդիրներ: Մենք ընտրում ենք յերկրորդ ղիծը, վորը չի սահմանափակում այն հարցերի քանակը, վորոնցով մենք զբաղվում ենք գրական շարժման մեջ: Մենք վերցնում ենք այն հարցերի ամբողջ զուտաքը, վորոնք անխուսափելիորեն կանգնած են գրական շարժման առաջ վատահ լինելով, վոր վերցնելով այդ խնդիրները և մոտենալով նրանց համապատասխան կուսակցության կողմից տրված դրության

նելի, մենք է՛լ ավելի զարկ կտանք մեր կադրերի աճմանը: Կադրերը միայն այս ձևով կարող են աճել և կաճեն:

Այդ, ընկերներ, մեր գործն է, և դրա համապատասխան մենք առաջադրել ենք բանվոր հարվածայինների կոչի լոզունգը: Ցերբ մենք խոսում էինք այդ խնդրի մասին, թվում էր, թե չենք կարող, ուժեր չենք ունենա լուծելու այդ խնդիրը: Ցեվ իրոք, այսօր մենք դեռ չենք լուծել այդ խնդիրը: Վո՛չ, մենք նոր ենք սկսում այդ աշխատանքը: Սակայն Մոսկվայի և Լենինգրադի ասոցիացիաներում արդեն մենք ունենք բանվորական նոր դեկավարություն: Թե՛ Լենինգրադի և թե Մոսկվայի կազմակերպություններում կարճ ժամանակամիջոցում աճել են բանվոր ընկերների նոր կադրեր և դրավել են դեկավար դիրքեր կազմակերպության մեջ: Ցեթե միայն չշատախոսենք մեր առաջ կանգնած խնդիրների մասին, այլ աշխատենք ինչպես հարկն է, ապա նոր կադրեր յերևան կգան: Այդ բղխում է մեր պայմաններից, այդ բղխում է սոցիալական շինարարության հակայական վերելքից, այդ բղխում է մեր յերկրի աշխատանքային այն ենտուզիազմից, որը չի կարող չարտահայտվել նաև գրական աշխատանքի բնագավառում:

## ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ

Ցերբ մենք ասում ենք, թե հակասություն է առաջ յեկել մեր խնդիրների և կադրերի միջև, յերբ մենք լոզունգ ենք տալիս—է՛լ ավելի ուշադրությամբ զբաղվելու ստեղծագործական հարցերով, մենք պետք է սրենք կազմակերպչական հարցերը, որպեսզի մեր բոլոր կազմակերպություններն իրագործեն մեր առաջ դրված խնդիրները: Այդ մասին քիչ խոսվեց: Այնինչ վերցրեք որևե կազմակերպության, ամենից առաջ ՌԱՊՊ-ի պրակտիկան: Տեսեք, որքան անպատասխանատվություն, որքան անփութություն ընդունված որոշումները կիրառելու մեջ,—մի ժողովում հարցը քննվում է, այդ հարցը դրվում է է՛լի մի յերկրորդ ժողովում, հետաձգվում է յերրորդ նիստին և կրկին, ծագում է չորրորդում: Այդ բացատրվում է նրանով, որ մինչհեղափոխական գրական միջավայրին հատուկ գրական բոհեմայի սովորությունները յերբեմն ազդում են պրոլետարական գրական կազմակերպությունների աշխատանքի սիստեմի վրա, և ինձ թվում է, որ այդ ոչ միայն վերաբերում է ՌԱՊՊ-ին, այլև բոլոր պրոլետարական գրական կազմակերպություններին—որտեղ հաճախ չեն հասկանում, որ սա ընկերական հավաքույթ, գրական ասուլիս չէ, այլ մի մեծ ժողով, որը պատասխանատու է բոլոր պրոլետարական գրողների, ամբողջ գրականության, գրականության ամբողջ ֆրոնտի համար: Սհա այս ըմբռնումը դեռևս չկա մեղանում:

Ցեվ այստեղ ծավալված վիճաբանություններից բղխում է է՛լի մի կարևոր հարց կազմակերպչական դծով—վերացնել բոհեմականության մնացորդները, ձգտել, որ մեր գրական կազմակերպությունները աշխատեն այնպես, ինչպես բանվորական կազմակերպությունները, ոչ միայն «կոչ անեն» հարվածայիններին, այլև աշխատեն հարվածայինների պես: Առանց դրան մենք չենք կարող դլուխ բերել նոր կադրերի առաջ քաշման խնդիրը և կատարել իսկական շրջադարձ դեպի ստեղծագործական հարցերը, մի շրջադարձ, որը մենք պարտավոր ենք կատարել:

Գարդ է, որ բոհեմականությունը չպետք է փոխարինել բյուրոկրատիզմով: Չի կարելի ընկնել յերկու ծայրահեղությունների մեջ: Այդ անհրաժեշտ է պրոլետարական իսկական դեմոկրատիայի հիմունքների վրա ապահովել կազմակերպության բարձրագույն աշխատանքը: Այդ չի նշանակում, որ պետք է ընդորինակել մյուս կազմակերպությունների աշխատանքի մեթոդները: Այդ շատ վնասակար կլիներ: Ընդհակառակը, պետք է միանգամ ընդմիշտ մեծ ուշադրություն դարձնել կազմակերպչական հարցերին, որպեսզի հետո ավելի քիչ զբաղվել դրանցով, որովհետև, ուրիշն առաջ, այժմ կազմակերպչական հարցերի համար շատ ավելի ժամանակ և վատնվում, քան յեթե մենք պատշաճ կարդ և պատասխանատվություն սահմանեինք մեզանում, ինչպես այլ կազմակերպություններում:

Սակայն այստեղ պետք է նշել մեր առանձնահատկությունը: Այդ այն է, որ մենք չպետք է ընդորինակենք կուսակցական և խորհրդային կազմակերպությունների աշխատանքի մեթոդը, ավելի քիչ զբաղվենք կազմակերպչական ամբողջ սիստեմը յենամբողջ պրակտիկան, կազմակերպչական ամբողջ ապարատը ստեղծագործական խնդիրներին, որպեսզի ողնություն ցույց տանք մեր ստեղծագործական կադրերին—թե՛ գրողներին և թե՛ թեորետիկներին: Այս գործը մենք պետք է դլուխ բերենք, որպեսզի ողնենք նոր կադրերի է՛լ ավելի մեծ առաջ քաշմանը գրականության բնագավառում: Այս խնդիրը նույնպես բարդ է և այն պատճառով, որ մեր կազմակերպություններին մեջ դեռևս կան անցյալ գրական միջավայրի բարմաթիվ սովորություններ:

Չկա ավելի վատ բան, քան մանր-բուրժուական գրական մթնոլորտը, չկա ավելի վատ բան, քան այն մանր-բուրժուական շրջապատը, որին մենք պատահում ենք մեր պրոլետարական յերաքանչյուր կազմակերպության կողքին, և չկա ավելի վատ բան, քան անցյալի սովորությունները, որոնք մնացել են գրականության բնագավառում, յերբ գրողներից, նույնիսկ պրոլետարական գրողներից շատերը դրում են իրենց ոչ այնքան ընկեր, որքան մրցակիցից մյուս պրոլետարական գրողին, նրա հակառակորդը, յերբ փոխանակ ուրախանալու իր հարևանի հաջողություններով և ցավելու նրա անհաջողությունների համար, գրողները միանգամայն այլ վերաբերմունք ունեն իրար հանդեպ: Թաղցնելու կարիք չկա, մեր կազմակերպությունների մեջ ևս կա այս բանը և մեր խնդիրն է այնպես վերակառուցել մեր կազմակերպությունները, որպեսզի դեն նետվի մեր կազմակերպությունների շուրջը պատ-

վող մանր-բուրժուական պոչը, մերժ-գրական այն ամբողջ «հասարակությունը», վորը ներկա չ յուրաքանչյուր գրական հավաքույթին, յուրաքանչյուր գրական դեկուցման—չես վասահ չեմ, վոր այստեղ էս ներկա չէ: Նման մարդկանց և մարդուկներին պետք է դեն նետել, վորպեսզի մեր պրոլետարական գրական կազմակերպություններն աշխատեն իրոք պրոլետարական գրական մի-ջավայրում, պրոլետարական դեմոկրատիայի սովորություններով, վորպեսզի կուսակցական առաջ մբնոլորտ տիրի կազմակերպությունների մեջ, և վոչ թե խմբայնություն և խմբակայնության մբնոլորտ (ծափահարություններ):

Այդ մասին անպայման պետք է խոսել նոր կադրերի պատրաստման և առաջ քաշման կապակցությամբ: Պետք է հասկանալ, վոր մենք չենք կարող բանվորական կադրերին իրոք դեպի դեկավարություն առաջ քաշել, յեթե չկարողանանք իրոք վերացնել մանր-բուրժուական գրական միջավայրի մնացորդները:

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՍԻԱՅԻ ՅԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի ժամանակ մենք կարող եյինք հավասարության նշան դնել Նապաստովության և ՌԱՊՊ-ի, Նապաստովության և ՎՈՒՍՊՊ-ի ու «Մոլոդնյակի», Նապաստովության և Անդրկովկասյան կազմակերպության միջև: Այսոր մեզանում այլ դրություն է: Մենք ունենք մեծ թվով ընկերներ, վորոնք Նապաստովցի չեն: Այդ պարտադիր չէ: Մենք չենք կարող մեր կազմակերպությունն ամբողջովին բաղկացած համարել այնպիսի դրողներից, վորոնք իրենց զրում են վորպես Նապաստովցիներ: Նապաստովությունը մնում է միայն վորպես հիմնական հոսանքներից մեկը մեր գրականության մեջ—դա ՎԱՊՊ-ի դեկավար շարժումը, դեկավար կադրերն են, վորոնք անցել են Նապաստովության բոլոր դպրոցներով, ուզում են հետագայում էս մնալ Նապաստովության մեջ, վորովհետև զանում են, վոր դա ամենից ավելի չ համապատասխանում կուսակցության գլխավոր գծին, վոր դա յուրահատուկ բայշևիկյան հետախույզ ջոկատ է գրականության ֆրոնտում: Սակայն Նապաստովության այդ հին կադրերի կողքին մենք ունենք նաև այլ կադրեր, վորոնք դնալով ավելանում են: Այդ նորերի թվում կան նաև հակա-Նապաստովականներ: Այս, իհարկե, մեծացնում է Նապաստովության պատասխանատվությունն ամբողջ պրոլետարական գրական շարժման համար: Նա, ունենալով դեկավար հոսանքը ՎԱՊՊ-ում, պետք է ապահովի ստեղծագործական բոլոր հոսանքների զարգացման ազատությունը: Սա դեկավարության վրա դրված առաջին խնդիրն է:

Վոմանք Նապաստովցիներին համարում են ճշմարտության միակին ինստանցիա, այսինքն, ուրիշները վիճում են, իսկ վերջը մենք լուծում ենք հարցը: Այդ ճիշտ չէ: Մենք ինքներս պետք է գտնենք նոր հարցեր և լուծենք, դաստիարակես միասուրերով կազմակերպությունը: Հին Նապաստովցիների, թե՛ ուսական, թե՛ ուկրաինական, թե՛ վրացական, կադրերը դեռևս ունեն անցյալի տրադիցիաներ և սովորություններ, յերբ մենք հոսանքներից մեկն եյինք միայն, իսկ այժմ մենք ՎԱՊՊ ենք, դեկավար կազմակերպություն, և մենք պետք է ապահովենք այնպիսի պայմաններ, վորպեսզի ՎԱՊՊ-ի շարքերն անցնողներն դան, վոր—այո՛, յեթե յես իրոք պրոլետարական գրող եմ, ապա ինձ համար հեշտ է ապրել ՎԱՊՊ-ում, ինձ հաշվի յեն առնում, ուզում են հնարավորություն տալ ինձ ավելի հանգիստ և վստահ աշխատելու, ինձ այստեղ ոգնում են, չնայած տարաձայնություններին նույնիսկ բոլոր Նապաստովցիների, այս կամ այն քննադատի, դեկավար ժուրնալի կարծիքի հետ: Մենք պետք է ապահովենք այդ, վորովհետև այլ կերպ մենք չենք կարողանա պահպանել պրոլետարական գրական շարժման միասնականությունը:

ՎԱՊՊ-ում կան տարբեր խմբավորումներ: Բանվորական կորիզի աճումը կունենա այն հետևանքը, վոր այդ բանվորական կորիզը կդառնա, և սկսում է դառնալ, մեր շարժման դեկավարը, ասկայն այդ չի նշանակում, վոր դրանով վերանում է այլազան տարբերի պրոբլեմը: Մեզանում կա ինտելիգենտական թե, դյուղացիական թե, ամենատարբեր յերանգներ պրոլետարական դրականության մեջ:

Յերբ խոսվում է ՎԱՊՊ-ի և նրա շրջապատի կոնսոլիդացիայի մասին, այդ չի նշանակում, վոր այստեղ պետք է լինեն լիովին միատեսակ կարծիքներ: Մեզ պետք է այնպիսի կոնսոլիդացիա, վոր աճում է կարծիքների ընդհարումից, մտնեցնում է այլազան կադրերին: Այն կոնսոլիդացիան, վորի մասին վիճում է մեր ալենումը, չի հաստատված ստեղծագործական դիսկուսիաները և կարծիքները լուսաբանելու հիման վրա, այլ ընդհակառակը դա բայշևիկյան կադրերի այնպիսի կոնսոլիդացիա է, վորն ապահովում է ստեղծագործական դիսկուսիայի անարգել ծավալումը: Այն ստեղծագործական խմբավորումները, վորոնք կիսաբնեն վերածվել քաղաքական-գրական ֆրակցիայի, դատապարտված են ձախողություն, վորովհետև մեր շարժումը միասնական է, նա իր գիծը մշակել է կուսիներում, նա ստուգել է ամեն մեկին և գիտե ամենքի արժեքը:

Մեր շարժման կոնսոլիդացիան կատարվում է նապաստովցիների շուրջը: Նապաստովությունը հիմնական հոսանքն է, ասկայն նապաստովցիների կոնսոլիդացիան պետք է տանի դեպի ստեղծագործական խմբավորումների ծաղկումը, շատ ավելի մեծ չափերով, քան առաջ:

Մեզանում ստեղծագործական խմբեր քիչ կան, թեև մենք շատ ենք խոսում նրանց մասին և միաձայն քվեարկում ենք նրանց ոգուտին: Ինչո՞ւ մեզանում քիչ են ստեղծագործական խմբերը: Դուցե կոնսոլիդացիայի հետևանքով: Այսինքն, այնպես ենք «կոնսոլիդացնում», վոր մյուսներն չարգում ենք: Վո՛չ. այդ պրոլետարական դրականության մակարդակի ցուցանիշն է: Մեզանում

փիչ են ստեղծագործական խմբերը, վորովհետև պրոլետարական գրականությունը դեռ նոր է թևակոխում ստեղծագործական ծաղկման շրջանը:

Վո՞րն է պրոլետարական գրականության հետագա ուղին: Այդ ուղին է—իրարից տարբերվող գրողների թվի աճումը, գրողներ, վորոնք կունենան տարբեր դպրոցներ, տարբեր ուղղություններ, վորոնք տարբեր արահետներով կգնան դեպի դիալեկտիկական մատերիալիզմի մեթոդի ստեղծումը: Կարելի է այսոր հենց ստեղծել 20–30–50 ստեղծագործական խմբավորումներ, այդ այնքան էլ դժվար չէ: Եթե հանձնարարվի մի հաճոյակատար քննադատի, նա կարող է նույնիսկ ծրագրեր կազմել այդ խմբավորումների համար, սակայն դրանով հարցը չի փակվում: Խնդիրն այն է, վոր պետք է ստեղծել այնպիսի ստեղծագործական խմբավորումներ, վորոնք արտահայտում են արդեն յերևան յեկած, կամ նոր յերևան յեկող ստեղծագործական հոսանքներ: Ղեկավարությունն այն ժամանակ է կանգնած իր բարձրության վրա, յերբ նա կարողանում է ներբորեն ջոկել մի գրողը մյուսից, հայտարերել այն տարբերությունը, վոր դեռևս պարզորոշ չէ, բայց արդեն ուրվագծվում է, կարողանում է դրսևորել տենդենցները: Այս է ղեկավարության խնդիրը: Ղեկավարությունը պետք է այդ յելակետ ունենա իր գործնական վողջ աշխատանքում: Միայն այն ժամանակ նա իրավունք ունի համարվելու իսկական ղեկավարություն:

Եերբ պլենումում խոսում եյին ստեղծագործական խմբավորումների մասին, մի քանի ընկերներ նշում եյին նրանց հետ կապված վտանգները: Իրոք վտանգները շատ են: Դրանք կայանում են նրանում, վոր այս կամ այն ստեղծագործական խումբը կարող է աղյուսակվել և դառնալ խմբակայնություն, կարող է մեկուսանալ, նույնիսկ ինքն իրեն հակադրել ամբողջ շարժմանը և կտրվել նրանից: Կարող է լինել այնպիսի դրություն, վոր խումբը, առանց ինքն իրեն հաշիվ տալու, թե ինչու համար է ստեղծվել, անխուսափելիորեն կարող է առաջացնել բամբասանքների և ասեկոսեների մթնոլորտ: Կարող է լինել այնպիսի վտանգ, վոր խումբն ուզենա դառնալ գրական–քաղաքական ֆրակցիա: Այդ վտանգները կան: Սակայն նա, ով խոսում է միայն վտանգների մասին, ով միայն դրա վրա յե կանգ առնում, նա չի հասկանում մեր շարժման դրությունն այսոր:

Այսոր պետք է խոսել այն վտանգի մասին, վոր այդ ստեղծագործական խմբերը շատ փիչ են, վոր տեղ-տեղ հավանաբար բյուրոկրատական ճնշում են գործ դնում այդ ստեղծագործական խմբերի վրա: Այսոր գլխավոր վտանգն այն է, վոր չեն ուզում հաստատել այս կամ այն ստեղծագործական խմբավորումը, յեթե նա դեռ վերջնականապես չի մշակել իր պլատֆորմը, գլխավոր վտանգն այն է, վոր չեն արագացնում ստեղծագործական սահմանագծումը:

Մեր խնդիրն է ամբողջ ուժով խփել այդ գլխավոր վտանգին, մերկացնելով ալեուլշչինան նաև այդ բնագավառում:



Դրա համար, յերբ հանդես յեկավ «Նապաստովսկայա սմենա» խումբը, պլենումն ուրախությամբ վողջունեց այդ խմբին: Ցեվ յես կարծում եմ, վոր յերբ Պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական միավորման պլենումը վողջունեց «Նապաստովսկայա սմենա» խմբին, ապա նա վողջունեց բոլոր խմբերը, վորոնք ստեղծվել են և ստեղծվում են մեր շարժման մեջ:

Ցերբ խոսվում է ստեղծագործական խմբավորումների և ստեղծագործական դիսկուսիայի ծավալման մասին, ապա պետք է նշել ամենակարևորը—այն է՝ ապահովել փորձի փոխանակությունը, փոխոգնությունը և ընկերական համագործակցությունը: Ստեղծագործական դիսկուսիան պետք է լինի մշտական գործնական դպրոց մեր բոլոր գրողների և հատկապես բանվորական նոր կադրերի համար,—ստեղծագործական մեթոդի և վոչ թե զուտ տեխնիկական պրոյոմների ուսուցման դպրոց:

Մեր առաջ դրված է պատմական ամենակարճ ժամանակամիջոցում հեգեմոնիան իրականացնելու խնդիրը, սակայն պետք է ասել, վոր պրոլետարական գրականության մակարդակը դեռևս բավականաչափ բարձր չէ: Այդ պետք է ասել ամենայն պարզությամբ: Ցես ուրախությամբ եմ արձանագրում, վոր յերբ ընկերները հանդես եյին գալիս վիճաբանությունների ժամանակ, նրանց յելույթներում զգացվում եր տաղնապի, ահազանգի շեշտ մեր առաջ դրված խնդիրների իրագործման համար, զգացվում եր տաղնապի շեշտ այն բանի համար, թե ինչպես պիտի լուծենք այդ բոլոր խնդիրները, և վոչ յերբեք ինքնագոհության շեշտ:

Ամենքն էլ արձանագրում եյին պրոլետարական գրականության հետ մնալու փաստը: Սա բարդ հարց է, վոր շատերը պարզեցրել են և պարզեցնում են: Յետամնացությունը վերացնելու պրոբլեմը—դա պրոլետարական գրականության ավելի բարձր դասարան փոխադրելու, զարգացման բարձր աստիճանի, բայլշեվիզմի աշխարհահայացքի բարձր մակարդակի վրա դնելու պրոբլեմն է: Լիտֆրոնտական ձևով վերացնել յետամնացությունը՝ դժվար չէ, սակայն մենք խոսում ենք այն մասին, վոր հետամնացությունը պետք է վերացնել բայլշեվիկորեն, այսինքն առաջադրելով մեծ խնդիրներ, տալով բայլշեվիզմի մեծ արվեստի լուզունգը:

Մենք այսոր շատ ենք խոսում պրոլետարական գրականության թերությունների, բացերի հիվանդությունների մասին: Սակայն պրոլետարական գրականության մեջ պետք է տեսնել այն, ինչ նրան զանազանում է խորհրդային գրականության բոլոր մյուս ջոկատներից: Մենք պետք է կարողանանք նշմարել նույնիսկ սկզբնական գրողի ստեղծագործության մեջ նոր արվեստի, բանվոր դասակարգի արվեստի գծերը, ամենևին չդովարանելով այդ սկզբնական, այլ հայտարերելով այն սաղմերը, վորոնցից վաղը կարող է ծնվել մեր ամբողջ գրականությունն առաջ տանող ուժը:

## ԴԱՐՁՅԱԼ ԲԱՆՎՈՐ ՀԱՐՎԱԾԱՅԻՆՆԵՐԻ ԿՈՉԻ ՄԱՍԻՆ

Մենք հաճախ պատահում ենք միքանի ընկերների՝ ուղեկիցների բանակից, կամ այնպիսի ընկերների, վորոնք սիրում են ուղղությունը բռնել դեպի ուղեկիցները,—վորոնք ասում են, թե մենք, ուղեկիցներս ավելի լավ ենք գրում: Իհարկե, կան նաև այնպիսի ուղեկիցներ, վորոնք ավելի լավ են գրում: Սակայն ի՞նչ չափանիշների տեսակետից են լավ գրում: Վո՞րն է գեղարվեստական ության չափանիշը: Կարելի՞ է միթե թույլատրել գեղարվեստականության հասկացողության փոխարինումը գրական տեխնիկայով: Այդպես դատողները չեն հասկանում, վոր խոսքը վերաբերում է նոր վորակին, վորակապես նոր արվեստին համեմատած ամբողջ անցյալ արվեստի հետ:

Իհարկե, այն աշխատանքը, վոր կատարում են նորակոչ բանվոր հարվածայինները, դեռևս դանդաղում է գրական ցած մակարդակի վրա: Սակայն մենք միանգամայն իրավացի ենք, յերբ սկսեցին ուշադրություն ենք դարձնում հարվածայինների գրական արտադրանքին: Ինչո՞ւ այդ կարևոր է: Ինչո՞ւ այդ հաճախ շատ ավելի կարևոր է, քան այս կամ այն ճանաչված, քաղաքենիական տեսակետից լավ գրող հեղինակի յերկերի քննությունը: Մեզ համար այդ կարևոր է, վորովհետև գրանով նոր խոսք է ստեղծվում գեղարվեստական գրականության զարգացման մեջ: Մեզ համար կարևոր են բանվոր հարվածայինների գրվածքները վոչ միայն նրա համար, վոր նրանք տալիս են այսոր, այլ այն պատճառով, վոր այդ գրվածքների մեջ կան այնպիսի հնարավորություններ, վորոնք մինչև այժմ դեռ բավարար չափով գնահատված չեն: Այդ նորակոչ հարվածայինների և նրանցից առաջացած կադրերի հետ կատարվող աշխատանքից հենց կածի այն, վորը վորակապես գանազանում է մեր շարժումը խորհրդային գրականության մյուս ջոկատներից, այն, վոր պետք է գանազանի պրոլետարական ամբողջ գրականությունն ամենամոտիկ ուղեկցային գրականությունից: Յերբեմն դժվար է ջոկել այս կամ այն առանձին պրոլետարական գրողն այս կամ այն ուղեկից գրողից: Սակայն պետք է կարողանալ տեսնել այն սահմանը, վոր ներկա ետապում ջոկում է պրոլետարական ամբողջ գրականությունը խորհրդային գրականության մյուս բոլոր ջոկատներից:

Հարվածայինների կոչի կապակցությամբ, իմ կարծիքով, պատահական չեր, վոր վիճաբանությունների ընթացքում մեծ ուշադրություն նվիրվեց պրոֆեսիոնալացման հարցին: Ինձ թվում է, վոր այդ հարցն ել գրականության մեջ պետք է լուծվի ավելի մեծ խնդիրներ և ավելի խոր պրոբլեմներ դնելու անհրաժեշտության տեսակետից: Անհրաժեշտ է դնել մեր յերկրում մատավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը վերացնելու պրոբլեմը, մի ծան, դեպի վորը մենք արդեն գնում ենք: Մենք նկատում ենք, թե ինչպես մեր յերկրում սոցիալիզմի աճման գործընթացում և հարթվել հակադրությունը մատավոր և ֆիզիկական աշխատանքի միջև: Հարվածայինների կոչը չափազանց ցայտուն կերպով արտահայտում է այդ տենդենցը: Այժմ մեզանում 7-ժամյա բանվորական որ է: Մենք գնում ենք դեպի 6 և 5-ժամյա բանվորական որը: Այդ հարցը պատմականորեն բացահայտ է: Այդ նշանակում է, վոր մենք գնում ենք դեպի այն դրությունը, յերբ պրոֆեսիոնալացման հարցը կդրվի այլ կերպ, յերբ մեզանում իրոք կվերացվի մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը:



## ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ

Վիճաբանություններում բավական շատ չխոսվեց աշխատանքի հերոսների ցուցադրման մասին: Ցավ հատկապես հայտարարելու, վոր իմ զեկուցման մեջ չեմ ուզում շոշափել այդ հարցը, վորովհետև ուզում եմ վերջը, վիճաբանություններից հետո ամփոփել ասոցիացիաների կատարած աշխատանքների արդյունքները: Ընկերներ, պետք է անկեղծ խոստովանել, վոր ասոցիացիաներն այդ մասին շատ վատ զեկուցեցին: Ըստ եությունի, այդ տեսակետից մեզանից շատերը բավականացել են միքանի դեկլարացիաներով, միքանի լավ հայտարարություններով—և այդքան: Իսկ, ընկերներ, յերբ մենք խոսում ենք այն մասին, թե դա քննություն է պրոլետգրական շարժման համար, կատակ չենք անում: Այդ իրոք քննություն է: Ցավ յեթե մենք չկարողանանք ցույց տալ կուսակցությանը, վոր մենք—Պրոլետարական գրողների ասոցիացիաների համամիութենական միավորումը (ՎՈՒԱՊՊ)—կարող կլինենք հարվածային կերպով իրագործել այդ խնդիրները, ապա մենք վոչ մի քննություն չենք տա, այլ նման կլինենք մանչուկների, վորոնք շատ են ճչում, բայց լուրջ հանձնարարություն չեն կարող կատարել: Ցավ կարծում եմ, վոր մենք պետք է ուղղակի և լրջորեն նակազ տանք ՎՈՒԱՊՊ-ի քարտուղարությանը—յերկու դեկադրոց վոչ ուշ պարզել, թե ինչ են արել այս ուղղությամբ մեր բոլոր կազմակերպությունները, վորպեսզի ՎՈՒԱՊՊ-ի քարտուղարությունը (նոր քարտուղարությունը) այս գործում ցույց տա իրեն վորպես մեր ամբողջ պրոլետգրական շարժումը ղեկավարող կազմակերպություն, վոչ թե վորպես ժամադրավայր, այլ մեր կազմակերպության աշխատանքային շտաբ: Ցավ յերբ խոսում ենք գործարանային թեմատիկայի, աշխատանքի հերոսների ցուցադրման մասին, մենք պետք է դրա հիման վրա ապահովենք մեր ամբողջ գրականության աճումը և նրա գեղարվեստական վորակի բարձրացումը:

Յերբեմն պատահում ենք տրտնջացողների, վորոնք ասում են —եհ՛, գնում ես նկարչական պատկերահանդես, տեսնում ես միայն գործարաններ, և բոլորն ել ներկված գորշագույն, այդ արվեստ չե, այլ արվեստի մահ, և այլն, և այլն:

Այդ մարդիկ, ընկերներ, չեն հասկանում, վոր մեր խորհրդային գործարանում, սոցիալիստական տիպի ձեռնարկության մեջ նոր հասարակության այդ հիմնական բջիջում մենք հնարավորություն

թյուն ունենք ստանալու, քաղելու այնպիսի թեմատիկա, որ մենք չենք կարող գտնել խորհրդային իրականության վոչ մի ալ բնագավառում: Այս առաջին:

Ցերկրորդ, այդ մարդիկ անկարող են տեսնել, որ հենց այդ թեմաները նպաստում են մշակելու այնպիսի գեղարվեստական մեթոդ, որով մեր արվեստը սպեցիֆիկորեն պետք է տարբերվի վորևե այլ արվեստից: Այդ մարդիկ չեն տեսնում, որ թեև «ներկում են գորշագույն», բայց սովորում են, մարզվում, առաջ են գնում, և դլխավորը, արդեն թափով են գնում:

## ՈՒՂԵԿԻՑՆԵՐԻ, ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻ, ԱԼԵՔՍԵՑ ՏԱԼՍՏՈՅԻ ՄԱՍԻՆ

Սակայն դառնանք աշխատանքի հերոսների ցուցադրման հարցին: Այդ մեզ համար պարտադիր է, վոչ թե պարզապես բարի ցանկություն: Ցույց տալ աշխատանքի հերոսներին—հնչում է վորպես հրաման պրոլետարական գրողներին: Սակայն այդ պարտավորիչ է վոչ միայն պրոլետարական գրողի, այլ և ուղեկցային կադրերի համար:

Ուղեկցության պրոբլեմի վրա յես ուզում եմ հատկապես կանգ առնել, վորովհետև այդ հարցը, իմ կարծիքով, քիչ տեղ գրավեց վիճաբանություններում: Ուղեկցության մասին մեր ամբողջ շարժման մասշտաբով, քիչ խոսվեց: Ինչպե՞ս է ուղեկցության պրոբլեմը ներկայացվում:

Զեկուցման մեջ յես ասացի, որ ամենուվեխականության, նացիոնալ դեմոկրատիզմի ջախջախումը չի վերացնում ուղեկցության պրոբլեմը: Ի՞նչը պետք է ջոկել այստեղ:

Կան մեր գրողները, վորոնց անվանում ենք պրոլետարական գրողներ, վորովհետև նրանց համար պրոլետարական գրող լինելը օրգանական մի բան է, այդ նրանց մեծագույն ազատությունն է,—նրանց ազատ զարգացումը պրոլետարական զարգացումն է: Բայց կան ուղեկից գրողների այնպիսի կադրեր, վորոնք ուզում են գրել պրոլետարականորեն, ուզում են գրել· պրոլետարական հեղափոխությամբ, բայց դեռ չեն կարող, նրանց խանգարում է շատ բան: Պրոլետարական գրող լինելու ցանկությունը վոչ միշտ օրգանական ազատություն է նրանց համար: Դրա համար, պետք է գտնել այնպիսի ճանապարհ դեպի յուրաքանչյուր ուղեկից գրողը, որը հնարավորություն տա նրա պրոլետարական գրող լինելու անհրաժեշտությունը դարձնել նրա ազատությունը, այսինքն հնարավորություն տալ նրան հիմնովին վերակառուցվելու: Ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր ուղեկից գրողին մոտենալ հատուկ ձևով, լորպեսզի ոգնել նրան մեզ մոտենալու: Մենք պետք է ուղղակի խոստովանենք, որ այդ մենք անում ենք վոչ այնքան լավ, հաճախ անում ենք, անշնորհք կերպով, չենք կարողանում տեսնել այն առանձնահատուկը, որ հուզում է հենց տվյալ գրողին:

Հարց է ծագում: Ինչպե՞ս վերափոխել այդ ուղեկցային կադրերը: Այստեղ մենք ունենք յերկու ճանապարհ: Մի ճանապարհը



հանձնարարում են հաճախ նրանք, վորոնք սիրում են խոսել բարդության մասին, ասելով, թե մարդիկ բարդ են, չպետք է պրիմիտիվ մոտեցում ունենալ նրանց, թե դուք միշտ ճառում եք դասակարգային պայքարից, թողե՛ք քաղաքականությունը, ամբողջ ինտելիգենցիան մեզ մոտ է գալիս: Այս դատողությունները, իհարկե, աջ ոպորտունիստական դռեհկություններ են, վորովհետև նախ, ամբողջ ինտելիգենցիան չի գալիս մեզ մոտ, կա նաև մի ինտելիգենցիա՝ վոր հեռանում է մեզանից: Յեվ յերբ մենք խոսում ենք ուղեկիցների մասին, ամենահետաքրքրականն այն է, որ արդեն կան ուղեկիցներ, վորոնք նույնիսկ իրենք չեն հասկանում, որ դադարում են ուղեկից գրող լինելուց: Ի՞նչպես է կատարվում այդ: Այդ կատարվում է այնպես, որ որեցոր ավելի մեծ պահանջներ են ներկայացվում, և նույնիսկ ամենից «սարսափելի» քննադատները հաճախ յետ են մնում այն պահանջներից, որ մեր եպոխան դնում է գրականության առաջ: Շատ ուղեկիցներ չեն հասկանում որ հաճախ այն, ինչ յերեկ լոկ կարծիքների տարբերություն եր, այսոր դառնում է յերկու անհաշտ և թշնամական ուղղություն: Ուղեկից լինելը բնավ չի նշանակում մնալ միշտ նույն դիրքում:

Չեռքիս տակ ունեմ Պյոտր Շերյայեվի «Տալյոնի թոռը» գրքույկը: Ինձ թվում է, որ այստեղ կարելի չի արդեն ձևակերպել այդ գրքի մասին յեղած յերկու տեսակետները: Մի տեսակետն ասում է անցյալում կալվածատերերը զբաղվում եյին ձիարուծությամբ, կարողանում եյին մեծացնել ամենի՛լ ցեղի ամենարարձր վորակի ձիյեր, իսկ այժմ մեզանում ինքը գյուղացին կարողանում է այդ անել: Ասում են, թե նոր կուլտուրան իր հետ կբերի վայրենություն, կործանում և այլն: Բնավ յերբեք, տեսնո՞ւմ եք, մենք ավելի լավ ենք մեծացնում ազնվացեղ ձիյեր, քան նախկին կալվածատերը: Հետևաբար, այդ հեղափոխական գաղափար է, հեղափոխական յերկ: Սակայն այսպես խոսողները չեն հասկանում, վոր իրենք խոսում են բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մասին, վոր յեթե «Տալյոնի թոռը» գիրքը հեղափոխական յերկ է, ապա միայն այդ բառի բուրժուական-դեմոկրատական իմաստով: Կան այնպիսի ուղեկիցներ, վորոնց ճանապարհը մեզ հետ է այնչափով, վորչափով մեր հեղափոխությունն ավարտեց բուրժուական-դեմոկրատականը, իսկ այսոր մենք հակադրում ենք վոչ թե ռուսական և ամբողջի զարգացման ուղիները, այլ հակադրում ենք սոցիալիստական զարգացումը բուրժուականին, հակադրում ենք սոցիալիզմը կապիտալիզմին: Յեվ Շերյայեվի գիրքը մնաստակար է այս միակ ճիշտ տեսակետից, վորովհետև այդ գիրքն ազատում է, որ անհատ գյուղացիները կարող են ավելի լավ կազմակերպել ձիարուծության գործը, քան խոշոր կալվածատիրական տնտեսությունը: Սա ուղղակի անհեթեթություն է, վորն ավելի յե խրանում, նկատի ունենալով, որ Շերյայեվը պատկերացնում է և վոչ թե կուլակի, այլ միջակ գյուղացու և գրանով ուզում է ցույց տալ, որ միջակը կարող է այդ անել, առանց կարիք զգալու վորևե կուլակի: Սա ռեակցիոն գիրք է:

Շատ հավանական է, որ Շերյայեվը, որ այդ գիրքը գրել է

1928 թ., շատ լավ եր տրամադրված, և ինչպես ինքը կարծում է, հեղափոխականորեն: Սակայն այդ «հեղափոխությունը» բայլեվիկյան չի, դրանից ավելի շուտ եսերական հոտ է գալիս: Այստեղ նույնպես խնդիրը պահանջների փոփոխման և մեծացման մեջ չէ լոկ—շատ հաճախ ուղեկիցները նույնիսկ չեն հասկանում քննադատությունը, և այն պահանջները, վորոնցով քննադատները մոտենում են նրանց, նրանք համարում են այս կամ այն ընկերոջ անձնական կարծիքի փոփոխությունը այս կամ այն յերկի վերաբերմամբ, այն ինչ խոսքը վերաբերում է սրվող և խորացող դասակարգային պայքարի արտացոլմանը,—վոչ, Շիրյայեվի յերկը և՛ 1927 թ. և՛ 1928 թ. սխալ և վնասակար կլիներ:

Հետո կան ուղեկիցներ,—իմ կարծիքով վոչ միայն ռուսական գրականության, այլ և դաշնակից հանրապետությունների մեծամեծամասնության գրականության մեջ—վորոնք առաջադրում են այսպիսի թեորիաներ, նրանք ասում են—ի՞նչ արվեստ կարող է լինել այսոր, յերբ մեր իրականությունից ավելի բան չի կարելի հղանալ, այդ իրականությունն այնքան մեծ է, վոր վոչ մի նոր բան չես կարող հնարել և վոչինչ չի մնում արվեստի համար: Ցեվ յեթե առաջ գրողը ղեկավար եր, մտքերի իշխան, վորի շուրջը կարող եյին աճել մասսաները, ապա այժմ ինքը մասսան այնքան է աճել. վոր գրողը չի կարող առաջնորդ լինել նրան: Առաջին հայացքից թվում է, վոր այսպես դատողը կողմնակից է մեր իրականությանը, սիրում է մեր մասսաների շարժումը, սակայն իրականում այստեղ թաղնված է մի ռեակցիոն միտք, թե արվեստը մեռնում է, թե մեր յերկրում գրական ստեղծագործություն անհնար է: Շատ հաճախ այս ռեակցիոն միտքը մերկացվում է մանվածապատ ձևակերպումների թանձր քողի տակից: Մենք շատ լավ ենք հասկանում, վորտեղից են գալիս յեվ ո՞ւր են տանում այն թեորիաները, այն խոսակցությունները, թե գրողը չի կարող «առաջնորդ» լինել: Գուցե և կարիք չկա «հղանալու» կամ «հորինելու», սակայն պետք է տեսնել վոչ միայն յերեվույթների արտաքինը այլ և այն, ինչ թաղնված նրա յետևը, և նախատեսել ա՛յն, ինչ դալու յե վաղը: Տաղանդավոր մարդու համար այստեղ շատ մեծ անելիք կա, և յերբ ասում են, վոր առաջ հարկավոր եր ուսանելի գրականություն, իսկ այժմ հարկավոր չէ, սխալվում են: Մասսաների բայլեվիկյան դաստիարակման տեսակետից մեզ պետք է այնպիսի պրոլետարական գրականություն, վորը հանդես գա վորպես գաղափարական ղեկավար ընթերցողների նկատմամբ: Այդպիսի գրականության համար ենք մենք պայքարում, այդպիսի գրականություն ենք ստեղծում մենք և կստեղծենք ու գրա համար կռվենք ում դեմ ել լինի, ինչպես և այս կամ այն ուղեկցի դեմ, վոր գուցե մի առ ժամանակ գնում եր մեզ հետ հեղափոխական շարժման անցած ետապում, իսկ այսոր բաժանվում է մեզանից:

Ցես կբերեմ մի որինակ նման ուղեկցային «վերակառուցումից» ցույց տալու համար, թե ինչպես չպետք է վերակառուցվել և վորի դեմ մենք պետք է կռվենք: Ահա մի գրքույկ, վոր գրել է Խորհրդային գրողի համառուսական միության (ՎՍՍՊ) բրիգադը, «Մեծ Բալախնա» վերնագրով (վոմանք ասում են «Մեծ Բարախլո»): Բրիգադը բաղկացած եր հետևյալ գրողներից—Գլեբ Ալեքսեյև, Բոյլչակով, Բուլանցև, Ցուրի Սլյոզկին, (ծիծաղ): Լրիվ գաղափար կազմելու համար այն մասին, թե վորքան գոհհիկ և տափակ է այդ մարդկանց կատարածը, պետք նայել գրքույկի վերջը: Գրքի վերջում զետեղված են բանվորների կարծիքները այդ բրիգադի մասին: Ստացվում է ապացույցություն, վոր բալախնայի բանվորները, բնականաբար դուրս են յեկել վորպես կուլտուրական և կրթված մարդիկ, իսկ գրողները դուրս են յեկել վորպես անկուլտուրական և անկիրթ մարդիկ, վորովհետև այդ գրողները գիմել են բանվորներին, վորպեսզի նրանք կարծիք հայտնեն իրենց գործունեության մասին.—այս մեկն արդեն բավական անվայել է: Կարելի յեր գնալ գործարկում կամ բանվորական ժողով յեվ հարցնել տալ իրենց գործունեության մասին և այդպիսով ստանալ կարծիքներ, յեթե իսկապես դրանց կարիքը զգացվում եր, և վոչ թե գիմել առանձին բանվորների նման կարծիքների համար: Մոտ 15 եջ են գրավում գրողների այդ բրիգադի աշխատանքի մասին հայտնված կարծիքները: Կարծիքների ընթերցումն այնքան հետաքրքիր չէ, վորքան դրանց տպագրման փաստը, վորպես ապացույց այդ մարդկանց հավակնոտ տափակության և անսահման անապարծության, մարդկանց, վորոնք գնացել եյին գործարան «աշխատելու»:

Ցես կբերեմ մի որինակ. Բոյլչակովը գրել է մի վոտանավոր.

Семнадцать тонн дать должен дефибрер,
Машины требуют древесной массы!
Кричи и требуй этого, рабкор,
Ты выполняешь волю классa!*)

դրան հետևում են հետևյալ կոմենտարիաները. «Մենք հավանում ենք: Պատրաստ ենք ծափահարելու?»: Այս քառյակը տպված է 94-րդ եջում, նույն տողերը, այլ կերպ դասավորված, կրկնվում են ելի 115-րդ եջում, և կրկին անգամ 127-րդ եջում, նորից վորպես քառյակ: Սա ամենավարնոց տեսակի խալտուրա յե, վորը վոչ մի կապ չունի պոեզիայի հետ, վոչ մի կապ չունի արդիֆիցիալների համար մղվող պայքարի հետ, այլ հանդիսանում է ինտելիգենտական անկուլտուրականության նմուշ—իսկ ինտելիգենտական անկուլտուրականությունն անկուլտուրականության ամենավատթար տեսակներից մեկն է:

Ընկերներ, յես բերի միքանի բացատական որինակներ, բայց կան մեծ թվով ուղեկիցներ, վորոնք վերափոխվում են, վորոնք

*) Դեֆիբրերը պետք է տա տասնյոթ տոն.
Մեքենաները պահանջում են փայտանյութի զանգվածը.
Կանչի՛ր և պահանջի՛ր այդ, բանթղթակից,
Դու կատարում ես դասակարգի կամքը:

դառնում են մեր դաշնակիցները, վորոնք գնում են դեպի պրոլետարական գրական կազմակերպությունը, դեպի մեզ տանող ճանապարհով: Որինակ Նիկոլայ Տիխոնովը, որինակ Սլոմինսկին, նրա «Ֆոմա Կլեչնյովը», վորի համար Լենինգրադում այնքան անարդար կերպով հարձակվեցին նրա վրա, բայց մենք հետո կարողացանք ուղղել սխալը, որինակ Սեյֆուլինան, Շահինյանը, նրա վերջին հիանալի վեպը—«Հիդրոցենտրալը»: Սրանք մոտենում են մեզ: Կարելի յեր հիշել նաև մի շարք ուրիշ անուններ, վորոնք իսկապես գալիս են դեպի մեզ, վորոնք ուղեկիցներից դառնում են զինակից գրողներ: Որինակ, այստեղ ընկ. Դեմյան Բեդնին կշտամբեց Վերա Ինբերին, ծիծաղելով այն բանի վրա, վոր հարվածյալը գնում է դեպի Վերա Ինբերը: Ցեռ կարծում եմ, վոր ընկ. Դեմյան Բեդնին զուր կշտամբեց Վերա Ինբերին, վորովհետև անկախ նրա գրական տաղանդի գնահատականից, նա համենայն դեպս ազնիվ գրող է: Ո՞վ կարող է ասել, վոր նա հարմարվում է: Նա իրոք վերափոխվում է: Ճիշտ է, նա դեռ հեռու յե պրոլետարական գրականությունից և շատ բան մենք կարող ենք անխնա քննադատել նրա յերկերում, բայց չենք կարող ասել, վոր նա հեռանում է մեզանից: Չի կարելի նրան անվանարկել մեր ալլենումում, վորովհետև մենք այժմ խմբակներից մեկը չենք, մենք վաղուց դադարել ենք այդպիսին լինելուց, մենք պատասխանատու յենք յուրաքանչյուր գրողի համար: Հայհոյելը հեշտ է, իսկ ի՞նչ ենք արել մենք ապահովելու համար մարքսիստական լավ քննադատություն, վորպեսզի գրողին բացատրվի, թե վորտե՞ղից է գալիս նրա սխալը, ինչո՞ նա չի հասկացել, վորն անդրադարձել է նրա գեղարվեստական մեթոդի վրա, ապանել է նրա յերկի գաղարվեստականությունը: Մենք այդ շատ հաճախ չենք կարողանում անել, և չենք արել նաև Վերա Իմբերի նկատմամբ, չենք ուղարկել նրան այնտեղ, ուր նպատակահարմար է, և ուղարկել այնպիսի խմբի հետ, վորտեղ ապահովված է վոչ թե Բուդանցևի, այդ գրական ձիավորի, այլ պրոլետարական կադրերի ազդեցությունը: Մենք մինչև այժմ չենք կարողացել անել այդ գլխավորը, չենք կարողացել մեր գործունեության պրակտիկայում կտրել ուղեկիցներին բուրժուական գրողներից, չենք կարողացել ստիպել ընտրելու:

Զամյատինի և Պիլնյակի պատմությունն այնքան մեծ կարևորություն ստացավ այն բանի շնորհիվ, վոր մենք ստիպեցինք ընտրել—ում հետ եք դուք, մե՞զ, պրոլետարական գրականության, պրոլետարական հեղափոխության հետ, թե՞ Զամյատինի և Պիլնյակի: Այսպես դրինք հարցը և այդ հարցադրումը միանգամայն արդարացավ, վորովհետև միշտ ել հաստատվում է բայլշևիկյան սկզբունքայնության գծի ճշտությունը և միշտ ել տապալվում է գաղափարական կոմպրոմիսների գիծը:

Մեզ մոտեցող գրողներին մենք չարունակ պետք է ստիպենք ընտրել,—չկա վրացական, հայկական, ուկրաինական ազգային միասնական գրականություն—ընտրեցե՛ք, ո՞ւմ հետ եք դուք:



կան պրոլետարական գրողներ, և կան այնպիսի գրողներ, ինչպես Ալեքսեյ Տալստոյը, վորոշեցեք, ո՞ւմ հետ եք: Ի դեպ Ալեքսեյ Տալստոյի «Սև Վոսկի» վեպի մասին: Ցեռ կարծում եմ, վոր Ալեքսեյ Տալստոյի նման մարդիկ սխալվում են, յերբ կարծում են, թե մենք գտնվում ենք այնպիսի շրջանում, վոր ժամանակ չունենք արվեստով զբաղվելու և դեռ չենք սովորել հասկանալ արվեստը: «Սև Վոսկի»*) վեպը բուրժուական արկածախնդրական խալտուրա է, արվեստի հետ քիչ կապ ունեցող: Այնտեղ տրված է սանդարարային սյուժեն, հետաքրքրության համար ավելացված են միքանի պատմական անուններ, Դենիսով, Միլյուտով, քաղքենիների հետաքրքրությունը բավարարելու համար ցույց է տրված, ինչպես են թեյ խմում նրանք և այլն, և հետո վորոշ քանակությամբ երոտիկա, վորպեսզի կարելի լինի կրել այն «գաղափարները», վորոնք պարտադիր ատորտիմենտի կարգով Ալեքսեյ Տալստոյը գնում է իր յերկի մեջ: Դժվար չէ թխել նման յերկասիրություն, մանավանդ ունենալով Ալեքսեյ Տալստոյի գրական ձիրքը—իսկ գրական այդ մեծ ձիրքն արտահայտվում է նույնիսկ «Սև Վոսկի» վեպում: Մենք պետք է կարողանանք գրողների ամբողջ մասսայի առաջ հարց դնել. ահա՛ վասիկ Ալեքսեյ Տոլստոյը, մեծ գրող և կարող է լինել մեծ գրող, տեսե՛ք, ի՞նչ է տալիս այսոր, և խմացեք, ինչո՞ւ յե այդ տալիս, մեզ հետ միասին կռվեցեք նման գրվածքների դեմ, վորովհետև «Սև Վոսկի» վեպի նման գրվածքների թերությունների դեմ պայքարելով, մենք ուղեկիցների հետ միասին կպայքարենք գեղարվեստական վորակի համար: Ալեքսեյ Տալստոյները սիրում են ասել, վոր գալիս է նոր գրականությունը, բայց ի՞նչ է տալիս նա: Մենք դրան կարող ենք պատասխանել, ինչ ել վոր տա, համենայն դեպս ավելի լավ կլինի, քան «Սև Վոսկի» վեպը: Սակայն սա չափանիշ չէ: Ի՞նչ չափանիշ կարող է լինել «Սև Վոսկին»: Իհարկե, մենք կգրենք և արդեն գրում ենք ավելի լավ, քան գրել է Տալստոյն այդ «Սև Վոսկին»: Դա նույնիսկ համեմատության նյութ, վանողության նյութ չէ, այլ դեն նետման նյութ (ծափահարություններ): Ցերբ յես խոսում եմ «Սև Վոսկի» վեպի մասին, մատնացույց եմ անում գրողի միմիկրիան:

## ՄԵՐԿԱՑՆԵԼ, ՀԱԼԱԾԵԼ ՑԵՎ ՎՈՉՆՉԱՑՆԵԼ ԿԱՐՄԻՐ ԽԱԼՏՈՒՐԱՆ

Ցերբ մենք խոսում ենք բուրժուական գրականության դեմ պայքարելու մասին, պետք է կարողանալ տեսնել այն նոր ձևերը, վորոնց միջոցով տեղի յե ունենում պայքարը բուրժուական գրականության դեմ: Պետք է տեսնել և ժամանակին վերջ դնել հատկապես կարմիր խալտուրային: Մի թե՞, որինակ, Ուկրաինայում,

---

1) Այս իհարկե, նախնական գնահատականն է, վորովհետև վեպը դեռ չի լրացել:

Անդրկովկասում չկա կարմիր խալտուրա, մինչդեռ վիճաբանությունների ժամանակ վոչ վոք չխոսեց այդ մասին: Իսկ ի՞նչ ենք անում մենք արմատախիլ անելու համար այդ մոլախոտը, վորն աճում և մեղանում խուլ քանակությամբ: Վորտե՞ղ է եղել ցուցադրական դատ կարմիր խալտուրայի գրքերի խմբագիրների դեմ: Վորտե՞ղ ենք մենք հեռացրել այդ կարմիր խալտուրան բաց թողնող հրատարակչին: Վորտե՞ղ ենք կազմակերպել հասարակական դատ այն խմբագիրների դեմ, վորոնք տպում են խալտուրային գրված գրքեր:

Այժմ ամենքը համաձայնվում են, վոր պետք է վոչնչացնել կարմիր խալտուրան: Ցեկեք այդ մասին ավելի քիչ խոսենք, և ավելի շատ գործենք: Չե՞ վոր, մենք—պրոլետարական գրողների կազմերը—պետք է պատասխանատու լինենք, վոր բանվորական մասսայի, կոլտնտեսականների մասսայի մեջ տարածվող գրականությունը չայլասերի նրանց «թեթև ընթերցանության» նյութերով, պայքարելով դեղարվեստական վորակի և պրոլետարիատի դեղարվեստական ճաշակի ձևավորման համար: Կարմիր խալտուրայի դեմ մենք պետք է կռվենք և նրա դեմ վոտքի պետք է հանենք մասսաներին:

Ընկ. Տրոցկու յելույթն այստեղ, «Կոմսոմոլսկայա Պրավդայի» կողմից, շատ արժեքավոր եր, վորովհետև դրանով վերանում են այն խոսակցությունները, թե մեր և «Կոմսոմոլսկայա Պրավդայի» ու Կոմսոմոլի միջև ինչվոր տարաձայնություններ կան: Մեր միջև յեղել է, կլինի և պետք է չլինի ամենաիսկական, ամենասերտ մարտական դաշինք վոչ միայն այն պատճառով, վոր մենք—ՎՈԱՊՊ-ի հիմնական դեկավարությունը—դրեթե ամենքս նախկին կոմյերիտականներ ենք, վորոնք անցել են Կոմսոմոլի դպրոցը, վոչ միայն այն պատճառով, վոր կոմյերիտականները գրավում են և կգրավեն հսկայական տեղ մեր գրականության մեջ, այլև այն պատճառով, վոր Կոմսոմոլը, «Կոմսոմոլսկայա Պրավդան» ավելի քան, վորևե մեկը, կարող են պրոլետարական հասարակայնություն ստեղծել գրականության շուրջը, վորպեսզի կարմիր խալտուրայի դեմ պայքարի ընթերցողների ամբողջ մասսան, վոտքի հանել պրոլետարական հասարակայնության բոլոր խավերը՝ պայքարելու կարմիր խալտուրայի և բուրժուական ազդեցությունների բոլոր ձևերի և տեսակների դեմ գրականության ասպարեզում: Ցեմ այդ պետք է լինի մեր դաշինքի կետերից մեկը—յեկեք, վերցնենք միքանի օրինակներ ուկրաինական գրականությունից, անդրկովկասյան գրականությունից, ռուսական գրականությունից, յեկե՛ք վոտքի հանենք կոմյերիտականների ամբողջ մասսան կոմերու այնպիսի յերկերի դեմ, վորոնք խորթ են մեզ, վորոնք մեզ պետք չեն: Այդ շատ ոգտակար գործ կլինի, դրանով մենք կկիրառվենք գրականության մեջ մասսաների մասնակցության խնդիրը:



## ԸՆԹԵՐՑՈՂԻ, ԳՐԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՑԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկ. Վիդալոկը իր չափազանց ճիշտ և լավ ճառում, վոր նա այստեղ արտասանեց Համ. Պրոֆ. կենտ. Խորհրդի կողմից, դրեց թե՛ ընթերցողների և գրագարանների հետ տարվելիք աշխատանքը ել ավելի ուժեղացնելու և թե՛ հրատարակչությունների աշխատանքի վրա ել ավելի ազդեցություն ունենալու հարցը: Այդ ճիշտ է, այդ մասին պետք է խոսել, և ընկ. Խալաթովը խոսեց այդ մասին իր յելույթում: Ճշմարիտ է, ընկ. Խալաթովի գերատեսչության հետ մեր հարաբերությունները ավելի դժվար են հարթվում: Համաձայնության գալ ԳԻՍԼ-ի (Գեղարվեստական գրականության պետական հրատարակչություն) հետ ,ինչպես ասում են ընկերները, гнуное дело. այսինքն գրեթե անկարելի մի բան է, կորած գործ: Ընկ. Խալաթովն անձնապես մեծ ողնություն է ցույց տալիս, յեթե զիմեն նրան անձամբ, նա միշտ կոգնի, բայց յեթե չդիմես անձնապես ընկ. Խալաթովին, միշտ գործը խիստ դժվարանում է: Այս արտա է ընկ. Խալաթովի համար, վորովհետև նա, իմ կարծիքով, պատասխանում է ամբողջ ՈԳԻԶ-ի, իր ամբողջ ապարատի, ինչպես նաև ԳԻՍԼ-ի համար:

Ցեվ իրոք, մենք շատ ավելի մեծ ուշադրություն դարձնենք, քան դարձրել ենք մինչև այժմ, մեր հրատարակչությունների դրության և աշխատանքի վրա: Այստեղ ել այն աշխատանքը, վոր պետք է տարվի ընթերցողների, գրագարանների հետ, նրանց վերահսկողությունը հրատարակչությունների վերաբերմամբ՝ չափազանց մեծ ոգուտ կարող է տալ, և շատ ավելի ոգտավետ կլինի յեթե այդ չլինի առանձին ազգային ջոկատների—ուկրաինականի, բելոռուսականի, անդրկովկասյանի—գործը, այլ, յերբ այդ լինի մեր ամբողջ կազմակերպության ինտերնացիոնալ ներգործության ձևը:

## ԱՎԵԼԻՆ ԱՐԱԳ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՑՈՒՄԸ

Մենք շատ ենք խոսում ինտերնացիոնալ միասնականության մասին, սակայն իրականում դեռևս շատ ուժեղ և ազգային մեկուսացումը, ազգային կտրվածությունը: Որինակ, ուկրաինական գրողների բրիգադները գնում են Ուկրաինա, ռուսական բրիգադները՝ ՌՍՖՍՀ և այլն: Փոխանակ ուկրաինացիներին ուղարկելու միայն Ուկրաինա, վոր ուսումնասիրեն նրա նվաճումները, ինչո՞ւ նրանց չուղարկել Ուրալ, ինչո՞ւ ուրալցիներին չուղարկել Ուկրաինա, և այլն: Պետք է գտնել տասնյակ նոր ձևեր, վորոնք խզեն նախկին ազգային մեկուսացումը, վորոնք ցույց տան, թե մենք ազգային ջոկատների մեխանիկական միացում չենք, այլ պրոլետարական գրականության միաձույլ, ամուր, զորեղ միություն: Այդ պետք է ցույց տալ գործով, հարկավ, չծածկելով այս կամ այն ազգային ջոկատի առանձնահատկությունները, չփոքրացնելով նրանց առանձնահատուկ խնդիրների նշանակությունը:

Սակայն ինչ էլ լինի, մենք պետք է հաղթահարենք ազգային մեկուսացումը, այդ կախված է նրանից, թե արդյոք ՎՈԱՊՊ-ը կլինի՞ իրոք ամբողջ պրոլետարական գրականության ղեկավար որդանը, իրոք աշխատող որդան:

Ընկ. Ռադիանին, վորը ամենից ավելի խիստ, ուստի և ամենից ավելի ճիշտ, քննադատեց ՎՈԱՊՊ-ի աշխատանքը, ասաց, վոր ՎՈԱՊՊ-ը դեռևս չի դարձել իրոք աշխատող մի կազմակերպություն, դեռևս իրականում չի ղեկավարում բոլոր ազգային ջոկատների աշխատանքը: Հիրավի, ՎՈԱՊՊ-ին հայհոյում են միայն պլենումների ժամանակ և պլենումներից առաջ, հետո տիրում է անդորրություն, լռություն—մինչև հաջորդ պլենումը, յերբ առում են, անցյալ պլենումում վորչեցինք այս և այն անել, ելի չարինք, և դարձյալ արտասանում են ղղման հիանալի ճառեր, վորոնք յետ չեն մնում այն ղղման ճառերից, վոր այսոր արտասանում են մեր նախկին հակառակորդները, վորովհետև այժմ շատ քիչ են այնպիսի հակառակորդներ, վորոնք այսոր չերդվեն ՎՈԱՊՊ-ի դլխավոր դծով: Ցեռ պետք է հատկապես զգուշացնեմ այդ ալելույշչիկների դեմ. շատ վտանգավոր է այն թշնամին, վոր գուլեր փոխած այսոր ման է գալիս ալելույշչիկի նշանագգեստով (ծափահարություններ): Ցեռ գիտեմ չափազանց մեծ թվով ընկերների, վորոնք «Լիտֆրոնտի» հետ յեղած դիսկուսիայի շրջանում համակրում եյին «Լիտֆրոնտին», իսկ այսոր տրամադիր են մեղադրել նույնիսկ ՌԱՊՊ-ին, վոր նա զրեթե հաշտվողական վերաբերմունք ունի դեպի «Լիտֆրոնտը», կան այնպիսի ընկերներ, վորոնք պաշտպանում եյին պերևերզևականությունը, իսկ այսոր գլուխը բարձր հայտարարում են, թե մենք այս և այն սխալն ենք գործել պերևերզևականության դեմ պայքարելիս: Պետք է ընդգծել, վոր յերբ մենք խոսում ենք կոնսոլիդացիայի մասին, նկատի ունենք սկզբունքային կոնսոլիդացիա, կոնսոլիդացիա այնպիսի մարդկանց հետ, վորոնք սկզբունքի տեր են, վորոնք ունեն վորոշ սկզբունքային դիծ:

## ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ — ԱՌԱՋԽԱԳԱՅՈՒՆ ԶԵՆՔ

Այս կապակցությամբ պետք է խոսել ինքնաքննադատության մասին, այդ տրմիվ շատ խոսվեց վիճաբանությունների ժամանակ: Կարելի յե բերել հսկա քանակությամբ բարի ցանկություններ—ինքնաքննադատության վերաբերմամբ, սակայն գործնականում շատ ավելի դժվար է իրագործել այդ: Նախ պետք է իրագործել այդ, ինչպես վայել է բայշևիկյան կազմակերպության: Պետք է իրագործել այնպիսի ինքնաքննադատություն, վոր չլինի ինքնանպատակ ցիտատափոխանակություն, այլ գաղափարական ինքնաքննադատություն, վորը մեզ բարձրացնի ավելի բարձր մակարդակի վրա. Ցեռ կարծում եմ, վոր յերբ խոսում են ինքնաքննադատության մասին, այդ նշանակում է յերեսը դարձնել դեպի առաջ, դեպի մեր շարժման նոր խնդիրները, և վոչ թե միայն յերեսը շուռ տալ դեպի յետ և քրքրել հին նյութերը: Պետք է նայել առաջ, վորպեսզի անցյալը պարզվի, լուսաբանվի նրա խմբագրությունը: Կադրերը պետք է ստուգել վոչ թե նրանով, թե արդյոք կարող են նրանք ցիտատներ դանել, այլ նրանով, թե ինչպես են դնում նոր հարցերը, ինչպես է անդրադառնում նրանց՝ անցյալի ըմբռնումը, նրանց անցյալ դիծը նոր պրոբլեմների լուծման վրա: Մեզ պետք չի այնպիսի մարդկանց կոնսոլիդացիա, վորոնք յերախտիքներ ունեն միայն անցյալում,—այդ լավ է, բայց գլխավորը չե,—մեզ պետք է այնպիսի մարդկանց կոնսոլիդացիա, վորոնք նոր պայմաններում, նոր եպոխայում կարող են լինել վառապարներ, և մենք մեր կադրերը պետք է ստուգենք հենց այս կերպ: Բավական չե, վոր դու անցյալում յեղել ես ՎՈԱՊՊ-ի, ՌԱՊՊ-ի քարտուղար և այլն,—այդ բոլորը—լավ, սակայն մեզանում նոր ետապ է, մեր առջև նոր խնդիրներ են, և մենք պետք է այնպես վերակառուցենք մեր շարքերը, վոր յերեկը լինի այսորվա նախապատրաստություն, այսորը—վաղվա և այլն, և այլն:

Դրանով մենք անպայման պետք է ստուգենք մեր կադրերը, և այդ տեսակետից ՎՈԱՊՊ-ի պլենումը մի դպրոց յեղավ մեզ ամենքիս համար, վորովհետև այնտեղ մենք առաջին անդամը տեսանք մեր ամբողջ կազմակերպության այնպիսի միասնականություն, ինքնաքննադատության լայն ծավալման անհրաժեշտության այնպիսի ըմբռնում, վորը ուսուցանում է մեզ բայշևիկորեն աշխատել գրականության բնագավառում:

## ՀԱՆՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾԻ

Ամփոփելով վիճաբանությունների արդյունքները և վերջացնելով իմ յեզրափակման խոսքը, յես պետք է կրկնեմ, վոր հիմնական չեշտը ինքնագոհության չեշտ չեր, այլ ահազանգի: Այդ ել պետք է լինի մեր աշխատանքի հիմնական չեշտը, մեր գրողների տրամադրության հիմնական չեշտը, վորովհետև իրոք գրությունն այնպես է, վոր մեր գրականությունը դեռևս հետ է մնում, և մենք պետք է լարենք մեր բոլոր ուժերը և աշխատենք շատ ավելի համառ, վորպեսզի գլուխ բերենք մեր առաջ դրված խնդիրները:

Ցեռ կարծում եմ, վոր մենք մեր պլենումի աշխատանքի արդյունքները պետք է դումարենք մի ռեզոլյուցիայով կենտրոնական Կոմիտեին, ընկ. Ստալինին, մի ռեզոլյուցիա, վորով պրոլետարական գրականությունը հավաստիացնում է, թե պրոլետարական գրողների կադրերը հաստատ գիտեն, վոր — կուսակցության զբաղավոր դծի համար մղված անհաչտ պայքարի հիման վրա միայն, 100 տոկոսային ամբողջությամբ բայշևիկներ լինելով միայն մենք կարողանանք հասցնել մեր պրոլետարական գրականությունը մինչև հեգեմոնիա և ստեղծել մեր բայշևիկյան ժամանակին արժանի գրականություն (յերկարատև ծափահարություններ):





ՀՍՍՌ-Արմ ՍՍՀ

«Ազգային գրադարան»
NL0167986

ԳԻՆԸ 60 ԿՈՊ. (7 մ.)



Л. АВЕРБАХ

# ЗА ГЕГЕМОНИЮ ПРОЛЕТАРСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Госиздат СССР Армения
Эривань — 1931